

ԼՄԻՍԻՆ



ՌԻՆԴ

ԺԱ. ՏԱՌԻ

ԵՂԵԿԿԵՆԲԵՐ

ՇԱՐԻԱՅԻՆ

ՊԱՃՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԱՐԻԱՆՈՒ

XII

1954

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Միֆայել Նալբանդյան	3
Մ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ.— Միֆայել Նալբանդյան	6
ՂԵՎՈՆԻ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԱԹԱՆԱՍՅԱՆ.— Իմ հանդիպումը Միֆայել Նալբանդյանի հետ Երևանում	18
Միֆայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյա հոբելյանը	20
ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ.— Մեսրոպ Մաշտոց	27
ՊՐՈՖ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ.— Լուսնի տեսանկյունի շարժումը	35
ՊԱՐԳԵՎ ԱԲԵՂԱ ԳԵՈՐԳՅԱՆ.— Հովսեփ արհեստագործական Արղուրյանը և հայ ապագրության գործը Ռուսաստանում 18-րդ դարում	39
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ	46
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	47
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՓՈՍ ՊԱՆՃՅԱՆ.— Թուրքահայ գաղութը այսօր	50
Երաժշտագետ Արամ Պատմադրյանի զգայացունց մեկ հայտնությունը	
Քեմբրիջի արևելագետներու միջազգային համաժողովին մեջ	58
Արգենտինահայ եամականի	58
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1954 թվականի ընթացքում տպագրված նյութերի	60



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՏՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“

Redaction of the magazine „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ


ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Մ Ի Ք Ա Յ Ե Լ Ն Ա Լ Բ Ա Ն Դ Ե Ա Ն

(ՄՆՆԴՑԱՆ 125-ԱՄՏԱԿԻ ԱՌԹԻՎ)



այս Հայրենիքում, 1954 թվականի նոյեմբերի 25-ին, հայ հասարակությունը, սովետական մտավորականությունն ու մամուլը, մեծ հանդիսությամբ և խորք երախտագիտությամբ նշեցին հայ ժողովրդի մեծատաղանդ գավակ, նրա ազատության ու լուսավորության համար մղված պայքարի անձնուրաց մարտիկ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակը:

Հայ ժողովրդի հետ Միքայել Նալբանդյանի հորեկյանը լայնորեն նշեցին նաև մեծ Հայրենիքի՝ Սովետական Միության բոլոր ժողովուրդները, որոնց համար նույնպես քանկազին ու նվիրական էր Նալբանդյանի անունն ու հերոսական կյանքը, որը նվիրվել է ժողովուրդների ազատությանն ու եղբայրությանը, ազգերի հավասարությանն ու բարեկամությանը, նրանց լուսավոր ապագայի վեճ իդեալներին ու ձգտումներին:

Նալբանդյանը, դուրս գալով հայ իրականության սանձաններից, դարձել է միջազգային առումով ազատության, ճշմարտության հաշմարտիկ, և երբեք պատահականություն չէր այն հանգամանքը, որ Նալբանդյանի ծննդյան 125-ամյակը վերածվեց ճամփողովրդական հարգանքի և սիրո սրտառույց ցնծատոնի:

Հսկայական է Նալբանդյանի դերն ու նշանակությունը հայ հասարակական մտքի և գրականության հետագա զարգացման գործում: Նալբանդյանի անունն ու հիշատակը շատ քանկազին ու նվիրական են յուրաքանչյուր հայրենասեր հայ մարդու համար՝ ժողովրդի լուսավորության, ազատության համար մղված հերոսական ու անձնվեր պայ-

քարով: Նա իր ողջ գիտակցական ու պայծառ կյանքը, առանց մեացողի, նվիրեց հայ ժողովրդի ազատության գործին, նրա արդար դատին:

Նալբանդյանի կյանքն ու բազմամյա ստեղծագործությունը բացառիկ տեղ են գրավում հայ ժողովրդի պատմության մեջ: Ուսանելի և մոնումենտալ է այդ կյանքը իր ամբողջության ու սրտակեղև ողբերգության մեջ: Նալբանդյանը, հաճուն իր զաղափարների, սկզբունքների, առանց տատանվելու անցավ հալածանքներով ու կախաղանով լի ազատության զինվորի փշոտ ուղին և ընկավ այդ օղու վրա հերոսի մահով, անմահ հիշատակ թողնելով իր ժողովրդի սրտում:

Դաղափարական սկզբունքայնությունն ու հետևողականությունը, նպատակասլացությունը, կամքի անխորտակելի, անընկճելի ուժը հատկանշում են Նալբանդյանի հերոսական կերպարը: Մանկության օրերից մինչև իր եղբերական մահը ամբողջությամբ, նա չի դավաճանել երբեք իր ժողովրդի առաջ ունեցած պարտի և ծառայության սկզբունքներին, չի նահանջել դժվարությունների առաջ:

Իրեն մարդ ու հասարակական գործիչ, որպես բանաստեղծ ու հրապարակախոս, որպես փիլիսոփա ու գեղագետ, հայրենասեր ու բաղաձայն, մի ասկեռնույլ ամբողջություն էր Նալբանդյանը: Ջերմ էին նրա խոսքերը, որովհետև բխում էին նրա սեփական համոզմունքներից, պայծառ էին նրա մտերն ու գաղափարները, օրովհետև ժողովրդական ապրանքների հրակներից էին բխում ու սնվում: Ինչ քարոզել է նա խոսքով, իրականացրել է իր գործով:

Նալբանդյանը 19-րդ դարի հայ ժողովրդի պատմության ամենահետադիմ և արժեքավոր դիմապատկերն է: Նա ինքնատիպ է որպես մտածող ու գործիչ, ինքնատիպ է իր հերոսական կյանքով ու եղբայրական մահով, ինքնատիպ է իր անձնուրաց պայքարով, հայրենանվեր ու ժողովրդանվեր ծառայությամբ, ինքնատիպ՝ իր գործունեության լայն ասպարեզով: Անա թե ինչո՞ւ՝ Նալբանդյանի ամեն մի բառը պատգամ ու սրբություն էր ոչ միայն ժամանակակիցների, այլ նաև հետագա հայ սերունդների համար, որովհետև նա նոր խոսք էր բերում հայ ժողովրդին՝ ազատության, հըմարտության նոր խոսքը: Նալբանդյանը բացառիկ մեծություն էր և մեր ազգային-հասարակական, մշակութային անկրկնելի արժեքներից մեկը, որպես «հրաբորբ որապարակախոս, անձնուրաց հայրենասեր, գաղափարի անմահացած գոհ...»:

Մեծ է արդարև Նալբանդյանի դերը 19-րդ դարի հայ հրապարակախոսության, գեղարվեստական գրականության, գրական բնագրատության, փիլիսոփայության և տնտեսագիտության բնագավառներում: Իր գործունեության բոլոր մարզերում Նալբանդյանը դրսևորել է իր մեծ հմտությունը, բազմակողմանի զարգացումը: Շարունակելով և խորացնելով Արսլանի ազգային, մշակութային ավանդները, Նալբանդյանը հայ ժողովրդի մտավոր զարգացումը առաջ է մղել՝ հարստացնելով այն ճյուղականների ուսու լուսաբանող մշակույթի և հասարակական մտքի նվաճումներով:

Անցյալ դարի 50—60 թվականներին, հայ ազգային-հասարակական կյանքի մեջ կենտրոնական տեղ էին գրավում հայոց գրական-ազգային լեզվի խնդիրները: Այդ գրապահարում Նալբանդյանը կանգնում է աշխարհաբարի պաշտպանության դիրքերում՝ ելնելով գրականության ու լեզվի ժողովրդայնության սկզբունքից. «Մեք նշմարիտ ու անխաղախ սիրով սիրելով մեր ազգը, ցույց տվեցինք, որ ազգային մատենագրությունը պիտու է լիներ նոր և կենդանի խոսքով»: Լեզվի ժողովրդայնություն և հասկանալիություն — անա թե ինչի էր ձգտում Նալբանդյանը: Լեզուն համարելով մարդկանց միջև հաղորդակցության միջոց և որպես ազգության դրոշակ, Նալբանդյանը մտահոգված էր այն բանով, որ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ շնորհիվ հասներ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ցանկալի արդյունքներին: Նալբանդյանը հայ ժողովրդի համար պահանջում էր ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՐԿԱԿԱՆ ՄԵԿ ԼԵԶՈՒ: «Այսօր անմիտելի է, որ առանց ընդհանուր միության լեզվի, ունայն է երազել հասարակաց առաջ գնալը», — գրում է նա: Նալբանդյանը հայ երկու գրական լեզուների առկա-

յությունը «խանգարիչ» երևույթ էր համարում հայ գրականության և լեզվի զարգացման համար, և իրեն լեզվաշինարար, գտնում էր, որ գրական այդ երկու լեզուները «կարող էին մոտենալ միմյանց» և «եննաբավոր է հաշտեցնել աշխարհաբարի այդ երկու կարևոր հյուսվերք»:

Նալբանդյանի գրական-գեղարվեստական ստեղծագործությունը հանդիսացավ այն հիմնադրերից մեկը, որի վրա հետագայում զարգացավ և բարձրացավ հայ ժողովրդի մշակույթը: Նալբանդյանի ողջ ստեղծագործությունը, որպես հայ ժողովրդի հույզերի, իղձերի, մտքերի արտահայտություն, մտել է հայ ժողովրդի մշակույթի ոսկյա ֆոնդը:

Մեծ ու խոր է եղել Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը հայ գրականության հետագա զարգացման վրա: Նա հայ գրականության համար նշեց միակ ճիշտ ուղին՝ ռեալիստական ուղին: Դեռ նրա կենդանության օրով գրական ասպարեզ է իջնում Ղազարոս Աղայանը: Նալբանդյանի բնագրատական ռեալիստական տրադիցիաները իրենց լավագույն ստեղծագործություններում շարունակում են Հակոբ Պարոնյանը, Պերե Պոռյանը, Գաբրիել Սունդուկյանը, Ալեքսանդր Մատուրյանը, Հովհաննես Թումանյանը, Հակոբ Հակոբյանը: Եվ երբեք պատահականություն չի կարելի համարել այն, որ Բաժիկին 1887 թվականին «անմահ Նալբանդյանցի միջոց օրհնելալ հիշատակին» է նվիրում «խորին մեծարանքով» իր «աշխատությանց երախայրին»՝ «Վալբա» վեպը. «Քանի կա և կապրի հայոց լեզուն և գրականություն, Մ. Նալբանդյանի անմահ հիշատակը միշտ կունենա յուր զգալի համակրությունը ամեն մի հայի սրտում մինչև դարերի վերջը»: Մի դար է անա, ինչ Նալբանդյանը իշխում է հայ սերունդների մտքի և զգացմունքի վրա, և «ընդմիջտ հավերժացել է հայոց գրականության համաստեղության մեջ ու դարձել նրա ամենավառ, ամենապայծառ աստղերից միեր» (Թումանյան):

Հայ գրականության մեջ, Արսլանից հետո, հետագա շատ սերունդների համար Նալբանդյանը եղավ հայ և ուս ժողովուրդների հավիտենական բարեկամությունը կոդոններից մեկը: Նալբանդյանի մեծությունն ու պաշտմական ծառայությունը այն էր, որ նա շատ բարձր գնահատեց ուս ժողովրդի անշահախնդիր բարեկամությունը, ուս առաջավոր մշակույթի ազդեցությունը հայ ժողովրդի ազգային զարթոնքի գործում, և «իմաստուն պայծառատեսությամբ ըմբռնեց, որ հայ ժողովրդի ազատությունը, բարգավառուր ուս ժողովրդի ազատության մի մասն է, որը և՛ պատմականորեն և՛ տրամաբանորեն կապված է Ռուսաստանի հետ»:

Նալրանդյանը, ինչպես քուր փոքր ժողովուրդների, այդ քվում նաև հայ ժողովրդի ազատագրության երաշխիքը տեսավ ազատ Ռուսաստանի մեջ. «Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության վերաբերմամբ մեծ խորհուրդ ունի», — գրում է նա:

Մեծ էր Նալրանդյանը որպես հայ ժողովրդի հայրենասիրական վեճ ձգտումների, նրա ազատատենչ և լուսաբարձա հոգու երգիչ: Նալրանդյանը, «գրչով ու խոսքով», պաշտպանել է հայ ժողովրդի ազգային շահերը, պայքարել է նրա էությունության համար: Դրանում էր նա տեսնում իր պայքարի և ստեղծագործության կենսական աղբյուրը: Բայց թագի վիճակը ծանրացել է նրա սրտին՝ և նրա բնույթը հեշտում է զայազին ու վշտահալ: Հայրենասեր բանաստեղծը իր կոչումը տեսնում է խավարի, ագիտության, բռնակալության, հայ կյանքում գոյություն ունեցող խորք երևույթների դեմ պայքարելու մեջ, ժողովրդի ազատության և լուսավորության մեծ գործին ծառայելու մեջ: «Ազգությունը է՝ ազգի անձնավորությունը, ազգի դեմքը, և այդ անձնավորությունը ապրում է բաբոյապես ինքնուրույնաբար, ունի յուր սեփական կյանքը, յուր լեզուն, յուր սովորույթը, յուր ավանդությունը»: Ազգության մեծ հրապարակախոս Նալրանդյանը իր ողջ կյանքում ջատագով է հանդիսացել ազգությունների համերաշխության, ազգերի ինքնահավասարության, և կարեկցանք արտահայտելով բոլոր հեշտված ազգերին, իր ցասումնալից ձայնով է բարձրացրել, պանհելենով հանաչել ժամենայն ազգությունն, փաղափայկված արիությամբ հայտարարելով. «Ա՜յ մի ազգություն իրավունք չունի կուլ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգություն, բայց այս բանը ստեպ կրկնվում է մարդկության պատմության մեջ»:

Նալրանդյանի մեծությունն էլ հենց այն է, որ նա իր ամբողջ կյանքը նվիրաբերեց ժողովրդին սոցիալական, ազգային, փաղափայկված հեշտումներից ազատագրելու, նրա կյանքը արմատապես քարվաճիկու նպատակին: Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դիրքից, նա սուր բնեղատության է երթարկել Կաթոլիկ եկեղեցու եկանոդական փաղափայկությունը՝ ցույց տալով Հայ եկեղեցու խորհուրդը հայ ազգի եկատմամբ: Ըստ Նալրանդյանի՝ Հայ եկեղեցին մինչև այսօր պահել է իր ազգային եկարագիրը, ինքնուրույնությունն ու անկախությունը:

հարկ է, որ նա շարունակի մնալ այնպիսին, հեղի մնալով հունական, հռոմեական և այլ եկեղեցիներից, որովհետև ազգության զաղափարը դարձել է եկեղեցին. ով ձեռք կբարձրացնի եկեղեցու վրա, ապա ուրեմն նա ձեռք կբարձրացնի ազգության վրա: «Եսկ ի՞նչ է պապականության խորհուրդը», — հարց է տալիս Նալրանդյանը. այն, որ «կրոնի և կրոնապաշտության գիմակի տակ», Հոռմի պապերը «տիեզերական փաղափայկված իրավասության» ձգտելով, «կրակով ու սրով կապեցին մարդկության բերանը, նորա բանականության ազատ հոսանքը... ոչինչ էր պապականության աչքում մարդերի կորուստը... հոգա արյունով ոռոգում էր նա և անեցնում էր կույր հնագանդության ձիւր պապական մարդերի հոգու մեջ: Պապերի փաղափայկանությունը պահանջում էր արյուն, մահ, հուր և սուր...: Քրիստոս ինքը մեռավ ազգերի փրկության համար, ՊԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՉԳԵՐ ԶԵՍԱՌՈՒՑ յուր ապամոլության համար և դեռևս պաշտպան քրիստոնեության հրատարակելով յուր անձն» (ընդգծումը մերն է. — ԽՄԲ.):

Նալրանդյանը ջերմ պաշտպան էր հայ ժողովրդի ազգային-կրոնական միության. «Մեք ամենայն հոգով ցանկանում էինք մեր ազգի կրոնական միությունը, ուստի և գրկաբաց ողջունելու եեն մի մարդու, որ փախչելով օտար դալակի գրկից վազեր դեպի յուր ծնող բուն Հայկական եկեղեցին»:


Նալրանդյանը փչ տարեց. նրա կյանքի թեր խզվեց վաղածավ, բայց նա բողեց փառավոր ու պայծառ հիշատակ: Ուրախ մեծ է ու ծանրակշիռ՝ նրա ստեղծագործության, գործունեության եղանակությունը:

Մի ամբողջ հարյուրամյակ քաժանում է մեզ Նալրանդյանից. բայց նա չի հնացել, այլ բարձրացել է ու հասել մեր պայծառ ժամանակին ու ժամանակի վրայով կգնա դեպի հավերժություն:

Անա՛ ժամանակի մշուշից, անցյալից, մեր աչքերի առաջ հառնում է Միքայել Նալրանդյանը իր ամբողջ գեղեցկությամբ, հերոսական կյանքի ամբողջ գրավչությամբ, լեհեղատությամբ, ժողովրդին ու Հայրենիքին ծառայելու վեճ ձգտումներով և սրտառուչ պառաճաստակամությամբ:

Ազատության, հշմարտության անվեներ ու անձնուրաց զինվոր Միքայել Նալրանդյանի լուսապայծառ կերպարը միշտ վառ կմնա հայ ժողովրդի երախտագետ սրտում:





Մ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մ Ի Փ Ա Յ Ե Լ Ն Ա Լ Բ Ա Ն Դ Յ Ա Ն

(Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Բ Յ Ո Ւ Ն)



այ ժողովրդի համար թանկագին ու նվիրական է Միքայել Նալբանդյանի անունը: Նա իր ողջ հերոսական ու դիտակցական կյանքը նվիրել է հայ ժողովրդի ազատության և լուսավորության գործին: Մեծ հրապարակախոսի, քոցաշունչ բանաստեղծի և տաղանդավոր փիլիսոփայի կյանքն ու ստեղծագործությունը բացառիկ վարկեր տեղ ունեն հայ ժողովրդի պատմության մեջ: Նալբանդյանն առանց տատանվելու անցավ հալածանքներով ու հետապնդումներով, արյունով և կախազանով լի ազատության զինվորի փշոտ ուղին, ընկավ այդ ուղով՝ հերոսական մահով՝ անմահ հիշատակ թողնելով իր ժողովրդի սրտում: Նալբանդյանի հերոսական կյանքն ու գործունեությունը իրոք լանջաճառ, նրա առաջադրած զաղափարները ուսանելի եղան եկող հայ սերունդների համար, ներշնչելով նրանց աղնով մտքեր՝ հանուն երջանիկ ապագայի պայքարելու բռնակալության, աղքատության ու խավարի դեմ:

1829 թվականի նոյեմբերի 2-ին, Նոր-Նախիջևանի ծալրամասային փողոցներից մեկում, մի խղճով տան մեջ է ծնվել Միքայել Նալբանդյանը: Նրա հայրը՝ Ղազար Գրիգորի Նալբանդյանը, մամուլագիտությամբ պայտար է եղել: (Նալբանդյանները մի քանի սերունդ պարապել են այդ արհեստով և կոչվել են ժուստաններ: Իրենց արհեստի անունն է, որ նրանք թարգմանել են ճնալբանդա բառով և դարձրել իրենց ազգանունը: Հայտնի է, որ Նալբանդյանն իր առաջին նամակներն ու թղթերը ստորագրել է Ուստայան, Դարբինյան և ապա՝ Նալբանդյան):

Ուսումնասեր արհեստավոր ուստա Ղազարը իր որդուն՝ մանուկ Միքայելին առաջին անգամ 8 տարեկան հասակում ուղարկում է սովորելու Ս. Թորոս եկեղեցու տիրացու Օգսենտի (Եղիշի) ղեկավարությամբ: Մարմնով փոխտ, բայց ժիր և ուսումնասեր մանուկ Միքայելը, իր քաջադիմ ընդունակությունների շնորհիվ, շատ շուտ հասնում է տարեց աշակերտներին և, ավարտելով դասընթացը, տեղափոխվում Գաբրիել քահանա Պատկանյանի (Մուփայել Պատկանյանի հոր) մասնավոր դպրոցը: Տեր Գաբրիելը, տեսնելով իր նոր աշակերտի ընդունակությունը, արթնամտությունն ու խիզախ քննվողությունը, սիրում է նրան իր ամբողջ ջերմությամբ, ձրիաբար առանձինն պարապում նրա հետ: Պետք է ասել, որ Գաբրիել քահանա Պատկանյանի դպրոցը իր ժամանակի փավակա բարեկարգ դպրոցներից մեկն է եղել, ուր դասավանդվել են հայոց պատմություն, մայրենի լեզու, աշխարհագրություն, քերականություն, ճարտասանություն, Սուրբ Գրքից համառոտ մեկնություն, Աստվածաշնչի պատմություն, հայերեն պարզագրություն (գեղագրություն) և այլն: Ահա այդ դպրոցումն է, որ Նալբանդյանը առանում է իր սկզբնական կրթությունը: Նալբանդյանի նկատմամբ Տ. Գաբրիելի տածած մասնավոր հոգացողությունը անհետևանք չի մնում. ուշիմ պատանին դառնում է դպրոցի գերազանցիկ աշակերտը: Նալբանդյանը միաժամանակ իր գիտելիքների պաշարը հարստացնում է ինքնազարգացման ճանապարհով, ընթերցանությամբ:

1845 թվականի հոկտեմբեր ամսին Մոսկվայից Նոր-Նախիջևան է գալիս նորընտիր

կաթողիկոս Ներսես Ե. Աշտարակեցիին և երկու ամսի շափ մնում ալնտեղ, Հոկտեմբեր ամսին կաթողիկոսի հրամանով փակվում է Տ. Գարրիելի դպրոցը: Տ. Գարրիելը 1846 թվականի հունվարի 13-ին հեռանում է Թիֆլիս: Նալբանդյանը գրկվում է իր սիրելի ուսուցչից և հովանավորից, որի հետ սակայն միշտ գրագրության մեջ է մնում: Ինչպես Նալբանդյանն է գրում, ինքը մնաց ռորը ամենևին ի րարեկամացա: Նոր-Նախիջևանում Տ. Գարրիելի փոխարեն կաթողիկոսը ուսուցիչ է կարգում կաթոլիկ Մկրտիչ Եկենյանին: Պատանի Նալբանդյանը միայն մի քանի տեղամ հաճախելով Եկենյանի դասերին, վերահասու է լինում նոր վարժապետի մտքի սահմանափակության ու գիտելիքների ողորմելիությանը: Երևանի Եկենյանի դպրոցը հաճախողների մեջ դժգոհություն է առաջանում ուսուցչի մասին, թե նա ոչինչ չի սովորեցնում, և դժգոհ աշակերտները դադարում են նրա դպրոցը հաճախելուց: Դժգոհների թվումն էր նաև Նալբանդյանը, որը դասերի ժամանակ Եկենյանի սխալները հայտնաբերելով խայտառակում է նրան, բացահայտելով նրա տգիտությունը հատկապես աշխարհագրության և պատմության դասերին: Կաթողիկոսն իմանալով Նալբանդյանի հանդեպության մասին, որ նա հրաժարվել է Եկենյանի դպրոցը հաճախելուց, հրամայում է քննել խիզախ պատանու գիտելիքները: Ժամանակակիցների վկայությամբ, հրապարակային քննությունը վեր է ածվում մրցության՝ ուշիմ աշակերտի և համրակ վարժապետի միջև: Նալբանդյանը, մանավանդ իր գրաբարի իմացությամբ, խելացի պատասխաններով դարձանում է բոլորին: Ըստ էության, դա պատանի Նալբանդյանի առաջին բախումն էր հայրենի քաղաքի ազանների և տգետ հոգաբարձուների հետ:

Նալբանդյանը, տնտեսական ծանր պայմաններին ստիպված, 1848 թվականի հուլիսի 17-ին աշխատանքի է մտնում Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդարանում՝ քարտուղարի պաշտոնով:

Այն ժամանակ Նոր-Նախիջևանում ազդային-հասարակական գործերը այնքան էլ համերաշխ չէին ընթանում: Աղաներից ամենուսեղեցիկը՝ Հարություն Խալիբյանը, իր համախոհների հետ շարաշահելով իրենց դիրքը, լուրացրել էին քաղաքի լավագույն հողերին ու Դոնի նավամատուցները: Հայրապետյան խմբակցությունը, հանուն ժողովրդի շահերի, դիմադրում էր պաշարը Խալիբյանների պեմ: Պատանի Նալբանդյանը եռանդուն միջամտում էր այդ հասարակական գործերին, լուրջ անհանգստություն և մտահոգություն պատճառելով Խալիբյաններին: Ակավել էր Խալիբյան-Նալբանդյան մենամարտը: Ներ-

քին գործող միևնույնության և Ներսես կաթողիկոսի անձնական միջամտության վրա հիմնված, ազա Խալիբյանը կատաղի հալածանք է սկսում Նալբանդյանի դեմ:

Աշտարակեցու անսիրելիությունը Նալբանդյանի դեմ սկսվել էր 1846 թվականից, երբ Նոր-Նախիջևանի տիրացուներից մեկը, էջմիածնում եղած ժամանակ, Նալբանդյանից իր ստացած երկու նամակները, որոնք վերաբերիչ արտահայտություններ էին պարունակում Ներսես կաթողիկոսի անձի նկատմամբ, հանձնում է կաթողիկոսին: Աշտարակեցին դրանց կրկնօրինակներն ուղարկում է Խալիբյանին՝ պատվիրելով այդ մասին քննություն կատարել: Խալիբյանն ես զրպարտում է Նալբանդյանին: Զայրացած կաթողիկոսը, հատուկ կոնցակով, Սինդոսի անունից պահանջում է Նալբանդյանին ձերբակալել և ուղարկել էջմիածին՝ «հոգևոր դատաստանի ենթարկելու: Այս հրամանը գրեթե մի տարի անկատար է մնում: Կաթողիկոսի զաղանգարով դիմում է գրվում իշխանության՝ ձերբակալելու «սպաստամբ» Նալբանդյանին՝ իր հակաօրինական գործերի համար: Նալբանդյանը, իմանալով իր շուրջը պատվող վտանգի մասին, ազատվելով ոստիկանության հետապնդումից, որոշում է կայացնում Մոսկվա մեկնելու համար: 1853 թվականի հուլիսի 6-ին Նալբանդյանը ապառվում է հոգևոր կոչումից, նա հուլիսի 11-ին թողնում է Քիշինյե և մեկնում Մոսկվա: Մոսկվայում և Պետերբուրգում լինելը, այնտեղ ուսանելն ու գործելը Նալբանդյանի մաղուցվա երազն էր, և նա հասնում է իր նպատակին:

1853 թվականի հուլիսի 14-ին Նալբանդյանը հասնում է Մոսկվա՝ իր ուսուցիչ Գաբրիել քահանա Պատկանյանի և Մատթեոս արքեպիսկոպոս Վեհապետյանի հանձնարարականներով և ներկայանում Ստեփան Նազարյանցին և Լազար Լազարյանցին: Լազարյանցը (որը Նալբանդյանին ներկայացրել է որպես իր քրոջ որդուն), հաշվի առնելով այն, որ Նալբանդյանը լիակատար կերպով գիտե հայ գրականությունը, լավ ընդունակություններ ունի և ղեկավարեց բարոյականության տեղ է, 1853 թվականի օգոստոսի 3-ին կարգադրություն է անում Լազարյան ճեմարանի վերատեսչությունը՝ Նալբանդյանին հայոց լեզվի ուսուցչի պաշտոնում ընդունելու վերաբերյալ:

Նույն օրը Ս. Նազարյանի խորհրդով, Նալբանդյանը մեկնում է Պետերբուրգ և համարաբանում քննություն տալիս՝ հայոց լեզվի ուսուցչի իրավունք ստանալու համար: Մեկտեմբերի 24-ին համապատասխան առարկաներից հաջող հանձնում է քննությունները: Մեկտեմբերի 30-ին քննական հանձնա-

ժողովրդ արժանի է համարում նրան շնորհելու հայոց լեզվի ուսուցչի կոչում: Հոկտեմբերին, քննություններն ավարտելուց և համապատասխան վկայական ստանալուց հետո, Նալբանդյանը վերադառնում է Մոսկվա և լազարյան ճեմարանում ստանձնում 1-ին և 2-րդ դասարանների հայոց լեզվի ուսուցչի պաշտոն: Նրա աշակերտներից մեկը հետագայում իր հուշերում գրում է. «Նա երկրորդ դասարանի աշակերտ էի, երբ ճեմարանի առաջին երեք դասարանի հայոց լեզվի ուսուցիչ Հովհաննիսյանը թողնց յուր պաշտոնը և յուր տարածվեցավ, թե այդ պաշտոնին նշանակվել է Նախիջևանցի Ս. Նալբանդյանը: Մենք օրեցօր սպասում էինք նրան, որովհետև նոր ուսուցիչը դեռ Պետերբուրգում էր: Մի օր էլ հանկարծ էմինի հետ դասարան մտավ մի բարակ-բարակ, միջին հասակով մի երիտասարդ: Տեսուչը նրան ծանոթացրեց մեզ հետ, հայտնելով, որ նա պետք է հայոց լեզվի դաս տա: Մեր առաջ կանգնած է Միքայել Նալբանդյանը... Երբ որ տեսուչը պնաց և նա ամբիոն բարձրանալով, սկսավ յուր առաջին դասը, նա փերպարանափոխվեցավ. նորա առանց այն էլ փայլուն աչքերը կրակով լցվեցան և փրփր մի այնպիսի գեղեցիկ ու զրավիչ արտահայտություն ստացավ, որ իսկույն հափշտակեց մեր սիրտը և ընդմիջտ կապեց մեզ յուր հետ: Նա խոսում էր ազատ, այն ժամանակվա մաքուր աշխարհաբարով... Ճշայլ, թողնեք գրաբարը, այսուհետև մենք աշխարհաբար պետք է սովորենք,— այս խոսքերով նա սկսեց յուր դասախոսությունը: Եվ մենք սկսանք աշխարհաբար սովորել: Էմինի ժխտիչ հատուածքի գրաբար հոգվածները մենք թարգմանում էինք աշխարհաբար: Խոսում էր ինքը և մեզ խոսեցնում. կարդացածներին պատմական նյութը նա լրացնում էր հայոց պատմությունից ամբողջ գլուխներ պատմելով. շատ անգամ էլ նյութից հեռանալով, ուրիշ պատմություններ էր անում, որոնք բոլորը ևս հայկական կյանքին վերաբերելով, շարժում էին մեր հետաքրքրությունը և մեծ բավականություն տալիս մեզ...»:

Դասավանդման նոր մեթոդների հետ միասին, Նալբանդյանը ճեմարանում սահմանեց մտերմական-քարեկամական հարաբերություններ աշակերտության հետ: Նա ուսաճողության սիրելի դասախոսն էր: Բայց նրա գործունեությունը երկար չտևեց ճեմարանում: Հակառակորդները չէին քննել նրանք ոչ միայն չէին լուրջ, այլև մոլեգնորեն շարունակում էին նրան հետապնդել: 1854 թվականի հունվարի 23-ին նա ձերբակալվում է, բայց ազատվում է Նազարյանի միջամտությամբ, սակայն այլևս չի շարունակում իր դասերը լազարյան ճեմարանում:

սեպտեմբերի 2-ին (1854 թ.) նա ազատվում է ուսուցչի պարտականություններից:

Նույն թվականի սեպտեմբերի 11-ին Նալբանդյանն ընդունվում է Մոսկվայի բժշկական ֆակուլտետը, որպես ազատ ունկնդիր: Մոսկվայի համալսարանը վճռական նշանակություն է ունենում Նալբանդյանի գրական-գեղարվեստական, հասարակական-գիտական հայացքների կազմավորման համար: Համալսարանը մեծ չափով նպաստում է երիտասարդ Նալբանդյանի զարգացման ու մտահորիզոնի ընդարձակմանը: Նա մեծ եռանդով ու սիրով է զբաղվում ռուս առաջավոր մտքի ուսումնասիրությամբ, հատկապես մեծ հետաքրքրությամբ է ուսումնասիրում Բելինսկու գրվածքները, որոնց ազդեցության տակ հասունանում, զարգանում է նրա սուր միտքը, ըմբռնում է գրականության էությունն ու նրա հասարակական մեծ նշանակությունը: Այս ալս ժամանակաշրջանի արգասիք է Ձեռագրի հայ մատենագրության ճանաչումը, որ ընդհանուր ակնարկ նետելով հայ հին գրականության և լեզվի վրա, քննում է նրանց ներկա վիճակը, պաշտպանելով ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվի և գրականության սկզբունքները:

Ինքնակրթության ծառայք, հզոր կամքի ու սուր հիշողության հետ միացած, զրգում են նրան անընդատ կարգալ ու զարգանալ: Նա ուսումնասիրում է գրականությունը, ուսումնասիրում է առանձնապես բնական դիտությունները, վերջապես սոցիալական դիտությունները, որոնք իրենց հրատապ խընդիրներով ամբողջովին զրավում են նրան: Նալբանդյանը, որն արդեն կյանքի մեջ գործել էր մաքառելով խավարի ու տգիտության դեմ, այժմ ավելի զարգացած, կյանքի խորհուրդն ավելի ըմբռնած, իր ձայնն է բարձրացնում իր Հայրենիքի վերածնության և հայ ժողովրդի լուսավորության համար:


1858 թվականից սկսվում է Նալբանդյանի րադմակոդմանի՝ գրական, գեղարվեստական, հրապարակախոսական և հասարակական գործունեությունը: 1858 թվականի հունվարին, Ս. Նազարյանի հետ, հիմնում է «Հյուսիսսփայլ» ամսագիրը: Հրապարակախոսությունը Նալբանդյանի տարերքն էր: Ազգության և լուսավորության, գրականության և լեզվի, բռնակալության և հասարակ ժողովրդի ազատության հարցերը կազմում էին նրա հրապարակախոսության հիմնաքարերը:

Նալբանդյանը «Հյուսիսսփայլ» ամսագրի կոշման վրա ուներ լայն հայացքներ: Իրեն կյանքի մարդ, նա ձգտում էր, որ ամսագիրը լինի հայ ժողովրդի զարթոնքի կարևոր

ազդակներին մեկը, որ նա ուղենշի հայ ժողովրդի հեռանկարը դեպի ազատություն և երջանիկ ապագա: Նա ցանկանում էր, որ հայ ժողովուրդը, պահպանելով իր առանձ-

նորոգական գործի բարելավման, հայ նոր թատրոնի ստեղծման, կանանց կրթության հարցերին և այլն:

Մեծ է նախանդամի վաստակը բնական



ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

նահատկությունները, ծաղկի ու զարգանա՝ առանց կտրվելու ընդհանուր մարդկությունից:

«Հյուսիսափայլ»ի էջերում Նալբանդյանը լուրջ ուշադրություն է դարձնում ժողովրդի լուսավորության գործի կազմակերպման,

գիտությունների պրոպագանդայի գործում: «Հյուսիսափայլ»ում տպագրված բազմաթիվ հոդվածների միջոցով նա, մատչելի ձևերով, ժողովրդական լայն խավերի սեփականությունն է դարձրել ժամանակի առաջավոր գիտության նվաճումները՝ բնագիտության,

աստղաքաշխության, հեռաքանության և այլ բնագավառներում:

Նալբանդյանի կյանքի և գործունեության ամենանշանակալից կողմերից է նրա հետեւվողական պայքարը, իսկական ազատութեան, մեծ և փոքր ժողովուրդների իրավահավասարության և եղբայրության ու համերաշխության համար: Նրան հուզել ու հետաքրքրել է բոլոր ճնշված ու հարստահարված ժողովուրդների, ինչպես ինքն է ասում՝ «հասարակ ժողովրդի» ազատության խնդիրը՝ ո՛ր երկրում էլ նրանք գտնվելիս լինեն: Նալբանդյանը պահանջում է, որ ազատ, անկախ և իրավահավասար լինեն բոլոր ազգերը: «Թո՛ղ ամենայն ազգ պահպանի յուր ազգային կերպարանքը, թո՛ղ ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգությունը մարդկեղեն աշխարհի մեջ»: Գոքա միայն զորություն և հոգի են տալիս ազգերի ընդհանուր աշխատությունը:

Ահա թե ինչու՝ նրան մինչև հոգու խորքը վշտացնում է այն դատն իրողությունը, որ պատմության մեջ շատ հաճախ «մի ազգ ճնշում է, հարստահարում է մյուս ազգը, յուր զենքով սահման է դնում նորա հողի վրա»: Նա իր բողոքի ձայնն է բարձրացնում անարդարության վրա, որ եվրոպական «ցաղաքակիրթ» պետությունները օգնում են ֆեոդալական Թյուրքիային, հնարավորություն են տալիս, որպեսզի նա կողոպտի, թալանի և մշտական քուժության տակ պահի հայերին, հույներին, սլավոններին և մյուս ազգերին: «Հիշատակարան»ում Նալբանդյանը գրել է. «Ազգ ասելով շենք իմանում այն մի քանի մարդիկ, որ արծաթե սանդուղով վեր են բարձրացել ազգի մականրեւոյթից, այլ այն խեղճ և կարեկցութեան արժանի ժողովուրդը, որի վերա ծանրացել է ազգային ապարախտության հետեւանքը»:

Վերջապես Ազգային Եկեղեցու վարչատնտեսական կյանքի մեջ Նալբանդյանը պահանջել է բարեփոխություն: Յուլյո տալով Հայ Եկեղեցու խորհուրդը հայ ազգի նկատմամբ, նա ասում է, որ Հայոց Եկեղեցին պահել է մինչև այսօր իր ինքնուրույնությունը և անկախությունը: «Ահհարժեշտ հարկավոր է, որ մանավանդ այսուհետև ևս պահե հեռի մնալով Հունական, Հռոմեական և Բողոքական եկեղեցիներից... Խորտակված ազգության տեղ բռնում է կրոնը. ստույգ է՝ լեզուն ևս կա, բայց շատ տեղ մոռացված. և որովհետև ազգության գաղափարը դարձել է Եկեղեցին, ապա ուրեմն նրա վերա ձեռք բարձրացնողը բարձրացնում է ազգի վերա: Այս տեսակետով Նալբանդյանը հարձակվում է կաթոլիկ և բողոքական քարոզիչների վրա և հրապարակ հանում նրանց խայտառակ

գործունեությունը իր մի քանի ուսումնասիրություններով, որոնք հրատարակվում էին «Հյուսիսափայլ»ում:

Մոսկվայում ապրած տարիներին Նալբանդյանը թարգմանել է էսեն Սյուրի միափառական հրեանա, նպատակ ունենալով որ միայն աշխարհաբար լեզվով հետաքրքիր լիութ տալ հայ երիտասարդությանը, այլև ծանոթացնել ճգնվածների գործունեությանը ընդհանրապես: Միայն այս տեսակետով է ասկանալի դառնում Հիսուսյանների մասին գրած այն ծավալուն և մանրակրկիտ ուսումնասիրությունը, որ նա կցել է «Թափառական հրեանայի իր թարգմանության առաջին հատորին»: Նալբանդյանը գրելով Եկեղեցիների մասին և մտնելով դավանաբանական խճճված հարցերի մեջ, որոշակի նպատակ էր հետապնդում — Եկեղեցիների կրոնական գլուխավորական կեղծ պիտակի տակ թաքնված գեղը բացահայտել, ցույց տալ կաթոլիկական պրոպագանդայի էությունը, պայքարել պապականների ազդեցության դեմ: Նալբանդյանը, 1857 թվականի փետրվարի 29-ին իր բարեկամ Գ. Սալթիկյանին ուղղված նամակում, խոսելով «Թափառական հրեանայի հրատարակության ընթացքի մասին, գրում է, որ «կաթոլիկների մեջքը կոտրելու է այդ»:

Եվսիտական կարգի մասին գրած «Հիսուսյանք» պատմական այս ուկնարկ-գրության առիթ է հանդիսացել Մխիթարյան ուխտի անդամներից մեկի՝ Հ. Իգնատիոս Փափազյանի բացահայտ համակրական խոսքը Եկեղեցիների մասին: «Պարոն Փափազյանը, — գրում է Նալբանդյանը, — յուր 1848 թվականում տպած «Եկեղեցական պատմության» մեջ, սկսած 923 երեսից մինչև 932 երեսը, խիստան դուրս դալով Հիսուսյան կարգի հակառակորդների դեմ, ամենայն ջանք գործ է դնում, Հիսուսյանների խավարը լույս ապացուցանել, իսկ հակառակորդների լույսը՝ խավարի ծափում եմ, որ պատվելի հեղինակը չէ՝ կարողացել դոնե մասնավորապես ծածկել յուր համակրությունը Հիսուսյանց հետ, և համարելով, թե աշխարհում բոցի Մխիթարյան միաբանությունից այլ մարդիկ չկային, շատ դրական և վճռական կերպով հանդես է գալիս եկել հայերի մեջ: Այս բանը ինձ պատճառ տվեց գերապատիվ էսեն Սյուրի հեղինակի փապասանության սկզբում գրել Հիսուսյան կարգի պատմությունը...»:

Հետագայում Նալբանդյանը իր ուրիշ գրվածքներում նորից անդամադարձավ կաթոլիկության հարցին, հեռավոր կերպով սասած իր մտքերը ավելի զարգացրեց և հիմնավորեց մի հատուկ և ընդարձակ հոգվածում՝ «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք»:


վերնագրով, որը լույս է տեսել «Հյուսիսափայլ»-ի 1858 թվականի № 5, 6 և 11 ամսատետրականներում:

Մխիթարյանների մասին գրած այս ընդարձակ հոդվածը միայն պատմա-բանասիրական ուսումնասիրությունն չէ, այլ ըստ էության պոլեմիկական մի դրվածք՝ իր սուր ծայրով ուղղված կաթոլիկության և նրա պրոպագանդայի դեմ:

է Նալբանդյանը, և որն այսօր առավել քան հրեք ունի քաղաքական նշանակություն:

Մատայելով Վատիկանին՝ հայ կաթոլիկ վարդապետները տարածել են զրքեր, զաղափարներ՝ տողորմած «պապական պղտոր հայացքներով»: Հայ կաթոլիկ վարդապետները կան և մնում են «որպես պապական ձեռքով վարձած մշակներ», — ահա՛ Նալբանդյանի հղրակացությունը:

Իսկ իրենից ի՞նչ է ներկայացնում պա-



Միհայել Նալբանդյանի հայրենակում տունը՝ Նոր-Նախիջևանում

Հայ մեծ հրապարակախոսը իր հուժկու ձախը քարծրացրել է Վատիկանի կրոնական քողի տակ վարած նվաճողական քաղաքականության դեմ: Նալբանդյանը հայ իրակահունության մեջ առաջինն էր, որ համարձակ և ճիշտ կերպով քաջահայտեց Վատիկանի վտանգավոր գործունեությունը ի վնաս Հայ Եկեղեցու և ժողովրդի: Քննադատության տակ առնելով հայ կաթոլիկ վարդապետների «կոպտության» գործունեությունը, ցույց է տվել այն դառը, թունավոր պտուղները, որ աճեցրել են նրանք:

Ո՛ւմ է ծառայել և ծառայում Հայ Կաթոլիկ Եկեղեցին, ո՛ւմ են սպասարկել և սպասարկում նրանց ծախու գործակալները՝ սողոսկած Ասիայի և Եվրոպայի ժողովուրդների մեջ: Ահա՛ մի հարց, որին անդրադարձել

պակասության խնդիրը: Նալբանդյանը բնութագրում է այն որպես աշխարհի ազատասեր ժողովուրդների դեմ ուղղված տիրապետության քարոզ. «Նորա մտացածին և կարծիքական տիեզերական հոգևոր իրավասության տակ թաքնված է տիեզերական քաղաքական իրավասություն»: Այդ «տիեզերական քաղաքական իրավասություն» օգտին էին ծավալում իրենց հզվիտական գործունեությունը 19-րդ դարում Զամուռյանը, Հասունյանը և ուրիշները, այդ նույն հրեշավոր նպատակն է հետապնդում այժմ հայ ժողովրդի զազրելի թշնամի, կաթոլիկ պապի ձայնավող կարդինալ Աղաջանյանը:

«Հյուսիսփայլ»-ում տպված Նալբանդյանի մեն-մի ստեղծագործությունը լայն արձագանք էր գտնում ամեն տեղ, մինչև իսկ հե-

հավոր հայ գաղութներում, նա մեծանում, առնականանում էր որպես հասարակական գործիչ, գրող ու հրապարակագիր, նրա օրով ամսագիրը դարձավ հայ հասարակական, գրական առաջավոր մտքի փայլուն արտահայտիչը: Նախադասի անունը ակնածանք ու սեր էր արթնացնում առաջավոր հայ երիտասարդության մեջ: Հակառակորդները կատաղում էին: Հատկապես նրա դեմ սուր հալածանք կազմակերպեց այս շրջանին Գաբրիել վարդապետ Այվազյանը, որ, ներքին գործոց մինիստրության ուղղած իր ամբաստանագրով, ձգտում էր խափանել ամսագրի հրատարակությունը:

1859 թվականին ամսագիրը կանգնում է փակվելու վտանգի առաջ:

Մյուս կողմից, Նախադասի ի լնե սկար կազմվածքը երկար չի կարողանում դիմանալ լարված մտավոր աշխատանքին. մարտին նա ծանր հիվանդանում է, և լրիվ բուժվելու համար բժիշկների խորհրդով նույն ամսի 24-ին Վարդապետի վրայով մեկնում է արտասահման՝ Բեռլին, ապա Փարիզ և Լոնդոն: Արտասահմանից 1859 մայիսին Գ. Սայթիկյանին ուղղած իր մի նամակում գրում է, որ բոլոր նեղությունները քաշում է Ժիժոխի սպասավոր եղվիտ հոգևորականներից: Ինչպես պարզվում է, Նախադասի արտասահման մեկնելը ունեցել է մի որոշ նպատակ էս. նա ցանկանում էր ճշտափաստի Ռուսաստանում փակվելու դեպքում, այն տեղափոխել Փարիզ, Նախադասը այդ մասին որոշակի ակնարկում է վերոհիշյալ նամակում. «Ես հույս ունեմ, որ դուք բոլորդ, ճշմարտասեր և ազնիվ հայրենակիցք ու բարեկամք, ինձ օգնական ու ձեռնուկ կլինեք, եթե Մոսկվա փակվի ճշտափաստից, նորից ուրիշ տեղ... վերանորոգելու: Նախադասին այս կապակցությամբ բանակցությունները Փարիզում տպարանատեր Ժանիկ Արամյանի հետ հաջողությամբ պայվեցին, բայց Նախադասը անցած համարելով ճշտափաստի փակվելու վտանգը, նպատակահարմար չհամարեց ամսագիրը Մոսկվայից տեղափոխել:

Նախադասը մեկ ամսի չափ լոնդոնում մնալուց հետո անցնում է նորից Գերմանիա, լինում է Էմսում, Մայնի-Ֆրանկֆորտում, Համբուրգում և այլուր ու ապա նորից է մեկնում Փարիզ և հուլիսի վերջերին Վարդապետի վրայով վերադառնում է Մոսկվա:

Արտասահմանում գտնված ժամանակ Նախադասը գրում է «Մեմուարյան օրեր», «Ապոլլոնին», «Իտալացի աղբյակ երգը» նշավոր բանաստեղծությունները, վերսկսում է Կոմա էմանուելի աշխատակարանը, որը ընդհատվել էր ճանապարհորդության պատճառով:

Նախադասի արտասահմանից վերադառնալուց հետո գնալով ավելի են խորանում գաղափարական այն տարածաշրջանները, որոնք առկա էին երկու գործիչների՝ Ս. Նախադասի և Մ. Նախադասի միջև: Նախադասը 1860 թվականի հոկտեմբերին թողնում է ճշտափաստի խմբագրությունը և թեկնածուական քննություններ տալու պատրվակով մեկնում Պետերբուրգ, Բայց Նախադասը իր կապերը երեք չխզեց ամսագրից, նրան համարելով մեծ թախքի օրգանն, մինչև իր կյանքի վերջը, նույնիսկ բանտից, կեղծանունով, թղթակցելով ճշտափաստի խմբագրին:

1863 թվականին ճշտափաստի փակման լուրը Նախադասը ընդունել է խոր վշտով. «Շատ ցավում եմ, որ մեր ճշտափաստի գոյություն չունի և ասպարեզը մնացել է գրական գաճաճներին, — գրում է նա բանտից:

1860 թվականի սկզբներին Պետերբուրգից Սայթիկյանին գրած իր նամակներից մեկում Նախադասը հայտնում է, որ նպատակ ունի Պետերբուրգից գնալ Փարիզ՝ բժշկական կրթության մեջ խորանալու համար: Այդ նպատակով նա խնդրում է իր բարեկամների նյութական աջակցությունը, բայց չստանալով անկեղծված դրամական օգնությունը, հրաժարվում է իր այս մտադրությունից և տկոսում է նախապատրաստվել թեկնածուական քննություններ հանձնելու համար:

Պետերբուրգի համալսարանի Արևելագիտական ֆակուլտետի քննական հանձնաժողովին հաջող քննություններ հանձնելով հայոց լեզվից, ասորականությունից, վրաց լեզվից, ռուսաց լեզվից և թյուրքերենից, Նախադասը գրում է ներկայացնում է իր սեմլոգայում հայոց լեզվի ուսումնասիրության և հայ գրականության դիտարկման նշանակության մասին՝ դիտարկելով նախադասության և հաջողությամբ պաշտպանում այն:

1860 թվականի մայիսին Նախադասը Նոր-Նախիջևանի հասարակության խնդրանքով գալիս է հայրենի քաղաք՝ որպես Հնդկաստան մեկնելու թեկնածու: Հուլիսի 15-ին, Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հալապետյանի նախաձեռնությամբ, տեղի է ունենում հասարակական ժողով՝ նվիրված հնդկահայերի գործով կալվածքա ուղարկելու համար պատվիրակներ ընտրելու հարցին: Ժողովն ընթանում է Նախադասականների և հակառակորդ խալիբյանների խոսքից: Փարիզից միջնորդում: Ընտրվում է Նախադասը:

Ինչպես հայտնի է, Նախադասը, իր «Աղբյակ» ժառանգությունը հորվածում, որ տպագրվել էր ճշտափաստի խմբագրում, վաղուց

անդրադարձել էր այս խնդրին և հարց հարուցել կտակած գումարները Նոր-Նախիջեվանի հասարակությանը տալու համար ժամանակին այս գումարներն ստանալու փորձեր էին արել Ներսես կաթողիկոսը և ուրիշները, բայց հաջողություն չէին ունեցել։ Այժմ հասարակությունն ինքն է փորձեր անում մահտեսի Բարաշանյանի, Գ. Խոճամալի և ուրիշների կտակած փողերն ստանալու։ Այդ նպատակով է, որ Նալբանդյանն ընտրվում է Նոր-Նախիջեվանի հասարակության անդակայացուցիչ՝ Հնդկաստան ուղևորվելու համար։

Օգոստոսի 8-ին Նալբանդյանը ստանում է քաղաքի մագիստրատի հնդկահայերի գործի առթիվ իրեն տված լիազորության վկայականը՝ «Երեսփոխանական թուղթը, Գործը օրինականացնելու համար հավատարմագիրը պետք էր վավերացվեր կամ Նոր-Նախիջեվանի հոգևոր առաջնորդի ձեռքով, որն այդ ժամանակ Նալբանդյանի թշնամի Գարբիել վարդապետ Այվադյանն էր, և կամ Ամենայն Հայոց Հայրապետի միջոցով»։ Նալբանդյանը վճռում է գնալ էջմիածին։

Պաշտոնական հանձնարարականներով, օգոստոսի 17-ին Նալբանդյանը Նոր-Նախիջեվանից գալիս է էջմիածին, ուր հասնում է սեպտեմբերի 6-ին։ Այստեղ նա մնում է շուրջ երկու ամիս։ Երեսփոխանական թուղթը Մինոդը հաստատում է սեպտեմբերի 10-ին։ Այնուհետև Նալբանդյանը այցելում է Օշական՝ Ս. Մեարույի գերեզմանին և Թյրիսի—Փոթի—Բաթումի ճանապարհով մեկնում Կոստանդնուպոլիս։

Կոստանդնուպոլիսում Նալբանդյանը մնում է մինչև դեկտեմբերի 21-ը, հնդկահայ կտակների հաջողության համար դիմում է ուսաց և անգլիական դեսպանների խորհրդին։ Կոստանդնուպոլիսում Նալբանդյանը հետաքրքրվում է տեղի ազգային, հասարակական հարցերով, նա ակտիվ մասնակցություն վճռում Կոստանդնուպոլսի Հայ բարեգործական ընկերության հիմնադրմանը, Հայություն Սվաճյանի նախաձեռնությամբ ՄԵԴՊԵԹ թերթի շուրջն է համախմբում արևմտահայ մի խումբ դեմոկրատների և նրանցից վաղմուտ մի ընկերություն։

Նալբանդյանը Կոստանդնուպոլիսում գրում է և Շահբեկ կեղծանունով ՄԵԴՊԵԹ թերթի 1860 թվականի № 269-ում հրատարակում իր «Էրաշափառ խայտառակություն» հոդվածը։ Նալբանդյանի այս հոդվածին առիթ էին հանդիսացել «Երեսկաթի խմբագիր պատվելի Զամուռլյանի հոդվածները, որոնք այն միտքն էին հայտնում, թե Քրիստոսի վարդապետությունը չլուրանալու համար, անշուշտ պետք է հավատալ և խոստովանել կախարհությունը, դեների գոյությունը և

այլն։ Նալբանդյանը այսպիսի խնդիրներով զբաղվելը համարում է ամոթ ու նախատինք հայ մամուլին։ Այս հոդվածից հետո նույն թերթի № 279-ում լույս է տեսնում Նալբանդյանի գեղեցիկ նամակը վանեցի Պողոս եպիսկոպոսի խարդախ գործերի մասին, որ քովանդակ Կոստանդնուպոլիսն ու վանք հուղել էր։

Նոյեմբերի 20-ին Նալբանդյանը ներկայանում է ուսական դեսպանին, վերջինս խորհուրդ է տալիս՝ Նախքան Կալկաթա մեկնելը գնալ Լոնդոն, այնտեղ ուսական դեսպան Բրոնովի միջոցով գործեր պարզել անգլիական կառավարության հետ և ապա ուղևորվել Հնդկաստան։

Վերջապես, դեկտեմբերի 21-ին, Նալբանդյանը շոգենալով Կոստանդնուպոլսից մեկնում է Մարսել՝ այնտեղից Լոնդոն անցնելու համար։ Նրկար ճանապարհորդությունից և լավ վախճանի դժվարությունների համագիպելուց հետո Միցիլիս կղզի—Նեսպոլ—Ջենովա—Փարիզ ճանապարհով, հունվարի 11-ին նա հասնում է Լոնդոն, փետրվարի 3-ին ներկայանում է տեղի ուսական հյուպատոսարանը՝ Երեսփոխանական թուղթը հաստատելու համար։ Փետրվարի 22-ին, ուսական դեսպանության միջնորդությամբ, անգլիական արտաքին գործերի ատյանը հաստատում է Նալբանդյանի Երեսփոխանական թուղթը, որից հետո նա Կալկաթա ուղևորվելու համար անմիջապես մեկնում է Փարիզ։ Փարիզում Նալբանդյանը մնում է մինչև մայիսի վերջերը, սպասելով ճանապարհների քացվելուն (ճանապարհը Մարսելից Կալկաթա տևում էր 38 օր, որը ձմեռային ցրտերի պատճառով անհնար էր)։


Փարիզում Նալբանդյանը գրեց իր «Երկու տող» հուշակվոր պամֆլետը Զամուռլյանի դեմ, նա լավ հասկանալով Զամուռլյանի բուն նպատակը, նրան անվանում է «Ժախու գրիչ»։ Այդ կապակցությամբ Նալբանդյանն անդրադառնում է նաև Գարբիել վարդապետ Այվադյանին՝ «Հյուսիսսահայյա» մասին նրա գրած ամբաստանագրի առնչությամբ։

Նալբանդյանը «Երկու տողում» հայտարարեց, որ ինքը իրոք դեմոկրատ է և հասարակ հայ ժողովրդի պաշտպանը, «Մենք ազատական անվիրենք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու,— գրում է նա,— Մեր անձն ու գրիչը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթե թումբերի տակ միշտ անխոցելի են նաև բռնակալների իշխանությունը մեզ։ Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ ու քաղցած հայը, ո՞չ միայն ճնշված օտարներից ու բարբարոսներից, այլև յուր հարուստներից... ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում

է մեր ուշադրութիւնը և նորան դարձյալ առանց վայրկյանական երկմտութեան, նվիրեցինք մեր բոլոր կարողութիւնը: Պաշտպանել արե՛ն հայի առաջուր կոխված իրավունքը է՝ մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը: Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկենք ոչ բանտի, ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիւմ և գրով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժա-

փորագրել տալու հարցով: Այդ կապակցութեամբ նա բանակցութիւններ է վարում փորագրիչների և ֆրանսիացի տպարանատերերի հետ:

Վերջապես, իր բոլոր գործերը Փարիզում ավարտելուց հետո, Նալբանդյանը Մարսելից մեկնում է Կալկաթա, ուր հասնում է հունիսի 17-ին: Հնդկաստանում Նալբանդյանը մնում է մոտ 4 ամիս և աշխատում ամենայն



Միֆայել Նալբանդյանը Հայաստանում

Գրեթէ՝ Եկաբիլ Հր. Ռուսկյանի

նի լինենք զենք առնել մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատութիւնը նվիրել և սրբել մեր արյունով: Ահա վասիկ մեր դավանութիւնը, որի մեջ մենք տեսնում ենք ազգի փրկութիւնը:

Նալբանդյանի ճերկու տողը մեծ ազդուկ հանեց նրա թշնամիների բանակում:

Նալբանդյանը Փարիզում եղած ժամանակ երկար զրադվում է Հայաստանի քարտեզը

աշարքութեամբ դրուի բերել իրեն համեմատ կտակների գործը:

1861 թվականի սեպտեմբերի 26-ին Նալբանդյանի ջանքերի շնորհիւ Կալկաթայի Յորտ Ուփոմի դատական ատյանը վայացնում է իր վճիռը հօգուտ Նոր-Նախիջևանի նույն օրը, հաջողութեամբ ավարտելով իր գործը, Նալբանդյանը մեկնում է:

Նալբանդյանը Կալկաթայից ուղևորվում է

դեպի Կոստանդնուպոլիս: Ճանապարհին կանգ առնելով Կահիրեում, Ալեքսանդրիայում և Երուսաղեմում, դեկտեմբերի 7-ին հասնում է Կոստանդնուպոլիս: Այստեղ նա մնում է մոտ մեկ ամիս: Այդ ժամանակ նա գրում է իր «Ազգային թատրոնը Պոլսի մեջ» գեղեցիկ հոդվածը և հրատարակում «Մեղու» թերթում: Այս հոդվածում նալրանդյանը բացատրում է թատրոնի մեծ նշանակությունը կյանքի նկատմամբ:

Կոստանդնուպոլիսում նալրանդյանը, ուսական դեսպանի հանձնարարությամբ, գրում է «Հայ լուսավորչական համախոսք» Կ. Պոլսում» գեկուցագիրը, տրտեղ, նկարագրելով արևմտահայերի իրավա-քաղաքական ծանր վիճակը Թուրքիայում և ճշելով հայ ժողովրդի խորը համակրությունը Ռուսաստանի նկատմամբ, անհրաժեշտ է համարում ուսականավարության միջամտությունը, որի շնորհիվ կարելի կլինի կասեցնել անգլոֆոնանիական ազդեցությունը, որը տարածվում էր միսիոներների պրոպագանդայի և այլ միջոցներով:

1861 թվականի դեկտեմբերի 27-ին թողնելով Կոստանդնուպոլիսը, նալրանդյանը Փարիզի վրայով հունվարի 9-ին հասնում է Լոնդոն, ապա անհայտ պատճառով նորից գալիս է Փարիզ և վերադառնում Լոնդոն: Նա Լոնդոնում սկսել է գրել իր հուշակալոր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը: Լոնդոնում նա ծանոթանում է ուս հուշակալոր գործիչներ Գերցենի, Օգարյովի և նրանց մյուս համախոհների հետ ու շուտով դառնում նրանց լավագույն բարեկամը: Նա շլիովին վայելում է Լոնդոնի ուսանների հարգանքը:

Ապրիլի 4-ին նալրանդյանը նորից գալիս է Փարիզ՝ Ռուսաստան վերադառնալու համար: այստեղ նա տեսակցում է ուս հուշակալոր գրող, Լազարյան Ճեմարանի սան Տուրգենևի հետ և շուտով մտերմանում նրա հետ: Մինչև մայիսի 25-ը Փարիզում լույս է տեսնում նալրանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» հուշակալոր աշխատությունը՝ Ս. Մանիկյան կեղծանվան տակ:

Իր այս աշխատության մեջ է, որ նալրանդյանը քննության է առել գյուղատնտեսության հարցը: Նա միանգամայն անբավարար է համարում 1861 թվականի ճորտատիրական «Բֆորմը», որը գյուղացիությանը լրիվ ազատություն չտվեց: «Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ, մեծ խորհուրդ ունի...», — հանճարեղորեն կանխատեսում է նալրանդյանը և ավանդում սերունդներին:

Վերջապես, մայիսի 25-ին նալրանդյանը

վերադառնում է Պետերբուրգ: Այստեղ նա առ ժամանակ բավական եռանդուն կերպով ձեռնամուխ է լինում Հայաստանի պատմական քարտեզի տպագրության գործին և ապա շտապում է Նոր-Նախիջևան՝ հասարակությունը իր կատարած աշխատանքի մասին հաշիվ տալու համար: Նա Նոր-Նախիջևան է հասնում 1862 թվականի հուլիսի 10-ին: Բայց անմիջապես նույն ամսի 14-ին ձերբակալվում է և ուղարկվում Պետերբուրգ ու նետվում Պետրոպավլովյան ամրոցի զնդաններից մեկը: Լոնդոնի ուս պրոպագանդիստների հետ կապ ունենալու մեղադրանքով նույն օրերին ցարական ոստիկանությունը ձերբակալել էր 32 հոգու, որոնց դատավարությունը հայտնի է «32-ի դատավարություն» անունով:

Նալրանդյանին ձերբակալելու համար պատճառ են հանդիսանում ինչպես մինչև այդ եղած նրան վերաբերող ամբաստանությունները, այնպես նաև նոր փաստերը: Հուլիսի 28-ին Պոլտավայի նահանգում ձերբակալված Ա. Նիչուպորենկոյի մոտ խուսափությունից հայտնաբերվում է Բակոնինի մի նամակը՝ ուղղված նալրանդյանին հետևյալ բովանդակությամբ. «Թարեկամ նալրանդյանին Գերցենից, Օգարյովից և ինձանից ողջույն: Խնդրում ենք մենք ամենքս, որ դուք ընդունեք Ա. Ն. Նիչուպորենկոյին, ինչպես մեր բարեկամին, որին կարող եք այնպես վստահել, ինչպես մեզ...»: Նալրանդյանին վերաբերող փաստեր հայտնաբերվել են նաև մի քանի ուրիշ ձերբակալվածների մոտ: Ահա այս բոլորը, ինչպես նաև նալրանդյանի արտասահման գնալը, նրան վերաբերող ստացված ամբաստանագրերը բավականին հիմք ու պատճառ են դառնում նալրանդյանի ձերբակալմանը:

Նալրանդյանի բանտարկության լուրը ձնշող տպավորություն է թողնում հայկական շրջաններում: Կովկասում և Ռուսաստանում, Կոստանդնուպոլիսում և Փարիզում, Կալկաթայում և ուրիշ վայրերում թերթերը զայրույթով արձագանքեցին այս փաստը: Հայ ժողովրդի սիրելի զավակի անունը երկար ժամանակ չէր իշխում թերթերի էջերից: Նալրանդյանի ջերմ պաշտպաններից մեկը՝ Հ. Սվաճյանը իր «Մեղու» թերթում գրում էր, որ ամբողջ հայ ազգը և շատ ու շատ ոչ հայ մարդիկ անհանգիստ սրտով ու անհամբերությամբ սպասում են նրա ազատությանը:

Հուլիս, խորն ու անկեղծ զգացմունքներով օժուկ տողեր էր նվիրում նալրանդյանին Հնդկաստանի «Նորայրասեր» թերթը, կոչելով նրան «գյուցազն», որն անձնվիրալար զոհվում է իր ժողովրդի համար: Դիմե-

լով նալրանդանին, թերթը գրում է. «Հընգ-կաստանի կիզիչ շերմութունը չկարողացավ խամբել քո հայրենասիրության ծաղիկը, այժմ էլ Սիրիիի ցրտաշունչ ձմեռը, եթե դժբախտաբար դու այնտեղ ես, չէ կարող սառեցնել քո սիրո հնոցը, ո՛չ ժամանակ, ո՛չ էլ մահը չեն կարող խել քո հիշատակը մեր միջից. որդին հորից լսելով քո հարգելի անունը, կհաղորդի իր հետևորդներին, մինչև քո թշնամիները կկորչեն կանհետանան և կդատապարտվեն հավիտենական մոռացության»:

Միայնությունը հալումաշ էր անում նրան: Ընդուն է, բացի եղբորից երեւմ թույլ էր տրվում նրան այցելության գնալու և մի քանի ուրիշ ծանոթների ու բարեկամներին— Կ. Նոյանին, գեներալ Սուլթան-Շահին, Զ. Սահրաթյանին, Ս. Նազարյանին, բայց այդ բոլորը, իհարկե, բավական չէր այնպիսի մարդու համար, ինչպիսին էր Նալրանդանը, որը կտրվել էր կյանքից և ընկել դառն, անմխիթար միայնության մեջ, ճանջատված մեծերից ու փոքրերից և ընդհանրապես բովանդակ աշխարհից:

Բանտում թեև Նալրանդանը իր կյանքը համարում էր «կենդանի մահ», սակայն նա հավատում էր գալիք լավագույն օրերին: «Բայց պետք է հուսալ, որ ամպամած օրը այնպես չի մնա, կցրվեն ամպերը, կշնչե դարանային զեփյուռը և արևը կծագի լուսավորելու և ջերմացնելու այն մռայլ ու սառած դեմքերը, որ խոնջացած են երկարատև տառապանքից»,— գրում է Նալրանդանը իր եղբորը, 1863 թվականի ապրիլի 8-ին բանտից գրած նամակում:

Բանտում Նալրանդանը առանձնապես տանջվում էր ու տառապում միայնությունից: Նա մանկությունից ու պատանեկությունից ընտելացել էր նեղ օրերի ու տանջանքների. նրա կյանքի ճանապարհին, ինչպես ինքն է ասում, վարդեր երեք լեն ծաղկել, բայց նա «համբերությամբ տանում էր յուր խաչը»:

Հույս չունենալով, որ շուտով կազատվի բանտից, Նալրանդանը թույլտվություն վճարում և անտուր շարունակելու իր գրական գործունեությունը. նա թույլտվություն է ստանում ինչպես նամակներ գրելու (միայն ոտանոթներ լեզվով), այնպես էլ գրական աշխատանքով զբաղվելու համար: Պահպանվել և մեղ են հասել Նալրանդանի կողմից գրված 19 նամակներ: Այդ նամակներում է, որ երևում են Նալրանդանի կյանքի և զբաղմունքի, նրան հետաքրքրող հարցերի մանրամասնությունները:

Բանտում եղած ժամանակ Նալրանդանը հետաքրքրվում և զբաղվում է կենդանաբանության, բուսաբանության, քիմիայի, սաղմ-

նաբանության և այլ հարցերով: Նա բանտի միայնության մեջ անհագ կարդում և ուսումնասիրում է այդ հարցերը, նպատակ ունենալով ազատվելուց հետո գրել և լրացնել դրանց բացը հայ գրականության մեջ:

Նալրանդանին շատ է հետաքրքրում հատկապես Աստվածաշնչի հայերեն թարգմանության խնդիրը, հետևաբանտարկությունից առաջ, 1860 թվականին Նալրանդանը նամակ է գրում Կոստանդնուպոլիս իր բարեկամ Մ. Փանյանին և խնդրում իրեն ուղարկել 1857 թվականին Կոստանդնուպոլսում տպագրված աշխարհաբար Աստվածաշնչի մի օրինակը, որն իրեն շատ անհրաժեշտ էր մի հոգված գրելու համար: Այս հարցով Նալրանդանը հետաքրքրվում էր նաև բանտում. նա լսել էր, որ ոռոսաց նախկին նախարար Ա. Նովիկովը յուր ճանապարհորդության ժամանակ Սինայի մոտ գտել էր Աստվածաշնչի մի շատ հին ձեռագիր, բայց չէր կարողացել պարզել, թե ո՞ր դարին էր պատկանում այդ ձեռագիրը: Եթե պարզվեր, որ դա գրված էր Քրիստոսի ծննդից մի քանի դար առաջ, այդ կլիներ մի թանկագին գյուտ, որովհետև դրանով հնարավոր կլիներ պարզելու Աստվածաշնչի հրեական՝ «նազարեթյան» կոչված բնագիրը, ևս և Քրիստոսի ծննդից հետո Որդիների փոխված 72 թարգմանիչների հայտնի օրինակը, որից կատարված է 5-րդ դարի հայերեն թարգմանությունը, նա խնդրում է իր եղբորն իմանալ, թե արդյոք այդ մասին թերթերում մի որեւէ տեղեկություն պարզվել է թե ոչ, կամ այդ մասին հարցնել Արազամ Ֆրիկովիչից, որը նշանավոր պատմաբան-հնագետ էր, որին էր պատկանում Զհուդ Կալհից գտած մի հնագույն հրեական ձեռագրի օրինակը: Նալրանդանը ծանոթացել և մտերմացել էր նրա հետ: Նա կարծում էր, որ եթե ճիշտ է, որ Նովիկովը գտել է մի այդպիսի հազվագյուտ ձեռագիր, Ֆրիկովիչը անկասկած տեղեկություն կունենար այդ մասին:

Բանտում գտնված ժամանակ հայերեն պրեքից խնդրում է Պ. Պողոսյանի «Առաքելություն» և Ն. Արդյանի «Վերջ Հայաստանին», որը նա կարդում է և ուսումնասիրում: Այդ ուսումնասիրության արդյունքը լինում են այն հմուտ քննադատական տեսությունները նրանց մասին, որ տպագրվեցին «Գրական հանգստի» զրեքերում:

Բացի «Առաքելություն» և «Վերջ Հայաստանի»-ից, նա հետաքրքրվում է նաև Սայաթ-Նովայի երգերով, եղբորից խնդրում է՝ օրտեղից էլ լինի ճարել և իրեն ուղարկել: Զ. Հախվերդյանի աշխատությամբ 1852 թվականին հրատարակված Սայաթ-Նովայի երգերը:

Իր գրական պարապմունքները բանտում նախաճաշներ, գլխավորապես, կենտրոնացնում է հայերեն աշխարհարար լեզվի քերականություն հորինելու դժվար գործի վրա: Նա կարծում էր, որ մինչև աշխարհարարի քերականությունը հայ դպրոցականի ձեռքը չտրվի ու դպրոցներում դասավանդվող առարկաների շարքը չդասվի, նոր աշխարհարար լեզուն երբեք արմատ չի ձգի, չի յուրացվի, չի զարգանա ու առաջադիմի:

Սակայն նախաճաշնի այս գործը դուրս բերելու համար խանգարում էին երկու հիմնական հանգամանք. հարկավոր բազմաթիվ դրքերն ու բառարանները չունեն և ամենից կարևորը՝ կենդանի խոսքից կտրված լինելու հանգամանքը:

Չնայած այդ դժվարացնող հանգամանքներին, նա սկսում է կատարել իր մտադրությունը, սակայն ձեռնարկած մեծ գործի երեք խոշոր մասերից կարողանում է դրել միայն առաջաբանը:

Բացի նոր լեզվի քերականությունից, նրա գրական պարապմունքների արդյունքը բանտում լինում է մի քանի մանր ուսումնասիրություններ, Ղազար Փարպեցու թղթի աշխարհաբար թարգմանությունը, կարևոր ծանոթություններով:

Ի՞նչպես էր նախաճաշնի առողջական վիճակը բանտում: Իր նամակներում յուրաքանչյուրին հանգստացնելու համար նա չի զանգատվում իր առողջական վիճակից:

Ճիշտը սակայն այն էր, որ նախաճաշնը դեռ փոքր հասակից լինելով թուլակազմ և հաճախ հիվանդանալով, վարակվել էր անդամանելի թոքախտով, միայն մշտական բժշկական հսկողությունը, լավ սնունդը, մաքուր օդը և խաղաղ, անվրդուվ կացությունը կարող էին փրկել նրա կյանքը վերահաս վտանգից, պայմաններ, որ նա չունեն և չէր էլ կարող ունենալ բանտում հոգու հուզումնալից վիճակի մեջ:

Հատկապես նրան շատ նեղություն է տալիս լերդախտը, որի պատճառած տանջանքների ազդեցության տակ, Նա տխուր խորհրդածություն է անում. «Չար ժամի է

կպել ինձ լյարդիս հիվանդությունը, ինձ թվում է, որ կյանքիս մոտ ապագան մոռալ է...»: Այս բոլորին միացած հողացավերն ու լնդախտը, միանգամայն հյուսել և գերեզմանի դուռն էին հասցրել նախաճաշնին:

Պետրոպավլովյան զնդանում մոտ երեք տարի մնալուց հետո, նախաճաշնը, վերջապես, ոստիկանության հսկողության տակ, աքսորվում է Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը, ուր հասնում է 1865 թվականի դեկտեմբերի 7-ին, կարելի է ասել կիսամեռ վիճակում: Այստեղ նա ապրում է հատուկ հսկողության տակ, Սակայն նրա առողջական վիճակը զնալով ծանրանում է, առավելապես հոգեկան ծանր ապրումների պատճառով:

1866 թվականի հունվարին նախաճաշնը խնդրամատուց է լինում կառավարությանը՝ որ իրեն թույլ տրվի Սարատով գնալ բուժվելու Շապտակով և արտոնվի բնակվել Ղրիմ կամ Նոր-Նախիչևան:

Հայտնի չէ, թե ի՞նչ պատասխան ստացավ նախաճաշնը արժույթից, սակայն նա մինչև մայիս չապրեց. 1866 թվականի մարտի 31-ին հավիտենապես փակվեցին նրա աչքերը՝ Հայրենիքից և հարազատներից հեռու, կարոտ զեթ մի հարազատի, մի հայ մարդու:

Նախաճաշնը մեռավ, բայց նրա խոսքն ու գործը մնացին հայ ժողովրդի սրտում ու մտքում, դրոշմվեցին նրա հիշողության մեջ՝ որպես սրբազան կտակ:

Հայ ժողովուրդն իր մեծ զավակի մարմինը շնորհեց օտարության մեջ: Նրա աճյունը Նոր-Նախիչևանի հասարակության պահանջով և միջոցներով ապրիլի 13-ին բերվեց Նոր-Նախիչևան և մյուս օրը, հայ և ռուս խուռն բազմության ներկայությամբ, ամփոփվեց Ս. Խաչ վանքի բակում: Նոր-Նախիչևանի երախտագետ հայ համայնքը 1902 թվականին նախաճաշնի գերեզմանի վրա կանգնեցրեց ճրագ գեղեցիկ հուշարձան՝ կիսանդրին՝ հայացքը դեպի հարավ, դեպի իր հայրենի երկիրը, որի երջանիկ ապագայի համար պայքարեց և հերոսի մահով ընկավ նա:





ՂԵՎՈՆԴ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԱԹԱՆԱՍՅԱՆ

ԻՄ ՀՈՆԴԻՊՈՒՄԸ ՄԻՔԱՅԵՆԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԵՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ*



ազար ուժ հարյուր հիսունուժ
թվականի ամառն էր: Ես պաշ-
տոնական գործով փոստային
սայլակով Երեան էի վերադառ-
նում: Երբ հասա Գավալու հա-

յարանակ դուռը, սկսվեց մեղմ անձրև: Ղա-
մարուից կավային հողը այնքան թանձրա-
փուն ու մածուցիկ դարձավ, որ խեղճ ձիերը
դժվարությամբ էին քաշում սայլերը: Մտա-
ծեցի, թե այս դրությամբ դժվար կլինի ձի-
երին բարձրացնել Կոնդի՝ զառիվերը, ուստի
և րարվող համարեցի իջնել կայարանում,
իսկ այստեղից կառքով դիպ մեր տունը:
Այդ նպատակով սայլակը քշել տվի քաղա-
քից դուրս գտնված կայարանի բակը:

Մինչ այս, մինչ այն, տեսա, որ կալա-
րանի վերակացուն, մի ճանապարհորդական
պողոթնի² ձեռքին բռնած, դնում է կա-
յարանի սենյակներից մեկը: Հետաքրքրվե-
ցի իմանալ՝ թե ո՞վ է ճանապարհորդը, Կար-
գում եմ՝ «Միքայել Նալբանդյան»: Այցերիս
չեմ հավատում, որ «Հյուսիսափայլի» աշ-
խատակցին, սկզբապես Աստվածաբ հեղինա-
կին, հանկարծ անսպասելի կերպով կտես-
նեմ Երեանում: Վերակացուի հարցնում եմ՝
թե այդ պարոնը որտեղից է եկել և ո՞ւր է
գնում: Նա պատասխատում է, որ փոքր ինչ
առաջ եկել է էջմիածնից և դնում է Տփլիսի
հնդրեցի, թե հայտնեցեք պարոն Նալբանդ-
յանին, որ մի երիտասարդ ցանկանում է ձեզ
տեսնել:

* Սույն նատվածը, բազմաձև Ղևոնդ ավագ քահանա
Աթանասյանի հիշատակներին տեղից, խմբագրու-
թյան արամադրել է հանգուցայի որդին՝ Պ. Աթա-
նասյանը:— ԽՄԲ.:

1. Երեան քաղաքի բարձրագույն թաղամասը:

2. Փոստային բաց հրամանագիր, որը իրավունք է
տալիս ճանապարհորդին՝ փոստային կայարանից ձի
պահանջել ճանապարհորդության միջոցին:

— Շատ բարի.— ասաց վերակացուն և
դուրսը խոնարհեցնելով ներս մտավ պողո-
թնիսն տալու Նալբանդյանին:

Ես Ձյոգորովին (այսպես էր վերակացուի
ազգանունը) չէի ասել իմ անուն-ազգանու-
նը, քայց նա ծանոթ լինելով ինձ հետ, ար-
դեն ասել էր և երբ թույլտվություն ստացա
ներս մտնելու և հասել էի տան դռանը, Նալ-
բանդյանն ինքը ձայն տվեց ներսից:

— Շնորհ արե՛ք, ներս մտե՛ք, պարոն Ա-
թանասյան:

Ես ներս մտա և խորին հարգանքով ու
ակնածությամբ բռնեցի նրա շնորհալի ձեռքը
և զարմանքս հայտնեցի, թե նա որտեղից
դիպի իմ ազգանունը: Նա, քաղցր ժպտիս և-
րեսին, ասաց:

— Դուք «Հյուսիսափայլի» բաժանորդ եք,
և պարոն Նալբանդյանը մտադիր էր արդեն
ցանկը կազմել և բաժանորդների տնուն և
ազգանունը հրատարակել ամսագրի մեջ, և
երբ պարոն վերակացուն ձեր անունը տվեց,
ես վերհիշեցի այդ:

խոսակցության մեջ հայտնվեց, որ Նոր-
Նախիջևանի դպրոցական Ֆոնդի համար
հնգկահայ վաճառականներից կտակներով
բավականին խոշոր գումարներ են ձգիրվել
և այդ մասին հարկավոր էր թե՛ Վեհափառ
Կաթողիկոսի և թե՛ էջմիածնի Սինդոգի վա-
ղերացումը՝ իր հավատարմություն մասին:

— Այս ամենը ի կատար ածելով,— ավե-
լացրեց Նալբանդյանը,— այժմ դնում եմ
տեսնեմ Տփլիսում փոխարքայի դիվանա-
կան կառավարչին և նույնպես վաղերացու-
մով իմ հավատարմությունը պաշտոնապես
հաստատել տալով, անցնել Պետերբուրգ, իսկ
այնուհետև Լոնդոն, ուր հեշտ կլինի ինչպիսի-
պես նավով Հնդկաստան դիտել և այդ պո-
մարների մասին բունակցություններ սկսել
Կալվաթայի անգլիական փոխարքայի հետ
և նրա միջոցով ստանալ մեր դպրոցապետ-
կան գումարները:

— Պարոն նալրանդյա՛ն, դուք միժ պարտականութիւն եք վերցրել ձեզ վրա, — պատասխանեցի ես և շարունակեցի. — այդ այդպէս էլ թող չիսի, բայց ես խնդրում եմ, որ ձեր գնալը մի քանի ժամով ուշացնեք. ես ընդի երեանցի եմ, ունեմ լավ ընկերներ, որոնք ի սրտե կցանկանային տեսնել ձեզ, խոսել ձեզ հետ, մի կտոր աղ ու հաց ճաշակել։ Ապա թե ո՛չ, իմ այդ ընկերները, որ իմանան, թե դուք եկել եք Երևան, պատահել եք ինձ և ես չեմ փորձել պահել ձեզ, ինձ կբարկոծեն։

— Հայտնեցե՛ք ձեր ընկերներին իմ շնորհակալութիւնը և գոհունակութիւնը, պարոն Աթանասյա՛ն, դեպի ինձ ունեցած այդքան սիրո և հարգանքի համար. բայց անկարող եմ ո՛չ միայն մեկ քանի, այլև մեկ ժամ անգամ հետ մնալ ճանապարհից։

Այս ասելով նալրանդյանը հանեց ճամբրուկից իր «Օշական» բանաստեղծութիւնից

մի օրինակը, մատիտով արձանագրեց վրան, տվեց ինձ և ասաց.

— Ահա՛ իմ հիշատակի անմոռացութեան նվերը ձեր ընկերներին։ Դրանից մեկ օրինակ էլ ոշականցի պարոն Շալուն եմ տվել։

Այդ միջոցին ներս մտավ կառապանը և դարարաղցու բարբառով հայտնեց նալրանդյանին, որ իրերը տեղավորված են կառքի մեջ և ինքը պատրաստ է ճանապարհ ընկնելու։

Այլևս անհնարին էր նալրանդյանին հետ պահել ճանապարհից, Մենք ջերմութեամբ ողջագործեցինք և թափանքիք իրարից. նա Քանաքեռի ճանապարհով գնաց դեպի Տփլիս, իսկ ես՝ դեպի Կոնդ։

Հետագայում ես ինքս ինձ հաճախ եմ մեղադրել՝ թե ինչու և նալրանդյանին գոնե մինչև Քանաքեռ ճանապարհ չգրի, չմտածեցի՝ թե ո՛վ մեռած, ո՛վ կենդանի, մեկ էլ իրար կտեսնե՞նք....





ՄԻՔԱՑՅԵԼ ԵՍԼՐԱՆԴՅԱՆԻ ԺՆՆԴՑԱՆ 125-ԱՄՅԱ ԼՈՐԵԼՅԱՆԸ*

ՄԻՔԱՑՅԵԼ ԵՍԼՐԱՆԴՅԱՆԻ ԺՆՆԴՑԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ ԵՎԻՐՎԱԾ ԶԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Ռեսպուբլիկայի աշխատավորները հանդիսավորությամբ նշեցին հայ ժողովրդի մեծ զավակ, նրա ազատության ու երջանկության համար մղված պայքարի աննկուն մարտիկ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակը:

Հորեկանական տոնակատարությանը մասնակցելու համար եղբայրական ռեսպուբլիկաններից Երևան էին ժամանել գրողներ, գիտնականներ, կուլտուրայի գործիչներ:

Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական թատրոնի դահլիճը, ուր տեղի ունեցավ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոն, լեկո-լեցուն էր: Այստեղ էին հավաքվել մայրաքաղաքի բոլոր խավերի ներկայացուցիչները:

Բեմը տոնականորեն զարդարված է: Նրա խորքից դահլիճին է նայում՝ դափնյա պսակով երիզված, ազատության բոցաշունչ մարտիկի պորտրեն:

Հորեկանական հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ, Կառավարական հորեկանական հանձնաժողովի նախագահ Ա. Քոլինյանը:

Նալբանդյանի կյանքի և գործունեության մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Հայաստանի Սովետական գրողների միության քարտուղար, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու է. Թոփչյանը: Զեկուցողը մանրամասն կանգ առավ Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության վրա:

ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի անունից հանդես եկավ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Ֆեոդոսի Սպենդիարյանը: Այս հանդես եկան Դոնի Ռոստովի քաղաքային Սովետի նախագահի տեղակալ Նիզամանը, եղբայրական Ուկրաինայի աշխատավորների անունից՝ բանաստեղծ Նադիրբեգան, Բելոռուսիայի ներկայացուցիչ Ֆ. Նովիկովան, Ղազախստանի ներկայացուցիչ պրոֆեսոր Մ. Բալականը, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին, Ադրբեյջանի ներկայացուցիչ Մ. Իսկանդարովը և ուրիշներ:

Հանդիսավոր նիստում ողջույնի ճառով հանդես եկան նաև փիլիսոփայական դիտությունների դոկտոր՝ պրոֆեսոր Ի. Մումինովը (Ուզբեկստան), գրող Ի. Շիմկուլը (Հիտվա), Ն. Կորլետյանուն (Մոլդավիա), Լատվիական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Պ. Վալեսկայնը, պատմական գիտությունների թեկնածու Ա. Կալմեետովը (Կիրգիզիա), Թուրքմենական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Գ. Չարիևը, Էստոնական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրի տեղակալ Ա. Նուդիսը:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահի տեղակալ Բ. Մարտիրոսյանը կարգաց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Ռոշումը՝ Միքայել Նալբանդյանի հիշատակը հավերժացնելու միջոցառումների մասին:

Ընթերցվեցին ողջույնի հեռագրեր տաշիկ ժողովրդի, ինչպես նաև ՍՍՌ Կուլտուրայի մինիստր Գ. Ալեքսանդրովի, ՍՍՌ Գիտու-

* Ներկա նյութերը հավաքված են Սովետական Հայաստանում լույս տեսնող թերթերից և ամսագրերից: —ԽՄԷ:

թյունների ակադեմիայի պրեզիդենտ Ա. Նեսմեյանովի, կառավարական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Վ. Լազիսի, ակադեմիկոս Հ. Օրբելու, գրողներ Ա. Սուրկովի, Պ. Տիշինայի, Մ. Շահինյանի և ուրիշ գիտնականների, գրողների, կուլտուրայի և արվեստի գործիչների կողմից:

Ապա նախագահողը հանդիսավոր նիստը հայտարարեց փակված:

Հանդիսավոր մասից հետո տեղի ունեցավ մեծ համերգ, որին մասնակցեցին Երևանի լավագույն կատարողական ուժերը:

ՄԻՔԱՑՆԸ ՆԱԼԲԱՆԴՑԱՆԻ ՀՈՐԾԱՐՁԱՆԻ ՆՇՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՑՈՒՄ.—Մոսկվայի հասարակայնությունը նոյեմբերի 25-ին Շչեք Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակը նրեկոն կազմակերպվել էր Սովետական Միության Կուլտուրայի մինիստրության, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի և ՍՍՌՄ գրողների միության կողմից: Զայկովսկու անվան համերգային դահլիճն էին հավաքվել գրողներ, գիտնականներ, արվեստի և կուլտուրայի խոշոր գործիչներ, ուսանողներ: Մոսկվայի բազմաթիվ աշխատավորներ, Երեկոյին ներկա էին նաև անգլիական գրող Ջեկ Լինդսեյը և հնդկական գրող Ալի Սարդար Ջաֆարին և Բալավանտ Գարբին:

Բեմում, թարմ ծաղիկներով շրջապատված, դրված էր Նալբանդյանի մեծադիր պորտրեն:

Բացման խոսք ասաց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գլխավոր քարտուղար ակադեմիկոս Թոփչիկը:

Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության նվիրված բովանդակալից զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մ. Շահինյանը:

Հանդիսավոր մասից հետո տեղի ունեցավ մեծ համերգ, որին մասնակցում էին ՍՍՌՄ Մեծ թատրոնի արտիստ, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Պ. Լիսիցյանը, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Գ. Գասպարյանը և ուրիշներ: Մոսկվայի թատրոնների դերասանները Նալբանդյանի ստեղծագործություններից արտասանեցին ոտանքին լեզվով «Մանկության օրերը», «Ապոլլոնին», «Ազատություն», «Իտալացի աղջկա երգը» և այլ բանաստեղծություններ:

ՄԻՔԱՑՆԸ ՆԱԼԲԱՆԴՑԱՆԻ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒԾԱՀԱՆԴԵՍ ՄՈՍԿՎԱՑՈՒՄ.—Մոսկվայի Լենինի անվան և մյուս խոշոր գրադարաններում պատրաստվել են Նալբանդյանին նվիրված ցուցահանդեսներ: Միութենական

խոշոր թերթերն ու լամպագրերը բազմաթիվ հոդվածներ են նվիրել մեծ մտածողին:

Մոսկվայում Ստոլեշնիկովյան նորանցքի № 16 տանը, որտեղ ապրել է Միքայել Նալբանդյանը, փակցվել է հուշատախտակ: Հուշատախտակ է փակցվելու նաև Նախկին Լազարյան ճեմարանի պատին, որտեղ աշխատել է Նալբանդյանը:

ՄԻՔԱՑՆԸ ՆԱԼԲԱՆԴՑԱՆԻ ՀՈՐԾԱՐՁԱՆԻ ՀԻՄՆԱԳՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.—Նոյեմբերի 26-ին Երևանում տեղի ունեցավ Միքայել Նալբանդյանի հուշարձանի հիմնադրումը: Այս առթիվ հուշարձանի հիմնադրման վայրում (Նալբանդյան փողոցի վրա, Անասնաբուժական ինստիտուտի մոտ գտնվող պուրակում) կայացավ Երևանի աշխատավորների հանդիսավոր միտինգը: Այնտեղ էին եկել քաղաքի աշխատավորության ներկայացուցիչները՝ գրողներ, գիտնական և արվեստի գործիչներ, բանվորներ և ուսանողներ: Ժամ ուղիղ 5-ին ամբիոն բարձրացան Հայաստանի կառավարության ղեկավարները և հարևան ռեսպուբլիկաներից հորեկյանական ասնի կապակցությամբ Երևան եկած հյուրերը:

Միտինգը բացեց աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային Սովետի գործկոմի նախագահ Բ. Աստվածատրյանը: Խոսք վերցրեց ՍՍՌՄ գրողների միության վարչության ներկայացուցիչ Յու. Լիրեդինսկին: Այնուհետև ելույթ ունեցավ գրող Ստ. Ջորյանը: Բանաստեղծուհի Վ. Զվյագինյանն մեծ խանդավառությամբ ոտանքին արտասանեց Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունն իր թարգմանությամբ: Երևանի դպրոցների ուսուցչության անունից ելույթ ունեցավ Վորոշիլովի անվան դպրոցի դիրեկտոր Վ. Անդրեասյանը:

Քաղաքի տեղի նախագահ Բ. Աստվածատրյանը ձգեց ժապավենը և թարմ ծաղիկների մեջ թաղված գրանիտե հուշաքարի վրայից սահեց կարմիր պատառը: Հուշաքարի հղկած երեսի վրա գրված է.

ԱՅՍՏԵՂ ԴՐՎԵԼՈՒ Է
ՀԱՅ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ-
ԴԵՄՈԿՐԱՏ
Մ Ի Զ Ա Յ Ե Լ Ն Ա Լ Բ Ա Ն Դ Ց Ա Ն Ի
ՀՈՐԾԱՐՁԱՆԸ
1829—1954

ՄԻՔԱՑՆԸ ՆԱԼԲԱՆԴՑԱՆԻ ԳԵՐԵՋՄԱՆԻ ՄՈՍԿՎԱՑՈՒՄ.—Նոյեմբերի 28-ին, ի նշանավորումն Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի, մերձադարյան Մյասնիկյան գյուղն էին

եկել Ռոստովի գրողները և քաղաքի ու շրջակա գյուղերի աշխատավորների բազմաթիվ պատգամավորություններ:

Դոնի բարձրագույն մի քրի վրա, Կամենկա գետի ափի հայկական Ս. Խաչ վանքի պատի մոտ. ուր թաղված է Մ. Նալբանդյանը, տեղի ունեցավ բազմամարդ միտինգ: Միտինգը բաց արեց բանաստեղծ Աշոտ Գառնակերյանը:

Հայ ժողովրդի պանծալի զավակի հիշատակին նվիրված ճառերով հանգես եկան ռոստովցի գրող Վ. Գ. Ֆոմենկոն, Ռոստովի քաղաքի նախագահի տեղակալ Ատամանովը, Ռոստովսկի մաշա գործարանի ինժեներ Վ. Շապոշնիկովը, Ռոստովի համալսարանի դոցենտ Լ. Գրոմովը, Հայաստանի աշխատավորության անունից հուղված ելույթ ունեցան բանաստեղծ Աշոտ Գրաշին և քննադատ Գ. Ստեփանյանը:

Միտինգում ելույթ ունեցավ նաև Ռոստովի № 12 դպրոցի դիրեկտոր Վ. Համբարձումյանը:

Միտինգից հետո Հայաստանի պատգամավորությունը Նալբանդյանի գերեզմանին պատկ դրեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի անունից:

Հայ ժողովրդի մեծ ներկայացուցիչ գերեզմանին պատկներ դրվեցին նաև Հայաստանի գրողների միության, Ռոստովի ՍՄԿՊ քաղկոմի, Ռոստովի գրողների և բազմաթիվ այլ կազմակերպությունների անունից:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԻՇԱՍԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.— Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ Հայկական ՍՍՌ Մինիստրներ Սովետը որոշել է.

1. Կանգնեցնել Միքայել Նալբանդյանի արձանը Երևան քաղաքում:

2. Հանձնարարել Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրությանը և Երևանի քաղաքային Սովետի գործկոմին՝ հայտարարել լավագույն արձանի նախագծի մրցանակարաշխություն և արձանի մրցանակարաշխությանն ընդունված նախագիծը ներկայացնել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետ:

3. Լենինական քաղաքի Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի շենքի առջև կանգնեցնել կիսանդրին:

4. 1955 թվականից սկսել Միքայել Նալբանդյանի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը:

5. 1955 թվականին Միքայել Նալբանդյանի ընտիր երկերի ժողովածուն հրատարակել ռուսերեն:

6. Սահմանել Միքայել Նալբանդյանի անվան երկու լրացուցիչ ասպիրանտական թոշակ, յուրաքանչյուրը ամսական 800-ական ռուբլու շափով և չորս ուսանողական թոշակ՝ յուրաքանչյուրը 400 ռուբլու շափով, այդ թվում,

ա) Մեկ ասպիրանտական և մեկ ուսանողական թոշակ Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանում,

բ) Մեկ ասպիրանտական և մեկ ուսանողական թոշակ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում,

գ) Մեկ ուսանողական թոշակ Երևանի Ա. Ժգանովի անվան պետական մանկավարժական ինստիտուտում,

դ) Մեկ ուսանողական թոշակ Լենինականի Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՑԱՆՔԻՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի առթիվ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրական թանգարանը կազմակերպել է հարուստ ցուցահանգես:

Ցուցադրված նյութերը լուսարանում են մեծ հրապարակախոսի, գրողի և քննադատի կյանքը, հասարակական-քաղաքական գործունեությունը և գրական ու քաղաքական կապերը:

Ներածական բաժնում ցուցադրված են Մ. Նալբանդյանի նախորդների և նրա ժամանակակիցների՝ Խ. Աբովյանի, Պ. Պոռյանի, Ղ. Աղայանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահադիյի, Բաքիու ստեղծագործություններից մի քանիսը և իյուստրացիաներ: Բաժինը պատկերում է գրական այն միջավայրը, որի պայմաններում գործել է Նալբանդյանը:

Ճևուր-Նախիջևանը բաժնում կարելի է տեսնել բազմաթիվ լուսանկարներ, որոնք պատկերում են հեղինակի ծննդավայրը, նրա հարազատներին, Ահա Մ. Նալբանդյանի ծննդյան վկայականը, որը ժամանակի ծանրության տակ գեղեցիկ է: Հետաքրքիր է Եկատերինա կայսրուհու նախիջևանցիներին տված արտոնագիրը:

Ճալալադյանը Մոսկվայում բաժնում ցուցադրված է այն տան նկարը, ուր ապրել է գրողն իր ուսանողական տարիներին. դրա կողքին կախված են Մոսկվայի համալսարանի ուսանողներ Ռայի, Սեչենովի, Պիրոգովի նկարները: Այստեղ կան նաև մի շարք գրքեր Նալբանդյանի գիտողություններով:

Հյուսիսսովետական շրջանը բաժինը ընդգրկում է 1848—1850 թվականները: Այս

րաժնի հետաքրքրական փաստաթղթերից է Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանի ձեռքով կազմված «Հյուսիսափայլ»ի ֆախագիծը: Այստեղ տեղափոխված են Պուշկինից, Էժեն Սյուից, Բերանժից Մ. Նալբանդյանի կատարած լուսամասի վ թարգմանությունները: Ուշագրավ աշխատություն է ն. Արմվյանի «Կերթ Հայաստանի» վեպի մասին Նալբանդյանի հայտնած կարծիքը: Այս լրագրում կառելի է տեսնել նաև Նալբանդյանի Պետերբուրգի համալսարանից ստացած թեկնածուական դիպլոմը և այն վկայականը, որով իրավունք է տրվել նրան ուսուցչական պաշտոն վարելու:

Նալբանդյանի ստեղծագործությունները լրագրում կան իլյուստրացիաներ Քիֆիսից, Օշակտից և այն վայրերից, որտեղ հղել է Նալբանդյանը: Այստեղ է նաև նրա ուղեւորությունների քարտեզը: Բազմաթիվ փաստաթղթեր ցույց են տալիս արտասահմանում ունեցած նրա կապերը և ծանոթությունները: Այս լրագրում ուշադրություն է գրավում Նալբանդյանի օգտագործած ծածկագիրը, ինչպես նաև Բերբերյանի՝ Փարիզից Նալբանդյանին ուղարկած ծածկագիր հեռագիրը:

Նալբանդյանը և ուս պրոպագանդիստները՝ լրագրում այցելություններ տեսնում են Բակունինի, Տուրգենևի համակները Նալբանդյանին և այլն:

Նալբանդյանը Պետրոպոլովյան բերդում լրագրում ցուցադրված են Նալբանդյանի ձեռքարկածն հրամանը, լրագիրը հարգատեններին և բարեկամներին գրած նամակները: Ուշագրավ են նաև Նալբանդյանի դատին վերաբերող գործի անվանաթերթը, «Հազար Փարպեցու թուղթը», «Հեգեյը և նոր ժամանակը», «Ազգային թշվառություն» հոդվածը, որը լույս է տեսել Ստ. Նալբանդյանի ստորագրությամբ «Հյուսիսափայլ»ում 1864 թվականին:

«Ախուր և մահ» լրագրում կան նյութեր Նալբանդյանին կամիչին աքսորելու և նրա մահվան վերաբերյալ: Մի շարք փաստաթղթեր ցույց են տալիս, որ Նալբանդյանի թաղումը վերածվել է մասնաշախան ցույցի: Հուղարկավորությանը մասնակցել է Նոր-Նախիջևանի գրեթե ամբողջ բնակչությունը:

Վերջին՝ «Մեր օրերը» լրագրում ցուցադրված են Նալբանդյանի ստեղծագործությունների լրագրում հրատարակությունները և նրա մասին եղած դրականությունը:

Միջայն Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը նվիրված ցուցահանդեսներ են րացվել նաև Պետական համալսարանում, Երևանի Ա. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում, քաղաքային գրադարանում,

մանկավարժական ինստիտուտում. րագրամթիվ դպրոցներում, ինստիտուտներում և տեխնիկումներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ.— Նշանակալից տարածվի առթիվ ռեսպուբլիկայի կոմպոզիտորները կերտել են մի շարք ստեղծագործություններ: Ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Ա. Տեր-Ղևոնդյանը գրել է «Միջայն» Նալբանդյան խմբերգը, խոսք՝ Լ. Ղուկասյանի: Արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Կ. Հաբարյանը ստեղծագործել է «Ձեռն Նալբանդյանին» խմբերգը, խոսք՝ Վ. Արամյանու:

Երաժշտական ստեղծագործություններ են գրվել նաև մեծ գրողի բանաստեղծությունների տեքստերի հիման վրա:

Մ. Նալբանդյանի «Վազոզ չբին» հայտնի ստանավորի տեքստի հիման վրա օրերս մի երգ է ստեղծագործել կոմպոզիտոր Վ. Արամյանը: Երիտասարդ կոմպոզիտոր է. Հովհաննիսյանը մշակել է Նալբանդյանի «Մանկություն օրեր» հիման վրա ստեղծված ժողովրդական մելոդիան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՋՆԵՐԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ.— Հորելյանական օրերին երիտասարդ նկարիչ Սուրեն Աղիզյանը ավարտել է Միջայն Նալբանդյանի կոմպոզիցիոն մեծ պորտրեն: Նկարիչը մտածողին պատկերել է Պետերբուրգում գտնված ժամանակ՝ իր առանձնասենյակում: Նալբանդյանի ողբունը ղեմքը մտախոհ է ու տխուր. նրա դեմքին արտահայտված է Հայրենիքի ճակատագրի, իր րազմալարչար հայ ժողովրդի ճակատագրի հոգսը: Այդ պորտրեն Աղիզյանի երրորդ աշխատանքն է, որ պատկերում է հայ ժողովրդի մեծ զավակին. առաջինը՝ «Մ. Նալբանդյանը Պետրոպոլովյան բերդում»՝ գիպումային աշխատանքն էր, որ ներկայացրել է Երևանի Գեղարվեստական ինստիտուտի շրջանավարտների գործերի ցուցահանդեսում 1951 թվականին, իսկ երկրորդը՝ «Հանդիպումը», որը վերաբրտագրում է Չեռնիշևսկու և Նալբանդյանի հանդիպումը:

Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի առթիվ դրողի քանդակային մեծ պորտրեն ավարտել է քանդակագործ Սիլվա Վարդանյանը: Պորտրեն պատրաստված է դիպից՝ բնականից ավելի մեծ դիրքով:

Միջայն Նալբանդյանի պորտրեն նկարել է նաև նկարիչ-քանդակագործ է. Քոչարը:

ՊԼԱՆԱՏ-ԲԵՐԹԻԿ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ.— Հայաստանի Պետական հրատարակությունը Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի առթիվ լույս է ըն-

ծայել մասսայական տիրաժող՝ նրա կյանքն ու գործունեությունը լուսարանող պլակատ-թերթիկ, Փաստական հարուստ նյութի և լուսանկարների միջոցով այստեղ ցույց է տրված բոցաշունչ հայրենասերի կյանքի անցած ուղին: Պլակատ-թերթիկում զետեղված են Մ. Նալբանդյանի մեծադիր լուսանկարը, հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի, նրա մերձավոր բարեկամներ Ստ. Նազարյանի, Հարություն Սվաճյանի, Գերցենի, Օգարյովի, Ինչպես նաև Պերճ Պողոջանի, Ղազարոս Աղայանի և ուրիշների լուսանկարները: Կան նաև Մ. Նալբանդյանի կյանքի ու գործունեության հետ կապված վայրերի լուսանկարները, ինչպես նաև մի քանի փաստաթղթերի ու նամակների ֆոտո-օրինակները: Հորձվյանի օրերին լույս տեսավ նաև Մ. Նալբանդյանի գեղանկարչական դիմանկարը, որը կատարել է Ֆկարի Սուրեն Ստեփանյանը:

ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՏ ՄԵՍ ԳՐՈՂ ՄԱՔԱՑՈՒ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆՎԻԴԱՍ ԳՆՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԼԻԱՄԵՏՐԱԺ ՅԻԼՄԻ ՍՑԵՆԱՐ ՍՏԵՂՄԵԼՈՒ ԱՄԱՐ.— Հայ մեծ գրող Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ Հայկական ՍՍՏ Կուլտուրայի մի ֆիստրությունը Մ. Նալբանդյանի կյանքն ու գործունեությունը պատկերող լիամետրաժ գեղարվեստական ֆիլմի սցենարներն ստեղծելու համար հայտարարել է մրցանակաբաշխություն: Առաջին կարգի մրցանակի համար սահմանված է 20.000 ռուբլի, իսկ երկրորդ կարգի համար՝ 15.000 ռուբլի: Սցենարի ներկայացման վերջին ժամկետ է նշանակվել 1955 թվականի ապրիլի 15-ը:

ՄԻՔԱՑՈՒ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՐԽԻՂԸ.— Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի Գրականություն և արվեստի թանգարանում, ամենայն խնամքով, պահվում է Մ. Նալբանդյանի արխիվի մեծ մասը: Այդ արխիվը ձեռք է բերվել սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին և հետագայում հարստացել նոր նյութերով:

Արխիվային նյութերը, որոնք լայնացած են ավելի քան 500 ձեռագրերից, նամակներից, լուսանկարներից, Նալբանդյանի կյանքի ու գործունեության հետ կապված պարբերականներից և այլ փաստաթղթերից՝ լույս են սփռում հայ մեծ գրող դեմոկրատի կյանքի ուղու վրա:

Առանձին հետաքրքրություն են իրենցից ներկայացնում Նալբանդյանի անձնական իրերը, որոնցից մի մասը եղել է նրա սենյակում մահվանից հետո: Ինչպես հայտնի է, Պետրոպոլիսյան ամրոցում երեք տարի փակված մնալուց հետո, 1865 թվականի նո-

յեմբերի վերջերին Նալբանդյանը աքսորվում է Սարատովի նահանգի Կամիշին քաղաք, ուր անց է կացնում իր կյանքի վերջին մի քանի ամիսները (Մ. Նալբանդյանը վախճանվել է 1866 թվականի մարտի 31-ին):

Ահա նրա գրչանի ժամացույցը. երկու կախարիչները դրսի կողմից նկարազարդված են, նրանցից մեկի վրա ներսի կողմից փորագրված է «Միքայել Նալբանդյան 1857 թ.», Ջարդանկարներ ունի նաև կաշվե դրամապահակը:

Նալբանդյանին պատկանող իրերի թվում են երկու կնիք: Դրանցից մեկը պատրաստված է մալախիտից, մյուսը՝ մետաղից: Երկու կնիքներն էլ ունեն միևնույն խորհրդանշանը՝ պատկերված է բու:

Հետաքրքիր է սենյակի չերմալուփը, որի վրա նշումները հայերեն են:

Թանգարանում պահվում են Նալբանդյանի մարտական ատճանակը՝ գնված Լոնդոնում, խոշորացույց մոնոկլը, երկու պատկերներ մարմարյա նուրբ շրջանակներով, փայտյա փոքրիկ մոխրաման՝ բերված Հնդկաստանից, հագուստի խոզանակ, սև փայտից պատրաստված մի փիղ իրեն սեղանի զարդ և այլն:

Հազվագյուտ լուսանկարների թվին են պատկանում Մ. Նալբանդյանի վերջին նկարը, որը վերագրվում է 1865 թվականին, ինչպես նաև Նալբանդյանի Նոր-Նախիջևանի հայրենական տան լուսանկարը, որը վերագրվում է 900-ական թվականներին: Այս տանն է ապրել ու մեծացել Նալբանդյանը: Այստեղ է նա ձեռքակալվել 1862 թվականի հուլիսի 14-ին և տարվել Պետերբուրգ՝ Պետրոպոլիսյան ամրոցը:

Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը Նալբանդյանի կարդացել է Պետրոպոլիսյան ամրոցում՝ 1863 թվականին: Այդ գրքի (առաջին՝ 1858 թվականի հրատարակության) էջերից մեկում նա արել է իր դիտողությունները, իսկ վերջում նշումներ է արել վեպի այն էջերի վերաբերյալ, որոնցից գրաքննադատությունը հանել է դուրի իշխանավորների դեմ ուղղված երգիծական նկարագրությունները:

«Վերք Հայաստանի» այդ օրինակը նույնպես պահվում է թանգարանում:

Այստեղ հետաքրքիր, հուզող նյութեր կան Նալբանդյանի թաղման վերաբերյալ: Ինչպես հայտնի է, Նալբանդյանի վերջին ցանկության համաձայն, եղբայրները նրա աճյունը տեղափոխել են Նոր-Նախիջևանի Նոր-Նախիջևանի նավահանգստում (Դոն գետի վրա) Նալբանդյանի աճյունը դիմավորելու համար հավաքված է ձգել քաղաքի համարյա ամբողջ բնակչությունը:

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՀԱԶՎԱԳՑՈՒՑ ԶՐԱՏԱՐԱՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Այնքանազոր Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի հազվագյուտ գրականության բաժնում պահպանվում է Նալբանդյանի կարևոր աշխատություններից մեկը՝ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գիրքը, որը լույս է տեսել գրողի կենդանության ժամանակ 1862 թվականին Փարիզում, Ալստեդ է դոնվում նաև 1910 թվականին Բոստոնում նույն գրքի վերահրատարակության օրինակը։ Հայ մեծ գրողի գրադարանում պահվող երկերի հազվագյուտ օրինակներից է 1868 թվականին Պետերբուրգում, Բ. Տեր-Գրիգորյանցի տպարանում հրատարակված «Լազար Փարպեցու գրած քույրը» թարգմանությունը և բացատրությունը Մ. Նալբանդյանց գիրքը և 1882 թվականի «Արև» ամսագրի հավելվածը, որտեղ պատկերված է Նալբանդյանի «Կենսագրություն Գեորգյա Արովյանց» հոդվածը։

Հանրային գրադարանի հազվագյուտ գրականության բաժնում կա 1903 թվականին ռեվրոպայի հայ ուսանողության միության ժնեում լույս ընծայած Նալբանդյանի բանաստեղծությունների ժողովածուն՝ «Հայրենիսերի տաղեր» խորագրով։

Ալստեդ է դոնվում նաև Նալբանդյանի կողմից թարգմանված և նրա առաջարկով 1858 թվականին Մոսկվայում լույս տեսած Ռ. Կլեմանսի «Էփեսոսի դր Շեվրյոզը» գրքի միակ օրինակը։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՌՈՒՍՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ.— Մոսկվայում, Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի նախօրյակին ռուսերեն լեզվով լույս է տեսել ՍՍՄԽ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության ինստիտուտի կողմից կազմված Մ. Նալբանդյանի փիլիսոփայական և հասարակական, քաղաքական ընտիր երկերի ժողովածուն։

Նալբանդյանի ընտիր երկերի ժողովածուին կցված է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Բ. Խաչատրյանի առաջնորդող հոդվածը, ուր տրված են Նալբանդյանի կենսագրության հիմնական գծերը և ապա հանգամանորեն լուսաբանված նրա քաղաքական, փիլիսոփայական և պատմական հայացքները։

Հոդվածի ընթերցողը գաղափար է կազմում, թե ի՞նչպիսի դեր է խաղացել Մ. Նալբանդյանը որպես գրականագետ և քննադատ և ի՞նչ ազդեցություն է թողել հայկական հոլոտուրայի զարգացման և հատկապես Պ. Պոռյանի, Ղ. Աղայանի, Գ. Սոմախյանի և 19-րդ դարի հետազոտի հայ գրողների ստեղծագործությունների վրա։

Առաջին անգամ են թարգմանվել ռուսերեն և տեղավորվել ժողովածուում «Հայոց լեզվի սլաոմությունը» աշխատությունը, հատվածներ «Մեռելաճառագույն» վեպից և «Մխիթար Սեբաստացի» և Մխիթարյանները հոգվածից և այլն։

Առաջին անգամ ռուսերեն թարգմանված բանաստեղծություններից ժողովածուում տեղ են գտել «Ապոլլոնի», «Խալալի աղբյուրը», Հարություն Սվաճյանին նվիրած բանաստեղծությունները, Արծալ երկերի հիմնական թարգմանությունը կատարել է Ս. Ա. Գամալովան, բանաստեղծությունները թարգմանել է Վ. Հվյազդիսյանը։

Գրքում տեղ են գտել նաև Նալբանդյանի նամակները։

Գրքի վերջում որպես հավելված կցված են մի քանի փաստաթղթեր, որոնք ընդթափում են Նալբանդյանի կապերը ռուսական դեմոկրատական գործիչների հետ։

Նալբանդյանի այս ժողովածուն հրատարակվել է 10.000 օրինակ տիրաժով, 26 մամուլ ծավալով։

ՌՈՍՏՈՎՈՒՄ ՀԱՐԳՈՒՄ ԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԻՇՆԱՍԿԸ.— Ռոստովում սերնդից սերունդ պատմվում է, թե ի՞նչպիսի կսկիծով ու անաժանցով դիմավորեց հասարակ ժողովուրդը հավատարիմ բարեկամի ու պաշտպանի աճյունը։ Դրանում ամենուրեք ժողովրդի սովորաբար բազմությունները դիմավորում էին սգո թափորը, Ռոստովի և Նախիջևանի հազարավոր բնակիչներ, ռուս թե հայ, իրենց խորին հարգանքն էին արտահայտում ազատության բոցաշուշ մարտիկի հիշատակին։

Նախիջևանում, — տաղնապով հաղորդում էր Ռոստովի պահնորդային բաժինը Մոսկվա, — դադաղը դիմավորեցին արտասովոր շուքով և հարգանքով... ամբողջ քաղաքի բնակչության խուռներամ մասնակցությամբ։

Միքայել Նալբանդյանը թաղվեց Ռոստովից դուրս գտնվող Մ. Խաչ վանքի բակում՝ ներկա Մյասնիկյան բնակավայրի մոտ։ Երկար ժամանակ ցարական պաշտոնյաները թույլ չէին տալիս բնակչությանը հարգելու մարտիկ գրողի հիշատակը։ Միայն 1902 թվականին Նոր-Նախիջևանի հասարակությանը հաջողվեց հուշարձան կանգնեցնել Նալբանդյանի շիրմի վրա։ Գերմանական ժամանակավոր օկուպացիայի միջոցին Նալբանդյանի բրոնզե կիսանդրին, Ռ. Պատկանյանի կիսանդրու հետ, հանվեց և թաքցվեց։

1949 թվականին, Մ. Նալբանդյանի ծննդյան 120-ամյակի օրը, նրա հուշարձանը վերականգնվեց։ Այդ օրը Ռոստովի և Նախի-

ընանի բնակչության բազմամարդ խմբերը՝ գիտնականներ, գրողներ, ուսանողներ, կուլտնտեսականներ նորից եկան մեծ գրող-դեմոկրատի գերեզմանի մոտ՝ հարգանք տալու նրա պայծառ աճյունին և ծաղկեփնջեր դնելու Հայրենիքի արժանավոր զավակի շիրմին։ Ներկայումս Մ. Նալբանդյանի գերեզմանը և նրա ամբողջ շրջապատը հիմնովին բարեփոխված է։

Ռոստովի բնակիչները հետաքրքրությամբ են դիտում այն տունը, որտեղ ապրել է Նալբանդյանը։ Այդ տան պատին հաստատված հուշատախտակի վրա ոսկե տառերով գրված է. «Այս տանը ապրել է հայ գրող, ռեդիկուցիոներ դեմոկրատ Մ. Ղ. Նալբանդյանը։ Մ. 1829 թ.— մեռ. 1866 թ.»։

Սովետական Դոնի աշխատավորությունը հարգում է հիշատակը իրենց մեծ հայրենակցի, որ իսկական հայ հայրենասեր էր և միաժամանակ շերմ սիրով սիրում էր ուսման մեծ ժողովրդին։

Սովետական ժողովուրդների համերաշխ ընտանիքում երբեք չի խամրի Միջայել Նալբանդյանի հիշատակը, որը հանուն ժողովուրդների ազատության, հանուն աշխատավոր մարդկանց շահերի, հանուն ուսման և հայ ժողովուրդների հավերժական բարեկամության, խիզախաբար ընտրեց ազատության փշոտ ուղին, մինչև վերջ անցավ այդ ուղով և որպես մարտիկ ընկավ ռազմի դաշտում՝ ցարական փոնակալության դեմ մղած պայքարում։





Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՆԻՅԱՆ

Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Ց *

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈՋԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

(Լուսավորություն Գողթան)

§ 1

Ճգնավորությունը Հնդկական աշխարհի ծնունդ է: Մի կողմից շորորող դասակարգի մարդիկ և ստրուկներ, նեղված բարձր դասակարգերի զրկանքներից, տանջանքից ու տառապանքից, և մյուս կողմից թուլամորթ բուդդայական ստորին աստիճանի կրոնավորներ, փախչելով գործից ու աշխատանքից, քաշվում էին անտառները՝ ապրելու համար այնտեղ: Երկրի կլիման ոչ միայն հանդուրժում, այլև քաջալիրում էր այս կյանքը: Ո՛չ բնակարան էր պետք և ո՛չ հագուստ. ծառերից քաղված մի կոկոս կամ մի բանան բավական էր սննդի համար:

Երբ քրիստոնեությունը հիմնվեց, բուդդայականների օրինակով Եգիպտոսի տառապյալ քրիստոնյաներն էլ՝ անցան ճգնական կյանքի: Այստեղ էլ երկիրը հանդուրժում էր ճգնությունը՝ իր տաք կլիմայով և ձրի արմավով:

Եգիպտոսի օրինակին հետևեցին մյուս երկրների քրիստոնյաները. բայց կլիմայի անհարմարությունը լքաջալերեց այդ և ճգնավորությունը մնաց շատ սահմանափակ, մինչև որ իսպառ խափանվեց:

Ճգնավորությունը 5-րդ դարի հայոց մեջ էլ անսովոր երևույթ չէր: Զհաշվելով ծուլերին ու թուլամորթներին, նրան էին դիմում ո՛չ միայն ուսումնական ու կրթված հոգևո-

րականներ, այլև աղնվականներ ու իշխաններ: Բայց եթե վերջինները միայն աշխարհային կյանքի ցուրտ արհամարհանքի սլատառում էին հեռանում քաղաքներից, ընդհակառակը, ուսումնատենչ կրոնավորների ճրգնավորությունը ավելի բարձր նպատակ ուներ: Սրանք քաշվում էին լեռներն ու քարայրները այն նպատակով, որ աշխարհային դժբաղմունքներից ազատ մնալով՝ կարողանային իրենց անձը բոլորովին նվիրել աստվածային գիտության, հոգևոր կրթության և կրոնական բազմաթիվ գրքերի մտադյուր ընթերցանության: Ճգնավորական կյանքը նրանց համար այն մարդարանն էր, ուր մարմինը զանազան շարժառնություններով վարժվելով՝ ընդունակ էր դառնում տոկալու ամեն նյութական զրկանքի, նեղության ու տանջանքի: Այս տեսակ ճգնավորների մենակեցությունը ցմահ չէր լինում, այլ այնչափ միայն, որչափ բավական էր մարմինը հաղթահարելու, միտքը ուսմունքով կրթելու և հոգին աղնվացնելու համար: Եվ այս բանը ձեռք բերելուց հետո՝ ճգնավորները թողնում էին քարայրը, մտնում էին դարձյալ աշխարհ, և քարոզությունք ու վարդապետությունք կնքում իրենց արդյունավոր կյանքը:

§ 2

Ահա այսպես էր նաև Մեսրոպի ճգնավորությունը, որի վրա բավական տեղեկություն են տալիս Մեծ ու Փոքր Կորյուն, և հետևա-

* Եստրուկված ամսագրի 1954 թվականի M XI-ից:

բարձր Կարապետ Սասնեցիին: Այս հեղինակներին խոսքով Մեսրոպ շատ խստամբեր ճշգրտակալ կյանք վարեց. նա վարժացրեց իրեն բոլոր տեսակի շարքաշուկայանց. այսպես միաւորութիւն, այսինքն ամեն մարդուց հետո, բոլորովին մենակ ապրելը, լեռնակեցութիւն, դիմանալ քաղցի և ծարաւի, քաղցած ժամանակ ուտել միայն լեռնային խոտեր, փակվել մնալ խաւար ու անլույս տեղերում, խիստ ցուրտ ժամանակ մնալ մերկ, ուրիշ օրեր հագնել միայն խարազն ու ցուրծ, փոխանակ անկողնում քնելու՝ տարածվել չոր հողի վրա, կտրել քունը և գիշերային հանգիստը, և եթե այդ կարիքը հաղթեց մարմնին՝ ոտքի վրա միայն երկար կանգնած մնալով՝ մոռանալ և այլն: Ահա Կորյունի խոսքերը. «Բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց. ամենայն կրթութեամբ հոգեւորացն զանձն տուեալ միաւորութեամբ, լեռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարաւաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեստ և զետնատարած անկողնոց: Եւ բազում անգամ զհեշտական հանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ՝ յառնաւոր տքնութեան՝ ի թօթափել ական վճարէր» (Կորյուն, էջ 7): Գրեթե նուրբ բառերով է նաև Փոքր Կորյունը (էջ 6—7):

Ավելի գեղեցիկ է նկարագրում Սասնեցին, որի խոսքով Մեսրոպ ո՛չ միայն մարդեց իր մարմինը շարքաշուկայամբ, այլև բարձրացրեց իր հոգին կրօնական կրթութիւնամբ, պարպեց միշտ Ս. Գրքի ընթերցանութիւնամբ, սանձեց լեզուն՝ որ ունայն խոսքերից հետո մնա, բերանը քնար դարձաւ, ատամները լար, շրթունքը մատներ, լեզուն կնտնտոց, և հոգին Աստուծու հոգու հետ խառնելով՝ երգեց Սուրբ Երրորդութեան փառքի համար (տե՛ս էջ 33—35):

§ 3

Այսպես Մեսրոպ բավական ժամանակ իրեն մարմնական ու հոգեկան կրթութեան նվիրելուց հետո, երբ զգաց, թե հասավ ցանկալի աստիճանին, այն ժամանակ սկսեց աշակերտներ հավաքել և վարժեցնել նրանց մի կողմից ճգնական կյանքի և մյուս կողմից ավետարանական վարդապետութեան: Բայց այս դպրոցը քաղաքներում կամ վանքերում չէր, այլ ինչպես Կորյունի խոսքերից երեւում է, այն անապատներում և քարայրներում, ուր ճգնում էր Մեսրոպ մինչև այն ժամանակ. «Եւ զայս ամենալն առնէր ոչ սակաւ ժամանակ, և գտեալ ևս զոմանս՝ յինքն յորեցուցանէր աշակերտեալ նմին սովորական աւետարանութեան» (Կորյուն, էջ 7): Այսպես ուրեմն, այս նորեկները ո՛չ միայն մի տե-

սակ ճգնակիցներ էին Մեսրոպին, այլև աշակերտներ, որոնց վրա փորձեց Մեսրոպ առաջին անգամ իր վարդապետական գործունեությունը:

Անանունն այս աշակերտների թիւը քառասուն է դնում. «Եւ երանելին Մեսրոպը ունելով ընդ ինքեան աշակերտեալս անձինս քառասուն խարազնազգեստս և բոկազնացս, տքնելով միշտ աղօթիւք ի լերինս և ի փապարս խնդրելով յԱստուծոյ վասն իրացս այսոցիկ» (էջ 9):

Որչափ էլ որ տաք էր Մեսրոպի սերը զնպի անապատական կյանքը, այնուամենայնիւ նա չէր կարող սառնութեամբ վերաբերվել իր ժողովրդի խաւար ու անկյալ վիճակին: Տեսել էր նա, թե ի՛նչպես այդ ժողովուրդը խոր տգիտութեան և հեթանոսական նախապաշարմունքների մեջ խարխափում էր: Մտածելով ժողովրդի մասին, իր հոգին զայրանում և իր սիրտը բարի նախանձով բորբոքվում էր: Միթե ինքը միայն իր անձի՝ կրթութեամբ պիտի զբաղվեր. փոխանակ իր հոգին միայն կրթելու, ավելի հաճելի գործ կատարած չպիտի՞ լիներ, եթե ամբողջ ժողովրդի հոգին կրթեր. «Զէ՛ որ դարձաւ մի տնկից ավելի է և բովանդակ երկինքը՝ մի հատիկ աստղից» (Սասնեցի, էջ 37—38):

Այսպիսի մտածութեամբ, հոգեկան այսպիսի ներշնչութեամբ, լայն հասարակութեան օգտակար լինելու ցանկութեամբ լցված՝ հրաժեշտ տվեց Մեսրոպ իր լեռներին, իր ճգնական քարայրներին, և իր հետ առնելով իր աշակերտներին ու ընկերներին, Գողթան գավառի բարբարոս ու անկիրթ տեղերն իջավ քարոզութեան համար. «Առեալ այնուհետև երանելոյն զհաւատացեալս իւր, դիմեալ ի շանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան» (Կորյուն, էջ 7):

§ 4

Այստեղ հարց է ծագում, թե ո՛ւր և ո՛ր գավառումն էին այն լեռներն ու քարայրները, որտեղ Մեսրոպ աթոռան ժամանակ ճշգրտական կյանք վարեց: Ըստ Խորենացու, այդ վայրը Գողթն գավառումն էր. «Եւ երթեալ ի գաւառն Գողթան բնակէ, զմիայնակեցութեան վարս ստացեալ» (Խորենացի, Գ, խէ): Սրանից է առնում նաև Ստեփանոս Օրբելյան, որ Մեսրոպի ճգնավայրը համարում է Գողթն գավառը, Սիսական կողմը. «Կամեցաւ Թաքուցանել զինքն ի խոռվարար կենցաղոյս. և առեալ զձե միայնակեցութեան՝ փութայր ի նաւահանգիստն: Եւ եկեալ ի Սիսական կողմն՝ հաճեցաւ բնակիլ ի գեղեցիկ գաւառն Գողթան, և խստամբեր ճգնութեամբ բազում աւուրս առաքինացեալ» (զգ. ԺԴ, էջ 37—38): Բայց ո՛չ Կորյուն, ո՛չ Փարպե-

ցի և ո՛չ էլ Սաանեցիին չեն հիշում Գողթն գավառը՝ իրեն ճգնաժամային Մեսրոպյան Կորյունի այս շատ պարզ վկայությամբ (տե՛ս վերը) Մեսրոպ ճգնական կյանք վարելը վերջացնելուց հետո՝ միայն՝ հավաքեց իր աշակերտներին և իջավ Գողթն գավառը. ուստի պետք է կարծել, թե այստեղ չէր իր ճգնառանքը Բայց Կորյունի խոսքից կարելի է հետևել նաև, որ եթե Մեսրոպի ճգնաժամային Գողթն չէր, նրանից էլ շատ հեռու չէր. այնպես որ, ետրենացու վկայությունը, որ Կորյունի հիշյալ խոսքի վրա միայն հիմնված մի ենթադրություն է, ճշմարտությունից շատ հեռու չէ։

§ 5

Երբ Տրդատի օրով քրիստոնեությունը քարոզվեց, ամեն տեղ անմիջապես շրնդունեցին. ամենից ավելի համակիր եղան այս շարժման Այրարատ գավառն ու արքունիքը. բայց հեռավոր գավառներում առերես միայն ընդունվեց նոր կրոնը։ Հին կրոնի հետքերը, հեթանոսական բազմաթիվ սովորություններ մնացին։ Երբ հունական ազդեցությունը թուլացավ և պարսկական ազդեցությունը զորացավ Հայաստանի վրա, հին կրոնի այդ թաքուն հետքերն էլ հետզհետե ավելի ազատ երևան եկան։ Ոմանք նույնիսկ հայտնի կերպով սկսեցին հետևել նախկին հեթանոսական պաշտամունքին։ Պատմագիրների միաբան վկայությամբ, այս վիճակումն էին գտնվում հատկապես Հայաստանի Գողթան և Սյունյաց գավառները. «Ի նուագլխի թագաւորութեանն Հայոց համարձակեցաւ ամենայն ոք ըստ իւր բարուց ընթանալ, որպէս և աստ. զի աղանդն հեթանոսական դեռ ևս զօղեալ կայր ուրեք ուրեք ի գաւառն Սիւսական և ի Գողթն, այժմ համարձակեալ ելինցուցին... Ժանեալ զկրկին երեւալ աղանդն կռապաշտութեան» (Օրբելյան, ԺԴ)։ Նույնպես ըստ ետրենացու (Գ, խէ), «և որ ի նմա զօղեալ աղանդն հեթանոսական, թագուցեալ յաւուրսն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունեաց»։ «Քանզի մնացեալ արմատ դառնութեան հեթանոսական աղանդոյն՝ ի ժամանակի անիշխանութեանն ի վեր երևեալ՝ ի բնորումս տարածեցաւ» (Խորենացի, Գ, կ)։

1. Չամչյան («Պատմութիւն Հայոց», Ա, էջ 285) կարծում է, թե Գողթն գավառի այս աղանդը նույն էր բոքորիտոնների աղանդի հետ, և թե երկուսն էլ արեորդիներն էին, այն է խառնաբոլ օտարազգի և օչ հայ հեթանոսների, զրադաշտական հավատալիքներիով ալլաիստիկա՞ն։

§ 6

Մեսրոպ իր աշակերտների հետ դիմելով Գողթն գավառը, խնդույն սկսում է քարոզչության, նպատակ ունենալով շնչել հեթանոսության վերքնձուլած բողոքները և քրիստոնեության լույսը տարածել ամբողջ գավառում։ Մեսրոպին ընդառաջ է գալիս Գողթն գավառի իշխանը և սիրալիք ընդունելություն ցույց տալիս նրան։ Կորյուն այս իշխանի անունը թեև հայտնապես չի հիշում այստեղ, բայց մի քանի էջ հետո, Մեսրոպի երկրորդ քարոզչության ժամանակ նշանակում է Շաբար (էջ 14)։ Խորենացին (Գ, խէ) սրա տեղում Շաբիր. «աղանդն... զաթն երարձ օգնականութեամբ իշխանի գավառին, որում անուն էր Շաբիր»։ Օրբելյան ճանաչում է Շաբիրա անունով. «Օգնութեամբ բարեպաշտ իշխանին Սիւնեաց վաղինակալ... նմանապէս և զԳողթն սրբեալ ի ձեռն իշխանին իւրեանց Շաբիրայի» (Օրբելյան, ԺԴ). և վերջապես Փոքր Կորյուն դնում է Շամիր. «Երթալ ի Գողթն, որում ընդ առաջ լինէր իշխանն Շամիր»։ Այս չորս ձևերից (Շաբար, Շաբիր, Շաբիրա, Շամիր) լավագույնն է առաջինը, որ տալիս է Կորյունը, ըստ որում ծագում է ասորերեն šabbar բառից և միևնույն է շաբարթ օրվա անվան հետ (հմտ. Ուրբաթ և Կիրակի օրվա անունները՝ Սաև իբրև անձի անուն)։

Շաբար իշխանի մասին գովեստով են խոսում Մեծ և Փոքր Կորյուն, անվանելով նրան երկյուղած, աստվածասեր, հավատարիմ և բարեպաշտ մարդ. այսպես՝ Կորյուն, էջ 7, «Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այլ երկյուղած և աստուածասէր, ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի», և էջ 14՝ «հաւասարութեամբն բարեպաշտին Շաբարայ։ Նույնպես Փոքր Կորյուն, էջ 7՝ «Իշխանն Շամիր», և սիրով ընդունէր որպէս ղեառայ Աստուծոյ բարձրելոյ. և բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտական հաւատոցն ի Քրիստոս»։

Ահա այս իշխանը իր ձեռքից եկած օգնությունը չի խնայում Մեսրոպին։ Մեսրոպ էլ իր բոլոր աշակերտներին ցրվելով գավառում և անդուլ անդադար քարոզություններ անելով, կարճ ժամանակում հաջողում է հասնել իր ցանկալի նպատակին — վերանում են հեթանոսական սովորությունները, շնչվում է կռապաշտական աղանդը և ամբողջ գավառը նորից քրիստոնեական լծին է հնազանդվում։ Դիմել երանելույն վաղվադակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զհաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. զերեւալ դամենսնան ի հայրենեաց աւանդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի

հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր» (Կորյուն, էջ 7)։

Մեսրոպի ձեռքով կատարված այս քարոզութիւնը պատմագիրները նմանեցնում են Գրիգոր Լուսավորչի քարոզութիւն։ և այն հրաշալիքներն ու դէերի փախուստը, որ Ագաթանգեղոսը տալիս է Լուսավորչին, այս պատմագիրներն էլ տալիս են Մեսրոպին։ մինչև անգամ ոմանք կոչում են նրան «երկրորդ Լուսավորիչ» (այսպէս օրինակ՝ Հովհաննէս Իմաստասեր, էջ 66 և Հայսմավորքը)։ Ըստ Կորյունի՝ «Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ բնակչաց գաւառին՝ նշանք մեծամեծք երևէին, կերպակերպ նմանութեամբ դիպցն փախստական լինելով։ անկանէին ի կողմանս Մարաց» (Կորյուն, էջ 7)։— «Ուր նշանք աստուածայինք լինէին՝ որպէս առ սրբովն Գրիգորիւ, հալածական լիալ դէք, մարմնաւոր տեսեալմամբ անկանէին ի կողմանս Մարաց» (Խորենացի, Գ, խէ)։— «Յորոյ ի ձեռն մեծամեծ սքանչելիք երևեալ, դիպց կերպ ի կերպ լինելով՝ զաղաղակ բարձեալ յամենեցուն լսելիս հնչեցուցանէին զհալածանս իւրեանց, անկանելով ի կողմանս Մարաց» (Փոքր Կորյուն, էջ 8)։— Քրիստոնեական հասկացողութեամբ դէերի հալածական փախուստը շատ սովորական տեղիք է. իսկ հայոց մեծ այդ հալածական դէերը փախչում էին կա՛մ Կովկաս և կա՛մ Մարաստան (հմտ. Ագաթանգեղոս, ճը)։

Մեսրոպի գործած այս հրաշքները, ասում է Փոքր Կորյունը (էջ 8), ազդում էին աշակերտների վրա, որոնք ամէլի էին լսում իրենց ուսուցչի պատմութիւնները։ «Վասն որոյ առանել ունկնդիր լինէին աշակերտեալքն հոգեկրօն վարդապետին, վասն հաւատոց և վարուց որ նոցա աւանդեցաւ ի սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի գրովք սրբովք»։

Գեղեցիկ մտածութիւններ ունի այստեղ Լեոն՝ Գողթնի քարոզութեան առթիւ։ «Եւ որից քրիստոնեութիւնը հեկմում էր հրամանի, իշխող գաւազանի վրա։ Կրկնվում են Տրդատի ժամանակները... Այդ դէերը, ինչպէս և Գրիգոր Լուսավորչի ժամանակ, հեթանոսութեան պաշտոնյաներն ու կողմնակիցներն էին, որոնք տեղի տվին բռնութեան, ուժին և փախան» (Լեո, ՍԼ. Մեսրոք, էջ 156—157)։ Լեոն ենթադրում է որեմն, որ Մեսրոպը՝ Շաքաթ իշխանի օգնութեամբ՝ նյութական հալածանք է հանել հեթանոսների դեմ, բայց ինքն է ընդունում, որ այդ հալածանքը հակամալից էր, և ավելացնում է. «Հաղթութիւնը դառն տրամութիւն էր նրա համար. հաղթողը նուրբիսկ լաց էր լինում և ասում. Տրամութիւն է ինձ և իմ սրտի ցավերը անպակաս են իմ եղբայրների և ազգականների համար։ Ո՞վ գիտն, գուցէ մի քանզված մեհ-

յան կամ մի արյունաթաթախ դիակ փորփորում էր նրա լուսավոր միտքը և տանջում նրան իբրև լուռ, արյունոտ հարցեր. ինչո՞ւ այս անգթութիւնը, ինչո՞ւ այս հարկադրանքը, մի՞թէ մարդը մեղավոր է, որ պաշտում է իր լավ հասկացածը։— Եվ ահա Լեոն այստեղ է դնում գրերի գլուտի զաղափարի առաջին սաղմերը. գի՛ր տուր մարդուն, գի՛րք տուր տգետին և դա կլինի սրից ու թրից ավելի հուժկու մի միջոց՝ գիտութիւն և կրթութիւն տարածելու համար։

§ 7

Գողթն գավառը քարոզելուց և լուսավորելուց հետո, Մեսրոպ, ըստ Խորենացու, անցել է նաև Սյունյաց աշխարհը, որ գրեթէ նույն դրութեան մեջ էր գտնվում ինչ Գողթնը։ Այստեղ էլ Մեսրոպ կատարել է նույնպիսի քարոզութիւններ և լուսավորել է երկիրը՝ Վաղինակ իշխանի օգնութեամբ. «Եւ ոչ ինչ յայնցանէ պակաս արարեալ գտանի և Սիւնեաց աշխարհին, օգնականութեամբ նորին իշխանին, որ կոչէր Վաղինակ» (Խորենացի, Գ, խէ)։

Բայց այս քարոզութիւնը և լուսավորութիւնը, որ չգիտեմ Կորյունը և որ առանց քննութեան ընդունել են մեր նոր պատմագետներից շատերը, գոյութիւն չունի։ Այս սխալը կատարել է Խորենացին կա՛մ թյուրիմացութեամբ Կորյունի պատմածը սխալ հասկանալով և կա՛մ դիտմամբ աղճատելով այն։ Կորյունն արդարև գիտէ Սյունյաց աշխարհի քարոզութիւնը Գողթն գավառի քարոզութիւնից անմիջապէս հետո, դարձալ Մեսրոպի ձեռքով, բայց այս բանը դնում է ո՛չ թէ Մեսրոպի առաջին քարոզչական գործունեութեան ժամանակ, այլ գրերի գլուտից հետո, երկրորդ քարոզչական գործունեութեան ժամանակ. այնպէս որ թէև Գողթն գավառը բախտ ունեցավ երկու անգամ վաղելու Մեսրոպի քարոզութիւնը, սակայն նրա սահմանակից Սյունյաց գավառը՝ միայն մեկ անգամ (հմտ. Կորյուն, էջ 14)։ Կորյուն (էջ 14—20) շատ մանրամասն կերպով պատմում է Մեսրոպի երկրորդ քարոզչական գործունեութիւնը. մյուս պատմագիրները աշխատում են ըստ կարելիւնի համառոտել այն. օրինակ Փարպեցին և Փոքր Կորյունը ոչինչ չեն ասում այս ընդարձակ ճանապարհորդութեան մասին. Փարպեցին նուրբիսկ չի հիշում Վրաց և Աղվանից լուսավորութիւնը. իսկ Խորենացին նրանց մի մասը կործատելով՝ կազմում է իր Կ գլուխը, Վրաց և Աղվանից լուսավորութիւնն էլ, որ նույնպէս երկրորդ քարոզչական շրջանին է պատկանում, մյուսներից բաժանելով՝ դնում է առանձին գլխով (ՄԳ)։ Բայց պետք է նկատել,

որ Սյունյաց լուսավորությունը չի գտնվում հորենացու և գլխում, մինչդեռ Գողթն գավառի երկրորդ քարոզությունը կա. ուստի և պետք է ասել, թե Սյունյաց քարոզությունը միայն տեղափոխություն է կրած հորենացու մոտ՝ փոխադրվելով նրա ել գլուխը:

Սակայն Օրբելյանը, որ միջոց չունեի պատմագիտների տարբերությունները ճշտելու, նկատելով, որ Սյունյաց մի լուսավորություն կա հորենացու մոտ առաջին քարոզչական գործունեության ժամանակ, նույնպես Կորյունի մոտ երկրորդ քարոզչության ժամանակ, հետևեցում է, թե Սյունիքն էլ քախտ է ունեցել երկու անգամ լուսավորություն վայելելու. Ռատի և միջին ճանապարհ բռնելով, պատմում է նախ (գլ. ԺԳ)՝ առաջին քարոզությունը Մեսրոպի ձեռքով, և երկրորդ (գլ. ԺԵ)՝ երկրորդ քարոզությունը, բայց վերջինի մեջ ամեն դեռ տալով Մեսրոպի աշակերտ Անանիա եպիսկոպոսին, Ավելի ծանր մի փոփոխություն, որ Օրբելյանը գիտակցաբար մտցրած պիտի լինի, այն է, որ Գողթն գավառում հիշատակված հրաշագործություններն ու դևերի փախուստը գնում է իբր պատահած Սյունյաց գավառում. և այս անշուշտ իր բնորոշ նյութին և իր հայրենի գավառին մի քիչ ավելի նշանակություն տալու համար: Ահավասիկ իր պատմածը. «Ճուղից և գլրկին լուսաւորութիւն այսմ աշխարհի ի ձեռն սուրբ և յոգնեբանեալ առն Մաշտոցի՝ Մեսրոպ կոչեցելոյ. ... և կսեալ ի քարոզութիւն՝ մեծամեծ և ահագին նշանօք ոչ ինչ ընդհատ քան զսրբոյն Գրիգորի, ի հաւատս անձն զաշխարհս Սիսական հրամանաւ և օգնութեամբ բարեպաշտ իշխանին Սիւնեաց Վաղինակայ, սրբել զկոսապաշտութիւնն և խորտակել զկոտս թաքուցեալս: Նմանապէս և զԳողթն սրբեալ ի ձեռն իշխանին իւրեանց Եսայի: Եւ այնքան հալածեաց զբազմութիւն գիւացն, որք մարմնաւոր տեսեալս իբր զծովս ծառացեալ՝ գունդ գունդ բարձրացեալ վայել և աղաղակաւ գնային փախստեալ. և անցեալ ընդ Երասխ՝ անկանէին ի կողմն Մարաց» (Օրբելյան, ԺԵ):

§ 8

Այստեղ պետք է մի ակնարկ գցել հայոց այն ժամանակվա, եթե կարելի է այսպես ասել, գրական վիճակի վրա: Հայերը չունենալով սեփական գիր, չունեին հետեւաբար նաև սեփական գրականություն: Բայց այնպիսի մեծ և բազմաժողովուրդ մի տեղություն, ինչպես էր այն ժամանակ Հայաստանը, որ ունի պաշտոնական բազմաթիվ հարաբերություններ պարսից և հունաց հետ, մյուս կողմից քրիստոնեական ընդլործակ

քարոզչություն ո՛չ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում, պետք էր, որ մի միջոց գտնեի իր այդ պետքերը լրացնելու համար: Այս միջոցը գտել էին հայերը, հարևան երեք մեծ ազգերի, այն է պարսից, հունաց և ասորից լեզուները փոխ առնելով գրականության մեջ: Խոսակցության մեջ հայերը միշտ գործ էին ածում իրենց բնիկ լեզուն (հայերենը). բայց երբ հարկ էր լինում նույն խոսակցությունը կամ որևէ բան գրավոր հաղորդելու, անմիջապես դիմում էին այդ երեք լեզուներից մեկին: Ուրիշ խոսքով՝ հայոց բանավոր գրականությունը հայերեն էր, իսկ գրավոր գրականությունը՝ պարսկերեն, հունարեն կամ ասորերեն:

Արանցից առաջինը շատ հին ժամանակներից սկսած գործածական էր Հայաստանում, ասորերենը քրիստոնեության հետ մտավ Հայաստան, իսկ հունարեն լեզուն մուտք էր գտել մեր երկրը՝ քրիստոնեությունից էլ առաջ, Տիգրան Մեծի ժամանակից: Այս հունասեր թագավորը ո՛չ միայն իր պալատում մտցրել էր հունարենի ուսումը, այլև հասարակության համար մատչելի էր դարձրել այն: Երբ Տիգրանակերտը պաշարվեց հռոմայեցիներից, հույն զորասանները ներկայացումներ էին տալիս թագաւոր: Տիգրանի որդին՝ Արտավազդը, այնքան առաջ էր գնացել հունարենի ուսման մեջ, որ հունարեն ողբերգություններ էր գրել: Տիգրանի և նրա հաջորդ բազմաթիվ հայ թագավորների գրամները կրում են հունարեն վերտառություն. այսպես օրինակ՝ Արտավազդի, Զարեհի, Երատույի, Սանատրուկի, Ռոմի, Գոտարզի, Վաղարշի և ուրիշների գրամները: Խոսքով Ա. ի հիմնած սահմանաքերերը, ըստ հորենացու, հունարեն լեզվով էին. Տրդատի հիմնած հովանոցը Գառնիում կրում էր հունարեն արձանագրություն: Ըստ Զենոնի՝ Արձան քրմապետի արձանագրությունը Տարոնում՝ հունարեն և ասորերեն լեզուներով էր, ինչպես որ Ս. Կարապետի գերեզմանի արձանագրությունն էլ ասորերեն էր: Սեբեոսի արձանագրության թևագիրը, որ իբր թե Ագաթանգեղոսը գրել էր Տրդատի պալատի սյուների վրա, հունարեն էր: Վերջապես հունարեն է շատ ավելի հետին ժամանակից՝ Ներսես Մինոզի արձանագրությունը՝ Զվարթնոցում:

Այն ժամանակվա հայոց վիճակը կարելի է համեմատել ճիշտ արդի քրդերի, լազերի, չերքեսների և ուրիշ անգրագետ ազգերի վիճակի հետ: Սրանք, մինչև սովետական շրջանը, թեև ունեին հարուստ բանավոր գրականություն, բայց սեփական գիր չունենալով, երբ պետք ունենալին իրենց միտքը գրավոր հաղորդելու, դիմում էին այս կամ այն հարևան լեզվին: Այսպես՝ քրդերը

պարսկերենի կամ թյուրքերենի, լազերը՝ թյուրքերենի, չերքեզները՝ վրացերենի, թյուրքերենի կամ երբեմն էլ ռուսերենի և այլն, կրոնական քարոզության համար քուրդ, լազ կամ չերքեզ կրոնավորները՝ նախապես սովորում էին արաբերեն և այս լեզվին տիրապետելուց հետո՝ ժողովրդի առաջ կարգում էին Ղուրանը արաբերեն լեզվով և բացատրում քուրդը քրդերեն, լազը լազերեն, չերքեզը չերքեզերեն և այլն:

Ընդոտ այս վիճակումն էինք նաև մենք հայերս այն ժամանակ, Պարսկերեն և հունարեն լեզուները, բայց անշուշտ մանավանդ պարսկերենը, ընդունված էին պաշտոնական թղթերի մեջ, ինչպես կավածագրեր, դաշնագրեր, պայմանագրեր և այլն. հմմտ. հորենացի, Ա, գ. Շեանզի գտանիք... և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ դիւղից և գաւառաց ես և խրաքանչիւր տաճց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանիք անբաւ զրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պալատութիւնս, Պարսկերենը և հունարենը ընդունված էին անշուշտ նաև քաղաքական հարաբերութեանց մեջ, այնպես որ հայոց թագավորից պարսից թագավորին գրված թղթերը պիտի գրվեին պարսկերեն, իսկ հունաց կայսեր գրվածները՝ հունարեն, Ըստ Փարպեցու (էջ 24), հոսսրով Գ. և Վռամշապուհ թագավորների ժամանակ՝ պալատական դիվանից դուրս եկած արքունի վճիռներն ու հրովարտականքն էլ գրվում էին հունարեն կամ ասորերեն, Վասն դի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորին Հայոց՝ արքունի դպիրքն, զվճողոցն և զհրովարտակացնս:

Քրիստոնեական քարոզության համար ընդունված լեզուներն էին հունարեն և ասորերեն, Դեռ 4-րդ դարի սկզբից, երբ Լուսավորչի հետ Հայաստան թափվեցին հույն և ասորի կրոնավորների խմբերը, սրանց հետ ընդունվեց նաև այդ երկու լեզուների գործածությունը: Սկզբում անշուշտ այդ կրոնավորները իրենց անիմանալի լեզվով էին կարգում ավետարանը, աղոթքներ էին ասում և քարոզում հայ ժողովրդին, որ իհարկե ոչինչ չէր հասկանում: Բայց ժամանակ անցնելով ձեռք փոխվեց. ասորի կրոնավորները հայերեն էլ սովորեցին ու թեև ավետարանը և աղոթքները ասորերեն էին կարգում, բայց միևնույն ժամանակ նրանց բացատրությունը տալիս էին

հայերեն: Սրա համեմատ նաև հույն կրոնավորները Ավելի բազմաթիվ էին ասորերենով ու հունարենով կրթված հայ կրոնավորները. Եղեասիայի և Բյուզանդիոնի դպրոցները բաց էին հայ երիտասարդների առաջ, որոնք երկար ժամանակ պարապելով այդ դպրոցներում, ձեռք էին բերում հարկավոր պաշարը և վերադառնում Հայաստան՝ նույն ձևով վարդապետելու Բացի սրանից, բուն իսկ Հայաստանում կային հունական և ասորական դպրոցներ, որոնց սկզբնավորությունը քրիստոնեության մուտքից հետո է: Այսպիսի դպրոց բաց արեց նախ Տրդատ թագավորը (ըստ Ագաթ. 626). «[Տրդատ] ժողովեաց զբազմութիւն մանկաւորսն և զնոսա յերկուս բաժանել, զմասնս յասորի դպրութիւն կարգեալ և զմասնս ի հելլէնս: Նույն տեսակ դպրոցների բացման զարկ տվեց նաև Ներսես Մեծը (հմմտ. Բուդանդ, Դ, գ):

Ահա այս դպրոցներն ավարտող հունագետ կամ ասորագետ հայ քարոզիչներն էին, որ կրում էին թարգմանիչ տիտղոսը:

§ 9

Սկզբներում, թեև թե՛ հունարեն և թե՛ ասորերեն լեզուները հավասարապես ընդունված էին հայոց եկեղեցիներում, բայց սպասելի էր, որ հունարենի գործածությունը հետզհետե ավելի աճելով՝ վաներ ասորերենը, ի նկատի ունենալով 1) հայոց և հունաց ավելի սերտ հարաբերությունը, 2) Կեսարիայի գերիշխանությունը հայոց կաթողիկոսի հանդեպ, 3) հույն կուլտուրայի բարձրությունը համեմատած ասորականի հետ, Բայց քաղաքական հանգամանքները այլ կերպ դասավորեցին իրերը: Պարսից տերությունը հունաց վրա հաղթող հանդիսանալով՝ իր ազդեցության տակ առավ Հայաստանի մեծ մասը. և վախենալով, որ հայերը հույների հետ սերտ հարաբերություն մի հեռանա իրանից և հունաց միանան, աշխատեց որքան կարելի էր ընդհատել այդ հարաբերությունները: Որքան էլ որ պարսից տերությունը հակառակ լինեք քրիստոնեության, այնուամենայնիվ ստիպված էր ակամա հաշտվել երևույթի հետ, քանի որ այնպես խոր հաստատված էր Հայաստանում և մյուս երկրներում: Բայց նա կարող էր հունարենը ըստ կարելիության արգելել և թեև հայերը պետք ունեին քրիստոնեական մի լեզվի, կարող էին դիմել ասորերենին, Ասորիները, թեև քրիստոնյա, բայց դավանական պատճառներով մոտիկ

չէին հուլներին, հակված էին պարսիկներին և մտել էին պարսից պետության թևարկության տակ: 435 թվականից հետո, երբ ասորիները նստորակալ հավանանքը ընդունելու պատճառով՝ ամրոցը ինքն զուրկ վտարվեցին իրենց երկրից (Ասորիքից)՝ հուլներին ձեռքով, Պարսկաստանն էր, որ իր խնամակալության տակ առավ նրանց և ազատ իրավունք տվեց իր տերության բոլոր սահմաններում տարածվելու: Ասորիներին ազդեցությունը մեծ եղավ պարսիկների վրա. արամեական այրուքներն է, որ ձևափոխվելով դարձավ պահլավական այրուքներ. ասորերեն շատ բառեր մտան պարսից լեզվի մեջ, այնպես որ այս վերջինները հասան վերջապես այն տարրերնակ դրության, որ պահլավերեն էին գրում, բայց ասորերեն էին կարդում:

Ահա այս հանգամանքների բերմամբ, հունարենը արգելվեց Հայաստանում, իսկ ասորերենին դարձ տրվեց. և հայերին իրավունք տրվեց ազատ օգտվել ասորի լեզվից. «Եւ զորս միանգամ գիրս գտանէր [Մեհրութան]՝ այրէր, և հրաման տայր մի՝ ուսանել զպարսկիւն յունարէն, այլ պարսիկ. և մի՝ ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել, այսպիսի ինչ պատճառ, զի ամենեւին մի՝ լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ. այլ ճշմարիտ՝ խափանել զգրիստոնէութեան ուսումն: Զի յայնժամ գիր պարսկեան Հայոց չև ևս էր լեալ, և յունականան վարէին եկեղեցւոյ կարգը» (Խորենացի, Գ, լզ):— «Գտանէ զՄեծն Սահակ թարգմանութեան պարապել յասորւոյն՝ յոչ լինելոյ յունի: Քանզի նախ ի Մեհրութանայ այրեալ լինէին՝ ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել զպարսկիւն ումեք յիրեանց մասինն, այլ միայն ասորի» (Խորենացի, Գ, ծղ): Այնպես որ վերջապես ասորի լեզուն ընդունվեց հայ եկեղեցիներում՝ իբրև կրոնական ծիսական լեզու. «Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս» (Փարպեցի, էջ 36):

Պետք է նկատել սակայն, որ հիշյալ դրության մեջ գտնվում էր միայն պարսկական գերիշխանության տակ գտնված Հայաստանը. իսկ Արևմտյան Հայաստանը, որ գրտնրվում էր հունական տիրապետության տակ, ստիպված էր վարվել հունարենով. «Բայց ի

յունաց մասէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան՝ վիճակեալ յաթոռն Կեսարու, վարել յունական դպրութեամբ և ոչ ասորւով» (Խորենացի, Գ, ծղ):

Բայց ինչքան էլ որ տարածված լիներ հունարենը կամ ասորերենը, դարձյալ անհնարին էր, որ կարողանար լրացնել ժողովրդի պահանջները. ինչքան էլ որ շատ լինեին լեզվագետ կրոնավորները, այնուամենայնիվ չէին կարող լցնել բազմաթիվ գավառների, քաղաքների և գյուղերի մեջ վրիտացող եկեղեցիներն ու վանքերը: Առանձնական ընթերցանության համար էլ ամենեւին պետք չէր գա ասորերենը. կամ հունարենը. հետևաբար բոլոր հասարակ ժողովուրդը գուրկ էր մնում հոգևոր կրթությունից և առհասարակ գրքից: Կար և երրորդ ցավալի մի կետ. այդ այն երկար ճանապարհորդությունը, անթիվ դրկանքները, բազմաթիվ ծախսերն ու մտավոր շարժարանքն էին, որ հայ երիտասարդները պարտավոր էին կրել զանազան հեռավոր քաղաքներում դեղերելով՝ ասորերենի նման դժվար մի լեզվի ընտելանալու համար. «Քանզի հոգացեալ յարածամ տրտմէր երանելի այրն Մաշթոց՝ տեսանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս. որք բազում թողակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեալ դեղերմամբ մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան» (Փարպեցի, էջ 35):

Այսպիսով եկեղեցիները գուրկ էին մնում կրոնավորներից, կամ առ առավելն ունենում էին այնպիսի քարոցիչներ, որոնք թեև կարող էին կարգաւ ասորերեն ավետարանը, բայց հասկանալ ու թարգմանել չգիտեին: «Յորմէ (յասորերէնէ) ոչինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդն այսպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորւոյ» (Փարպեցի, էջ 36): Հայ ժողովուրդն այսպիսով գտնվում էր շատ ողորմելի դրության մեջ. նա դիմում էր եկեղեցի և համար ու անշշունչ լսում էր ասորերեն ընթերցվածները, որոնցից ոչինչ չէր հասկանում: Ժամերգությունը դարձել էր ձևական մի բան, արտաքին պաշտոնական աննյութ ու աննպատակ ձևականություն, որից ոչ միայն ժողովուրդն էր դժգոհ, այլև քարոզիչ պաշտոնյաները. «Ասորի մեծաշան և անօգուտ ուսմամբն աշխատեալք յոխորտ. յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք զնային

յնկեղեցւոյն. և ուսուցիչքն հանելով յոգսոց և հառաչելով՝ զզջանալին զսնոտի շանն իւրեանց, յորում ոչ զոք յուսումնասէր՝ ժողովելոցն տեսանէին օգտեալս ի վարդապետութենէ հոգեւոր խրատուցն, որ է կերակուր և պարարումն իմաստնախնդիր անձանց» (Փարպեցի, էջ 44):

§ 10

Մեսրոպ՝ իրեն ընթերցող և թարգմանիչ, իր քարոզութեան միջոցին զգաց ու տեսավ բոլոր այս նեղութիւնները, որ կրում էին թե՛ նկեղեցականները և թե՛ ժողովուրդը: Ուր որ ինքը կար, գիրք կ'աւանդէր ստանում, անիմաստ ձայները հոգի էին առնում: Նա ո՛չ միայն կարգում էր անձանոթ լեզուն, այլև թարգմանում ու ժողովրդի սրտին մոտիկ լեզվով մեկնում, բացատրում: Իսկ ուր ինքը չկար, լսվում էր միայն մի անձանոթ զլլլոց և ուրիշ ոչինչ: Իր ժողովրդասեր ու հայրենասեր սիրտը համակվեց խորին վրշտով. գիրքն ու ցերեկ իր մտածմունքն այն էր, թե ի՛նչպես կարող էր դարձան տանել այս անտանելի կացութեան: Բայց Մեսրոպի մտատանջութիւնը ավելի հեռում էլ էր զնում. ո՛ր պիտի տաներ օտար լեզուների այս տիրապետութիւնը. երկիրը արդեն պառակտված, ժողովուրդը երկու օտար տիրապետութիւնների մեջ բաժանված, թագավորութիւնը կործանման անդունդին մոտիկ, ի՛նչը պիտի կարողանար փրկել ու պահպանել ազգն ու ժողովուրդը իսպառնաշինջ լինելուց: Եվ այսպես՝ տրտում հոգսերով պաշարված և խորհրդածութեանց ծփանքով տարակուսած՝ որոնում էր փրկական ելքը: Եվ ահա այդ մտածմունքների և տարակուսանքների ժամանակ, ծագեց իր մտքում փրկարար լույսը, հայերեն գրերը գտնելու և գրականութիւն ստեղծելու գաղափարը: Նրանով պիտի փրկեր ազգութիւնը կորստից: Եւ ի վարդապետել երանելուն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթերցող, ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ ի ժողովրդոցն լինէր՝ յաղազս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ եղ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուին, և արկեալ զանձն ի շանս, պէսաբէս փորձիւք տաժանէր» (Խորենացի, Գ, իւն):

«Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր՝ զհամաշխարհականս սփոփելով. և առաւել յաղօթս մշտնջենամուռնչս, և բազկատարած պաղատանս առ Աստուած, և արտասուս անդադարս. զմտաւ ածելով զառաքելականն, և ասէր հոգալով. «Տրտմութիւն է ինձ և անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց և ազգականաց»: Եւ այնպէս տրտմական հոգովք պաշարեալ և թակարթապատեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի՝ արգօք ելս իրացն գտանիցէ» (Կորյուն, էջ 8):


Ահա այդ գաղափարը առաջնորդեց Մեսրոպին կատարելու այնպիսի մի գործ, որ ամենամեծ բարիքն եղավ մեր ազգին և որի հիշատակը դարուց ի դարս պիտի հիշվի, քանի կա ու կմնա մարդկութիւնը:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Ճգնավորութիւնը Հեղկատանից է ծնված. դա տանջված մարդկանց փրկութեան միջոցն էր. նրանից օրինակեցին Եգիպտոսի քրիստոնյաները. 5-րդ դարում հայոց մէջ էլ կային ճգնավորներ. — 2. Մեսրոպ էլ դարձավ ճգնավոր՝ մարմինը շաբաթօրեայն վարժեցնելու և միաբնակցութեամբ աշակերտելու ու նրանց հետ իշով Գողթն քաղաքում. — 3. Ճգնավոր ժամանակ հավաքեց աշակերտներ ու նրանց հետ իշով Գողթն քաղաքում. — 4. Ո՛ր էր Մեսրոպի նրբաշար. — 5. Հեթանոսական կրօնը սկսել էր նորից տարածվել Գողթն և Սյունիք. — 6. Մեսրոպ Գողթնի Շաբաթ իշխանի օգնությամբ ջնջում է վերածնունդած հեթանոսութիւնը Գողթնում. — 7. Ճիշտ չէ, որ Մեսրոպ Գողթնից հետո անցել է Սյունիք քաղաքում. — 8. Միեջև 5-րդ դար հայերն ունեին բանավոր գրականութեան հայերեն լեզվով, բայց գրավոր գրականութեան մէջ գործ էին ածում պարսկերեն, հունարեն և ասորերեն լեզուներ. — 9. Նկեղեցում պաշտօնը կատարվում էր հունարեն և ասորերեն. պարսիկները հունարենը արգելեցին և մնաց միայն ասորերենը, որից ժողովուրդը ոչինչ չէր հասկանում. — 10. Մեսրոպ մտածեց ստեղծել հայերեն գիրը և անգրագետ ժողովրդին գրագետ դարձնել:

(Շ ա բ ու ն ա կ ե ի ի)

ԼՈՒՍՆԻ ՏԵՍԱՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ



այլական ձեռագրերի հեղինակներին վաղուց ի վեր հետաքրքրել է լուսնի տեսանելի շարժման հարցը, այսինքն՝ թե՛ երկնակամարի ո՞ր համաստեղությունում (կենդանակերպում) պիտի դիտվի լուսինը տվյալ ամսի այս կամ այն ամսաթվին: Բոլոր ձեռագրերում ընդունվում է, որ լուսնի սինոդիկական ամսվա՝ տեղությունը հավասար է 29,5 օրվա: Հայ տոմարագետները շարունակ հետևելով լուսնի տեսանելի շարժմանը, եկել էին այն եզրակացության, որ լուսինը յուրաքանչյուր կենդանակերպ անցնում է մոտավորապես 2,5 օրվա ընթացքում և, այդ դիտումների հիման վրա, կազմել են համապատասխան աղյուսակներ՝ պահանջված ժամկետին երկնակամարի վրա լուսնի դիրքը ճշտորոշելու համար:

Հաջորդ էջում բերում ենք նման աղյուսակներից մեկը, որը մենք վերցրել ենք Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի (Ձեռագրատան) № 713 ձեռագրից: Աղյուսակը կազմված է Պյութագորասի բազմապատկության աղյուսակի ձևով. ա) ուղղահայաց սյունակում տրված են ամիսների անունները, բ) հորիզոնականում՝ լուսնային ամսվա ամսաթվերը, ընդորում, յուրաքանչյուր կենդանակերպին տրված է 2,5 օր (կեսը, ինչպես և բոլոր հայկական ձեռագրերում, նշանակված է « յ » պայմանական նշանով):

Այս աղյուսակից օգտվելու ձևը բացատրենք հետևյալ կոնկրետ օրինակով. 1955

1. Լուսնի սինոդիկական ամիս համարվում է այն ժամանակամիջոցը, որի ընթացքում լուսինը նորից դեպի առնում է նույն փուլին, ասենք թե՛ նորալուսնից մինչև նոր նորալուսին, կամ յիսուսից մինչև հետևյալ յիսուսինը և այլն:

Թվականի հունվարի 1-ին Լուսինը կգտնվի 8-րդ օրվա փուլում: Աղյուսակի ամենավերի հորիզոնական տողում գտնում ենք 8-ը (դա կլինի 4-րդ ուղղահայաց սյունակում: Թիվ 8-ը չկա, բայց նախորդ սյունակում ունենք յ), չորրորդում նշանակված է նույնպես յ), որը 7,5-ի հետ միասին կտա 8): Նույն սյունակով ցած իջնելով տեսնում ենք, որ հունվարի 1-ին Լուսինը գտնվում է Ցուկ կենդանակերպում, փետրվարի 1-ին՝ Նրկվորյակից կենդանակերպում, մարտի 1-ին՝ Խեցգետին կենդանակերպում և այդպես մինչև դեկտեմբերի 1-ը: Այդ ուղղահայաց սյունակը տվյալ 1955 թվականի համար դառնում է հիմնական: Մնացածը արդեն պարզ է և բացատրության կարիք չունի: Զպիտի մոռանալ սակայն, որ քսաներորդ դարում գարնանային գիշերահավասարի կետը, պրեցեսիա՝ կոչված երևույթի շնորհիվ, տեղաշարժված է արդեն խոյ կենդանակերպից դեպի Ձկունից կենդանակերպը: Հին և միջնադարյան հեղինակները իրենց դարերի համար ճիշտ են եղել՝ ընդունելով, որ զարնանային գիշերահավասարի կետը գտնվում է խոյ կենդանակերպում: Քսաներորդ դարում աղյուսակից օգտվելիս մենք պետք է մի սլունակով շարժվենք դեպի ձախ և 1955 թվականի համար, որպես հիմնական, չորրորդ սլունակը վերցնելու փոխարեն, վերցնենք երրորդը և ընդունենք, որ հունվարի 1-ին Լուսինը կգտնվի խոյ կենդանակերպում, փետրվարի 1-ին՝ Ցուկ և այլն:

Բացի աղյուսակներից, հայ մատենագիրները տալիս են բազմաթիվ կանոններ՝ լուսնի ո՞ր կենդանակերպում գտնվելու մասին: Այդ կանոնները թվով շատ են, բայց բոլորն

2. Գիշերահավասարի կետերի հետախաղաց շարժում:

(ԼՈՒՍԻՆԸ ԶՈՂԻԱԿԱՍՈՒՄ (ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊՈՒՄ)
(ԱՂՅՈՒՄԱԿ)

Հոսանքի ամ- սաթվեր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Ամիսներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Հունվար	Ջր.	Ջկ.	Խ.	Ց.	Եկ.	Խեց.	Առ.	Կույս.	Կշ.	Կար.	Աղ.	Այծ.
Փետրվար	Ջկ.	Խ.	Ց.	Եկ.	Խեց.	Առ.	Կույս.	Կշ.	Կար.	Աղ.	Այծ.	Ջր.
Մարտ	Խ.	Ց.	Եկ.	Խեց.	Առ.	Կույս.	Կշ.	Կար.	Աղ.	Այծ.	Ջր.	Ջկ.
Ապրիլ	Ց.	Եկ.	Խեց.	Առ.	Կույս.	Կշ.	Կար.	Աղ.	Այծ.	Ջր.	Ջկ.	Խ.
Մայիս	Եկ.	Խեց.	Առ.	Կույս.	Կշ.	Կար.	Աղ.	Այծ.	Ջր.	Ջկ.	Խ.	Ց.
Հունիս	Խեց.	Առ.	Կույս.	Կշ.	Կար.	Աղ.	Այծ.	Ջր.	Ջկ.	Խ.	Ց.	Եկ.
Հուլիս	Առ.	Կույս.	Կշ.	Կար.	Աղ.	Այծ.	Ջր.	Ջկ.	Խ.	Ց.	Եկ.	Խեց.
Օգոստոս	Կույս.	Կշ.	Կար.	Աղ.	Այծ.	Ջր.	Ջկ.	Խ.	Ց.	Եկ.	Խեց.	Առ.
Սեպտեմբեր	Կշ.	Կար.	Աղ.	Այծ.	Ջր.	Ջկ.	Խ.	Ց.	Եկ.	Խեց.	Առ.	Կույս.
Հոկտեմբեր	Կար.	Աղ.	Այծ.	Ջր.	Ջկ.	Խ.	Ց.	Եկ.	Խեց.	Առ.	Կույս.	Կշ.
Նոյեմբեր	Աղ.	Այծ.	Ջր.	Ջկ.	Խ.	Ց.	Եկ.	Խեց.	Առ.	Կույս.	Կշ.	Կար.
Դեկտեմբեր	Այծ.	Ջր.	Ջկ.	Խ.	Ց.	Եկ.	Խեց.	Առ.	Կույս.	Կշ.	Կար.	Աղ.

Համառոտագրության համար նշանակված են՝

- | | | |
|---------------|-------------------|---------------------|
| 1. Ջրհոս—Ջր. | 5. Երկվորյակը—Եկ. | 9. Կշեռք—Կշ. |
| 2. Ջկույս—Ջկ. | 6. Խեցգետին—Խեց. | 10. Կարիճ—Կար. |
| 3. Խոյ—Խ. | 7. Առյուծ—Առ. | 11. Աղեղնավոր—Աղ. |
| 4. Ցուլ—Ց. | 8. Կույս—Կույս | 12. Այծեղջյուր—Այծ. |

էլ միատեսակ են: Որպես նմուշ մեշ ենթերում նրանցից մեկը, որը վերցրել ենք Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2292 ձեռագրի 231ա—231բ էջերից.

«ՅԱՂԱԳՍ ԼՈՒՍՆՈՅ

Եթէ կամիցիս գիտել՝ թէ Լուսինն յորում կենդանակերպի է, կալ զաւուրս Լուսինն, ժՌ. պատկեայ, նախ զԱրեգակն գիտցիր՝ թէ յորում աստեղատան էր. յորժամ Լուսինն ամա հանդիպեցաւ յընծայմանն կամ քանի որ պակասէր յաստեղատանէն, ապա լից զթերութիւն աստեղատան յորում Արեգակն է ի մասանց Լուսինն. Լ որ և ժժամ և Դ մասն. և ապա անտի յառաջ տուր յայլ կենդանակերպացն և կ կամ ԻԲ ԻԹ, որք ըսպառի թիւն, յայնմ կենդանակերպի է Լուսինն: Արեգակն Լ որ կալ կենդանակերպին. և Լուսինն Լ որն զամենայն կենդանակերպում վճարէ. ապալ զայս այլ տես, որ ի ԻԹ որ և կէսն վճարէ. վասն դի Լուսինն Բ որ և Ե ժամ և կէս՝ կալ ի կենդանակերպին. և մի՛ բամբուսեր որ Բ որ և կէս չգրեցի, ինձ այն կու թուի ուղղորդ և հոգեորապէս ուղղեցիր...

Լուսնի օրերի թվի բազմապատկումը 12-ով նպատակ ունի, եթե կարելի է ասել, հարմարեցնել Լուսնի տեսանելի շարժումն Արեգակի տեսանելի շարժման հետ, քանի որ Արեգակը յուրաքանչյուր կենդանակերպով անցնում է 30 օրվա ընթացքում, իսկ Լուսինը՝ 12 անգամ փոքր ժամանակում, այն է՝ 2,5 օրում: Վերցնենք մի այլ օրինակ, Բեշպես տեսանք, համաձայն հին Հայկական ձեռագրերի տվյալների, Լուսինը 1955 թվականի հունվարի 1-ին պիտի գտնվեր Ցուկ կենդանակերպում: Այժմ հաշվենք նույնը համաձայն բերված կանոնի: Բեշպես ասել ենք՝ 1955 թվականի հունվարի 1-ին Լուսնի ամսաթվի օրերը հավասար են 8-ի: Համաձայն վանոնի, քաղմապատկում ենք այդ թիվը 12-ով՝ $8 \times 12 = 96$: Բայց քանի որ նորալուսինը տեղի է ունեցել հունվարի 1-ից 22 օր առաջ և համաձայն աստղաբաշխների տվյալների՝ Արեգակը գեկտեմբերի 18-ին մտնում է հենց Այծեղյուր կենդանակերպը, ապա լրացնում ենք պակասորդը մինչև վենդանակերպը՝ 31 դեկտեմբերի — 22 օր = 9 դեկտեմբերի: Դեկտեմբերի 9-ից մինչև 18-ը կկազմի 9 օր: Այսպիսով՝ $96 + 9 = 105$: Ըստ կանոնի՝ ստացած թվին ավելացնում ենք $105 + 30$ օր, 10 ժ., 4 ր. = 135 օր, 10 ժ., 4 ր.:

1. Զգիտի մոռանալ, որ հեղինակը ժամանակի հաշիվը տանում է այսպես կոչված սերկնակի ժամերով (քարեկոնական cas bus). այնպես որ նրա 5 և կես ժամը մեր հաշվով կկազմի 31 ժամ:

Ապա կատարում ենք հանման գործողություն՝ 30 կամ 29 (հաշիվը տանում ենք կուրացրած թվերով).

1) $135 - 30 = 105$ Այծեղյուրից Զրհոս.

2) $105 - 29 = 76$ Զրհոսից Զկունք.

3) $76 - 30 = 46$ Զկունքից Խոյ.

4) $46 - 29 = 17$ Խոյից Ցուկ:

Հետևապես 1955 թվականի հունվարի 1-ին Լուսինը պետք է լինի Ցուկ կենդանակերպում (այդ. իհարկե, ըստ հին հայկական տվյալների միանգամայն ճիշտ է, բայց ընթերցողն աշքաթող չպիտի անի մեր նախորդ էջում արած նկատողությունը քառերորդ դարի վերաբերյալ):

№ 2292 ձեռագրի հեղինակը նույնպես ճիշտ է ընդունել. իրապես, Լուսնի սինդիկական տեղությունն է 29 օր, 12 ժ., 44 ր., 2,9 վրկ.: Բաժանելով այդ ժամանակամիջոցը 12-ի վրա, կունենանք 29 օր, 12 ժ., 44 ր.: $12 \times 2 = 24$ օր, 11 ժ., 3,6 ր.:

Մյուս հարցը, որ կապված է նույնպես Լուսնի տեսանելի շարժման հետ և որն ունեցել է գործնական նշանակություն՝ այդ Լուսնի ծագելու ու մայրամուտի հարցն է, որ հնարավորություն է տալիս որոշելու՝ թե տվյալ ամսաթվին Լուսինը գիշերվա ընթացքում քանի՞ ժամ է յուսավորելու երկիրը: Հայ մատենագրության մեջ առաջին անգամ այդ հարցին անդրադարձել է 7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին: Նա իր նշանավոր «Տիեզերագիտութիւն և տոմար» աշխատության 35-րդ գլխում գրում է.

«— Զի՞նչ է որ Դ.կրկնեմք գրանի Լուսինն՝ յորժամ գիշերի գորշափ գնալն կամիցիմք գիտել:

— Վասն ա՛յնր շորեքկրկնեմք՝ դի ժԵ. օրեալն կատարէ զԼ թիւն, զոր լինին ժամք ժՌ. զոր լիութեամբ լուսոյն ընթացանայ յերեկօրեայ մինչև յառաւօտն»:

Ավելի մանրամասնորեն այդ կանոնի վրա կանգ է առել և լրիվ բացատրել Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 4166 ձեռագրի պարունակած տեքստի հեղինակը.

«Եթէ կամիցիս գիտել թէ Լուսինն քանի՞ ժամ լույս տալ ի գիշերի կամ քանի՞ ընդ խաւար հետեի, կալ զաւուրս իւր, Դ.եքպատկեա, Ե Ե թիւ ժամա արա և զմընացեալն կրկնեա, և հաւն զԵ ի կէս ժամ և զաւելորդն ի մասունս կիսաժամու. բայց յընծայմանէն զլոյսն դիր առաջի, ի լրման են խաւարն»:

Ուսումնասիրելով այս կանոնը, մենք գալիս ենք այն եզրակացության, որ հեղինակը Լուսնի ծագելու հետ ընկնելն յուրաքան-

լյուր օրվա համար ընդունում է հավասար $4/5$ ժամի կամ 48 րոպեի, քանի որ նա սինդոդիկական ամսվա տևողությունը ընդունում է հավասար լուսնի իր ծիրով մի լրիվ պտույտի (360°) և, նրա կարծիքով, անհրաժեշտ է $360^\circ:30=12^\circ$ կամ $4/5$ ժամ:

Դեռ հնուց հայ աստղաբաշխներին հայտնի էր, որ արեգակն իր տեսանելի շարժումով մի ժամում անցնում է երկրագնդի վրա 15° -ի աղեղ, Հավասարեցնելով 15° -ը

1 ժամվա, մենք կստանանք $\frac{60 \text{ ր. } 12^\circ}{15^\circ} = 48 \text{ ր.}$

Իրականում, լուսինն իր ծիրով յուրաքանչյուր օր հետ է մնում 13° -ից մի քիչ ավելի (պարզ է, որ խոսքը վերաբերում է նրա տեսանելի շարժմանը) և նրա ծագելն ուշանում է մոտավորապես 50 րոպե, բայց նկատի ունենալով դարը, մենք կարող ենք ասել, որ բավարար մոտավոր արժեքներ է տալիս նշված հեղինակը և ներկայումս մոտավոր հաշվումներ կատարելու համար կարելի է օգտագործել այն:

Բերենք մի կոնկրետ օրինակ. Ընթացող ենք, որ լուսնի ամսաթիվն է 7 , Բազմապատկենք 4 -ով՝ կունենանք 28 , Բաժանելով (ըստ կանոնի) 5 -ի վրա՝ կստանանք քանորդում 5 և մնացորդում 3 , Հետևաբար այդ օրը լուսինը երկիրը լուսավորելու է առավազն 5 լրիվ ժամ, Գտնենք այժմ ավելորդ ժամանակը: Ըստ կանոնի կրկնապատկելով մնացորդը, կունենանք 6 , Բաժանելով նորից 5 -ի վրա՝ կստանանք ևս կես ժամ, գումարենք նաև կես ժամի $1/5$ մասը, որը կկազմի 6 րոպե: Այսպիսով, այդ օրը լուսինը երկիրը լուսավորելու է 5 ժ. $+ 0,5$ ժ. $+ 6$ ր. $= 5$ ժ., 36 ր.: Մակալն ըստ հայ, ինչպես նաև բոլոր հարավային երկրների հեղինակների, գիշերը միշտ սկսում է, մեր հաշվով, երեկոյան ժամը 6 -ից և ուստի, նրանց հաշվով, լուսնի մայրամուտը պիտի տեղի ունենար այդ օրը գիշերվա ժամը 11 -ն անց 36 րոպեին:

Իհարկոսի փուլի համար կունենանք $\frac{15 \cdot 4}{5} = 12$ ժ., այսինքն՝ լուսինն այդ

օրը երկիրը լուսավորելու է 12 ժամ տևողու-

թյամբ, սկսած երեկոյան ժամը 6 -ից մինչև առավոտյան ժամը 6 -ը, Վերցնենք մի ուրիշ օրինակ: Դիցուք լուսինը գտնվում է 21 -րդ օրվա փուլում: Ըստ կանոնի՝ $\frac{21 \cdot 4}{5} = \frac{84}{5} = 16$ ժ. 48 ր.: Այդ պիտի օգտա-

գործել հետևյալ կերպ. այդ օրը լուսնի ծագումը ուշանում է 16 ժ., 48 ր. $= 12 = 4$ ժ., 48 ր., հետևաբար, մինչև ժամը 10 -ն անց 48 ր. (երեկոյան), լուսինը երկնակամարի վրա դիտել չենք կարող՝ նրա ծագումը տեղի կունենա երեկոյան ժամը 10 -ն անց 48 րոպեին և, քանի տր նա երկնակամարի վրա մնում է 12 ժամ, ապա նրա մայրամուտը կլինի 12 ժամից հետո՝ առավոտյան ժամը 10 -ն անց 40 րոպեին:

Նորալուսնի օրը լուսնի փուլն է զերո և հետևաբար $\frac{0 \cdot 4}{5} = 0$, այսինքն՝ լուսնի

ծագումը կլինի երեկոյան ժամը 6 -ին՝ Արևի մայրամուտի ժամկետին:

Իհարկե, այդ բոլորը ճիշտ կլինեին, եթե մենք քննակվեինք երկրի հասարակածի վրա, ուր արեգակը կանոնավոր կերպով բարձրանում է առավոտյան ժամը 6 -ին և մայր մտնում երեկոյան նույնպես ժամը 6 -ին: Ուրիշ խոսքով, ցերեկվա տևողությունը միշտ հավասար է 12 ժամվա: Բայց շարժվելով հասարակածից դեպի հյուսիս կամ հարավ, ցերեկվա ու գիշերվա տևողությունները անընդհատ փոփոխվում են՝ կապված տարվա եղանակների հետ և այդ պատճառով բերված կանոնը դառնում է մոտավոր, այսինքն ստացված պատասխանները կտարբերվեն իրարից մի քանի կամ մեկ-երկու տասնյակ րոպեով:

Տոմարական այս հաշիվները կատարելիս չպետք է մոռանալ, որ մեզ՝ ՍՍՌՄ-ի բնակիչների համար, միշտ ստացած ժամկետների վրա պիտի ավելացնել նաև մեկ ժամ, քանի որ մեր երկրում ժամանակի հաշիվը ներկայումս տարվում է դեկրետային ժամանակով, որը մեկ ժամ առաջ է իսկական տեղական ժամանակից:





ՊԱՐԿԵՎ ԱՐԲԵՂԱ ԳԵՈՐԳՅԱՆ

ՀՈՎՍԵԺ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԼՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ*

1792 թվականին լույս է տեսնում նաև «Տետրակ համառոտ և յի իմաստեախոհ քանիք Յովնանէս Երզնկացոյ, որ և ասի Մործորեցի», կամ «Էկիպասանութիւն գերկեան յին մարսնոց», որ տիեզերագիտական բովանդակութիւն ունի:

1793 թվականին լույս տեսած աշխատութիւնների թվին են պատկանում «Գիրք աղօրից որ կաջի Աստուածադերս», Ղազար Կաթողիկոսի և «Բժշկարան համառոտ, շարադրեալ ի ներհուն բժիշկ Զովայեցի Յահաննէս Փալանքարեան պարոն Պետրոսէ»:

Քալանթարյանի «Բժշկարան»ը Արղուիթյանի տպարանի փարեոր հրատարակութիւններից մեկն է: Թեև ախ շատ համառոտ է, բայց նորութիւն է նրանով, որ իր մեջ ունի դեղատոմսեր՝ զրոնցեփթումիւ՝ յատիններեն անունով, բացատրում է դեղեր պատրաստելու եղանակը, նշանակում է չափերը, ընդունելու կերպերը և այլն:

Ինչպես նշում է պրոֆ. Լեոն¹, հետաքրքրական է, որ այդ աշխատութիւնը գրելու դրդել է նմանապես ախ շարժումը, որ Հովսէփ Արղութեանն սկսել է Ռուսաստանի հայութեան մեջ: Քալանթարյանը իր գիրքը նվիրում է նրան և իր ուղերձում հետևելով է գրում. «Տեսնալ իմ, թէ՛ ի կառուցանել քարձը. Սրբազնութեանդ գրաբեառիթ դպրոցսն և ի պայծառացուցանելն զազգագոռտ տպարանն (որ ի նորն նախիջնան) բոլոր հայրենասէր ազգ Հայոց՝ ի ծագաց երկրի՝ ի հեռաստան կողմանց՝ մինչ ցը ի Հնդկական


նահանգաց ինքնայոժար կամօց և զուարթամիտ առատածնունդեամբ նուիրամատուց գտանիլն՝ երջանկութիւն ինքեանց՝ և մեծ բարութիւն՝ բազմացրիւ ազին իւրեանց համարեցան (որպէս և է իսկ): Ուստի՝ և անքատս ի մեծագոյն գոյից՝ զգեղեցիկ նախանձն նախանձեալ, ըստ որում մասն և անդամ Հարկադեան ազնուասերունդ ազին, ի յօգուտ հասարակաց քարոյն՝ տոմեալ զտկար անձն իմ յաշխատանս՝ զփորձառեցեալ դեղորայս՝ զանազան ցաւոց՝ պատահելոց մարդկային սեռի փնջասարաս ի մի հաւաքմամբ՝ յառաջ ածի զայս փոքրիկ բժշկարան, ընդ նմին և զհամառոտ քառանջ նորին: Եւ զայս երկու լուսնայս՝ զէտ միոյ նաքարակտի՝ ցանկանալով ցանկացալ արկանել ի զանձանակ՝ հոյակապ գրքատան՝ բարձր Արքադեութեանդ:

Որ եթէ օգտակար և հաճոյ թուիցի օգտակամ Սրբութեանդ, և բարձր հրամանաւոր տպմամբ ի լույս ընծայիցի, ո՛չ սակաւ երջանկութիւն և ինքեան համարի իմս նուաստութիւն, զտանելով արժանի՝ ծառայելոյ մերոյինս յաքեթասերունդ ազինս:

Աշխատութիւնը բաժանված է երկու մասի: Առաջին մասում նվարագրված են հիվանդութիւնները և դրված են դեղատոմսեր յատիններեն լեզվով, բայց հայերեն տառերով, իսկ իրերորդ մասը դեղերի քառասուն է: Արղությանի տպարանի այս նոր գիրքը դարձյալ կարևոր նշանակութիւնն տնեցալ ինչպես նշում է բանասեր-բժիշկ դոկտ. Վ. Թորգոմյանը, տապաղա հայ բժշկարաններու առաջնորդ փառելի է նկատել համառոտ քառարանս... Մեծ իրավամբ... զՔալանթարյան համարելու ենք Ժ. դարու հայ բժշկաց նշա-

* Շարունակված ամսագրի 1954 թվականի Պ Պ IX-ից և XI-ից:

1. Լեո, «Հայոց պատմութիւն», երրորդ հատոր, Երևան, 1946 թ., էջ 1058:



1793 թվականին, Նոր-Նախիջևանում, Հովսեփ արեւախիսկոպոս Արղուրյանի տպարանից լույս տեսած Պետրոս բժիշկ Քալանթարյանի «Բժշկարան համառոտ» աշխատության տիտղոսաբերը:

Նավորագույնը... Գիրքը լույս է տեսել 1793 թվականին Նոր-Նախիջևանի Սուրբ Գևորգ քանդավարի Ջուղայեցի պաշտոնի իշխան Աղայ Յոհաննեսի Գէրաք-հանձի ծախքով: Ինչպես ասված է սույն գրքի հիշատակարանում, մեկնասար նյութական մեծ օգնություն է ցույց տվել նաև Նոր-Նախիջևանի Երկու հարկական դպրոցներին և տպարանին: Սույն գիրքը ևս տպագրվել է Թաղեոս վարդապետ Կոստանդնուպոլսեցի Մարությանի փողմից: Գրքի սկզբում գեղատեսիլ է հեղինակի՝ Պետրոս բժիշկ Քալանթարյանի պորտրեն:

Սույն համառոտ բժշկարանն տնի 13×20,5 սմ. մեծությամբ և բաղկացած է 136 էջից: Գիրքը կաշեկազմ է: Ինչպես ասված է գրքի հիշատակարանում, բժշկարանը լույս է տեսել 600 օրինակ տպաբանակով:

Նույն 1793 թվականին լույս է տեսնում «Տարեցույց և օրացույց յարում ցուցանին ամենայն տօնի և պահի ազգիս Հայոց», որն

ունի 9,5×15,5 սմ. մեծությամբ և բաղկացած է 56 էջից:

Դարձյալ 1793 թվականին լույս է տեսնում նաև «Պատմութիւն Թէլամաքի քաղաքի Յուլիսի», Յենեյուն Ֆրանչեսկոյի, «փոխադրեալ ի Գալիլայեցոց և ի յիտալիացոց լեզուէ ի հայ բարբառ, ջանիւ և աշխատասիրութեամբ պարոն Մարգար Ջաքարիայի հօժէնց Երևանցոյ...»: «Սրբագրեալ զգուշութեամբ ի ձեռագրոյ թարգմանչին ի Թաղեոս վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ Մարութեան»: «Արդեամբք և ծախիւք՝ ազնիւ պանծալի իշխան՝ աղայ Եղիազարեան՝ աղայ Յոհաննէս վեհազնեայ պարոն պօլիովնիկին, ի իշխատակ կանխաթառամ միակ որդւոյն իւրոյ՝ աղայ Յարութիւն ի Տէր հանգուցելոյն:

Յենեյունի «Թելամաքը բաղկացած է երկու հատորից, Երկու հատորները միասին պարունակում են 971 էջ և ունեն 18,5×26,5 սմ. մեծությամբ: Գրքի առաջաբանը նվիրված է սեռամեծ և գերերջանիկ Հովսեփ արքեպիսկոպոսին, որից հետո դրված է շարունակական լույս տեսած Արամեան բանասիրաց Ներածությունը: Այսուհի թարգմանիչը կենսագրական համառոտ տեղեկություններ է տալիս Յենեյուն Ֆրանչեսկոյի և նրա աշխատության գրվելու հանդամանքների մասին, այնուհետև ցավ է հայտնում, որ մինչև իր թարգմանությունը ուղարկություն չի դարձվել այդ աշխարհահռչակ և բազմաթիվ լեզուներով թարգմանված գիրքը հայերեն ունենալու վրա:

2-րդ հատորի վերջին կցված է հիշատակարան՝ հնդկահայերի նվիրատվության, Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքի օծման, Արղուրյանի՝ 1793 թվականին դեպի Պետերբուրգ կատարած ճանապարհորդության, այնտեղ կայսրուհու կողմից ընդունվելու և ակամակուտ ադամանդյա խաչով ու մանթիով պարգևատրվելու, Ղրիմ ճանապարհորդելու և այլ հետաքրքիր դեպքերի մասին:

Թելեմաքի հայերեն թարգմանելու տպագրելը մեր այն ժամանակվա իրականության մեջ մի խոշոր երևույթ էր: Եթե նկատի առնենք նաև գրքի բնագիրը լուսաբանող ծանոթությունների թարգմանությունները, որ հասկացողություն են տալիս անտիկ աշխարհի, ավանդությունների, դիցաբանությունների մասին, մի քան, որ նորություն էր մեր դրականության մեջ, առ ժամանակ հասկանալի կլինի, թե ինչպիսի ծառայություն էր մատուցում Արղուրյանի տպարանը հայ ժողովրդին մտավորապես զարգացնելու գործում:

1794 թվականին լույս է տեսնում «Բրեւոյն կաշեցեալ հօգեյան յերկուց՝ հաւիթ՝ Սրբայն Յօհաննէս Ոսկերեւանից յԱնդ-

րիանդրեայ, գրեյ՝ երրորդ և ի յորրորդ հա-
սիցն ոտանաւորեայ ի Յակոբայ Պատրիար-
քի 4. Պայտայ, ի շան և ի յօգոտ կառուե-
լուքեան կենաց ցանկացողաց հատորը, որն
ունի 10,5×7,5 սմ. մեծութիւն և քաղկացած
է 72 էջից, Զարգանայլանն ու Գ. Լեոնյա-
նը այս գիրքը ընն հիշում:

Դարձյալ 1794 թվականի հրատարակու-
թյունների թվին են պատկանում ևս հրկու
գրքեր՝ «Խորհրդատետր սրբազան պատա-
րագի», որի երկրորդ մասը վերնագրված է
«Գիրք աղօթից», և «Տետրակ համառոտ քա-
ռարանի, արարեալ և լափարեմամբ ուսա-
նաւորեալ՝ աշխատասիրութեամբ Պօղոս
դասասաց դպրի Տիրիկեցոյ Թորոսեան, ի
փառս Տեառն Աստուծոյ, և ի վայելումն նո-
րավարժից դպրատանն: ... Արդեամբք և ծա-
խիւք՝ ի Հնդկիս ի Դաքայ բնակեալ՝ մեծա-
հաւատ և քարեացապարտ պարոն Մարտի-
րոսին Տէր Ստեփաննոսեանն:

Տետրակի առաջարանը գրել է տպարանի
անխոնջ աշխատող Թադեոս վարդապետը,
որից երևում է, որ սույն տետրակի հեղի-
նակը իր ուսուցիչն է եղել, և դեռ այդ հան-
գուցյալ ուսուցիչը մի շարք այլ աշխատու-
թյուններ էլ է թողել ձեռագրի վիճակում:

Տետրակի հիշատակարանում խոսվում է
գրքի մեկնաստի, ինչպես նաև առհասարակ
հնդկահայերի Վոլոմից տպարանին ցույց
տրված աշակցության մասին. «Յորում ժա-
մանակի՝ ոչ թէ զսոյն զայս այլոս զուրթա-
միտ միայն՝ ռոնիմք արժանաւոր դրուատիւք՝
ըստ մեծագործութեանցն՝ ի նմանէ՝ ի յօ-
գոտ հանուրց հալկազնէից արարելոց, ի զիտ
արձանացուցանել, այլ ուղամբ ի լոյս բն-
ծայեալ՝ որպէս ի յաստղայից Նրկնն ամե-
նափայլ ճառագայթեալ է տեսնել՝ Մադրա-
սու, Սուրաթու, Կալկաթու, Սէլզարատու,
Մուլլիբանդարու, և այլոցն Դաքայու՝ օրհ-
նեալ ժողովրդեան՝ սերտ սէրն, քարեաց յա-
ռաչացման՝ ախօթանօք կամեցողութեան՝
չերմեռանդութիւն, և առատաձեռն դուսրթա-
միտ տրոց՝ արգիւնատրութիւն: Տետրակն
ունի 10×15,5 սմ. մեծութիւն և քաղկացած
է 96 էջից:

Այս շրջանում տպարանի ունեցած հաջո-
ղությանը մեծապես նպաստում է Թադեոս
վարդապետ Կոստանդնուպոլսիցին, որը քա-
ցի տպարանի ղեկավարութիւնից, ստանձ-
նել էր նաև նոր-նախիչեան քաղաքի վանքի
հակոդութիւնը, ինչպես նաև դպրոցի ղե-
կավարման գործը: Բայց ինչպես հալ բոյոր
մշակները, այնպես էլ Արղութիւնն արքե-
պիսկոպոսն ու Թադեոս վարդապետը ունե-
նում են իրենց թշնամիները, որոնք սկսում
են խանտարել նրանց ազգագոյտ գործունեու-
թյունը: Թադեոս վարդապետը հաճախ ընկ-
նում է հուսահատութեան մեջ, բայց անվե-

հեր Արղութիւնը Թադեոս վարդապետին
իր գրած նամակներում մեծարելով նրա մա-
տուցած ծառայութիւնները, խորհուրդ է
տալիս շննկնելու նա մի նամակում գրում է.
«...Այլ զքեզ և զաշխատանս քոյ և զպիտա-
նատրութիւն գործոյդ գիտասցեն թէ ոչ, որ-
պէս ինձ նմանապէս և քեզ, ոչինչ է փոյթ
հողալ զնոցանէ, զի դժուարին է կուրաց
զլոյս արեղական քարոզել և խնամուտ ա-
նել... վասն այսմ մի՛ ինչ հողայ, այդ խու-
ժանն այլովք ամենայնիւք, յայնժամ ի բաց
բառնի ի քէն յորժամ տացէ մեծ Աստուած
տեսանել զմիմեանս: Արղութիւնի տպա-
գրական ազգագոյտ գործունեութեան պատ-
մութեան մեջ Թադեոս վարդապետի անձնա-
վորութիւնը մեծագոյն հույսն է հանդիսա-
ցել մեծ եկեղեցականի համար: «Սիրելի որ-
դի,— գրում է Արղութիւնը Թադեոս վարդա-
պետին,— զու ինքնին քոյ խղճմտանօքն գի-
տես, որ ես այդ տպարանն փոյ յուսովն
ստեալ մտի ի ներքոյ ծանրութեան բեռին»:



1793 թվականին, նոր-նախիչեանում, Հով-
սեփ արհեպիսկոպոս Արղութիւնի տպարա-
նից լոյս տեսած «Քիժկարան համառոտ»
աշխատութեան հեղինակ Զուպյեցի Պետրոս
բժիշկ փայաքարայանը:



1793 թվականին, Նոր-Նախիջևանում, Հովսեփ Խոֆիսկոպոս Առաքելյանի տպարանից լույս տեսած Ֆեհեյունի «Պատմություն Թեյլամաֆի ուղղոյ Յուլիսի» աշխատության 2-րդ հատորի տիտղոսաբերքը:

Մեծ է եղել Արղուիյանի ցույց տված սերը Թաղեոս վարդապետի նկատմամբ. ահա թե ինչու՞ զնուս տպարանը Պետերբուրգ եղած ժամանակը լսելով Թաղեոս վարդապետի հիվանդության մասին, Արղուիյանը իր մի րարեկամին ահարեկված գրում էր. «Թաղեոս վարդապետն հիւանդացելալ ի Պետերբուրգ, ես աստ ցաւադարեալ...» և այլն¹:

Նոր-Նախիջևանի Ս. Խոչ վանքի տպարանը հետադադրում մենք տեսնում ենք, որ փոխադրվում է Աստրախան, որը առաջնորդանիստ քաղաք էր և իր ժամանակի մեծ մասը այդտեղ էր անցկացնում Արղուիյանը: Նա կարծում էր, որ է՛լ ավելի մոտիկից հովանավորելով տպագրական գործը, նա է՛լ ավելի մեծ հաջողության կկարողանա հասնել: Ըստ Գ. Լեոնյանի, Նոր-Նախիջևանի տպարանի ամենավերջին հրատարակությունը

ներ 1796 թվականին տպագրված «Ատենա-րանութիւն» է եղել: Գ. Լեոնյանը մեջ է բերում այդ «Ատենաբանութիւն» տիտղոսաթերթի միայն համառոտ շարադրանքը², այն-ինչ Ն. Ա. Ղազիկյանն³ ու Թեոդիկը⁴ մեջ են բերում, նույն «Ատենաբանութիւն» տիտղոսաթերթի ընդարձակ շարադրումը, որից էլ պարզվում է, որ գիրքը լույս է տեսել ո՛չ թե Նոր-Նախիջևանում, այլ հենց Աստրախանում: Ահա՛ այդ տետրակի ամբողջական վերնագիրը. «Բանք ասացեալ պսակազգեաց Սրբազան Արքեպիսկոպոսէ՝ Հիւսիսային կողմանս եղեալ ամենալու ազգիս Հայոց ի 1796 թուոյ՝ ապրիլի 5 ի Ղզլար, ի Վերափոխման՝ ամենասուրբ Աստուածածնայ յեկեղեցւոյն Հայոց ի ներկայութեան բարձր գերազանցութեան նշարալ անշեֆ, և զանազան նշանակիր կաւալեր Իվան Վասիլիչ Գուդովիչին և այլ զօրապետաց. ի ժամանակի լուսնոյն զօրացն՝ իրուհւոյ կայսերական մեծութեան՝ ի Ղզլարու ի Պարսա, ընդ կառավարութեամբ՝ պայծառափայլ գրաֆ Վալերիան Ալեքսանդրովիչ Զուրովին: Տպեալ ի 1796 թուոյ, ի մայիսի 5 ի տպ: Նորին բարձր Սրբազնութեանն ի վեժարխանս:

1797 թվականին Աստրախանում լույս է տեսնում «Մեկնութիւն սաղմոսաց Դարի» գիրքը, «Ժօրինեալ սքանչելի աստուածաբանութեամբ... մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ՝ լեզուափետ և բազմավաստակ վարդապետի Հայոցս... ի խնդրոյ արհիական Տեսոն Յօհաննու Բագրատունւոյ՝ ասալնորդի սուրբ ուխտին Հաղրատու, և աշակերտաց իւրոց, ի թագաւորութեանն Հայոց՝ որ ի կիւիկիայ՝ Հեթմոյ ասալնոյ, Յամի Տեսոն 1251, եւ ի թուականութեանս Հայոց եօթն հարիւր, Տպագրվել է Արղեամբք և ծախիւք՝ ի Սուրաթ քնակեալ՝ խօջայ Մինա-սէնց Գրիգոր աղայի որդի՝ ի Քրիստոս հանգուցեալ աղայ Յովհաննէսին Զուլայեցւոյն»:

Այս գիրքն Արղուիյանի տպարանի ամենավաղուցն հրատարակությունն է: Տպագրությունը կատարված է մեծ խնամքով. թուղթը սպիտակ է, տառերը մանր, բայց նոր և ընթերցելի: Սկզբում կա մի նկար, որ

2. Գ. Լեոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», էջ 169:

3. Ն. Ա. Ղազիկյան, «Հայկական հին մատենագրութիւն», Վենետիկ, 1902—1912 թ.թ., էջ 250:

4. Թեոդիկ, «Տիպ ու տառ», 1912 թ., Կ. Պոլիս, էջ 180:

5. Գրեթե լեոնյանին իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության մեջ, սխալմամբ, այս գրքի տպագրման ծախքերը հողացող մեկնաւոր է համարում Ղզլար քաղաքում բնակվող Անտոն Շամախեցուն (էջ 170):

1. Հայկական ՍՍԻՐ Պետական մատենադարանի ձեռագիր № 2940, Թ. Թ. 144ա, 183ր, 234ր:

պատկերացնում է Վարդան Բարձրերդցուն նստած վիճակում, վարդապետական գավազանը աչ ձեռքին և գիրքը ծնկան վրա. նրանից քիչ հեռու գտնվում են նրա շորս վեղարավոր աշակերտները՝ կանգնած ու լռքած վիճակում, գրքերը ձեռներին, նկարի տակ գրված է.

«Մեծն Վարդան հոգևով զմայլեալ,
Իրեզ զարփի լուսով փայլեալ,
Մորան հրեղէն լեզուին արբեալ,
Զիմաստս գրոց ուղիղ ճառեալ»:

Գիրքն ունի հայկական ոճի թռչնադերուկազմն ամբողջական կաշվից է.

Հիշատակարանի մեջ արձանագրված է, որ գրքի հրատարակումը կատարվել է «...ի դառն՝ և յամենունսէք մշտապատ ժամանակին, յորում աղէտալի անցքն՝ ընդ անբիծ և անարատ մայրս մեր Սուրբ Էջմիածին՝ յանօրէն բռնաւորաց, և յերկրորդ Հռոփասայ, Յոյնպէս՝ և ընդ անբախտութեամբ պաշարեալ քաղաքն Թիֆլիզ, և ընդ բոլոր կողմունս արեւելեան նահանգին»:

Մի շարք անուններ թվելուց հետո՝ հիշատակագիրը խնդրում է հիշման արժանի համարել նաև «...զմեծ երախտաւորսն սոյն տպարանին, և առատատուր նուիրօք իրեանց՝ զպայծառ պահօղսն սորին, զլուսաւորութիւն գիշխանս, և զգուրթամիտ ժողովուրդս՝ բովանդակ Հնդկաց երկրին, որք լիալիր տրուք իրեանց՝ միշտ որպէս զարփի ի փայլեցուցանելն են զազգասօզուտ տպարանս՝ ներ ողբիս Հայոց»:


Գիրքն ունի 12,5×20 սմ. մեծութիւն և բաղկացած է 520 էջից:

Մյուս գիրքը, որ Արղւթյանի տպարանի վերջին հրատարակութիւնն է, տպագրվել է 1800 թվականին, Ինչպես կրեւում է գրքի տիտղոսաթերթից, նա լույս է տեսել այն շրջանին, երբ Արղւթյանը ընտրվել էր Ամենայն Հայոց Կաթողիկոս: Գրքի վերնագիրը հետևյալն է. «Թարգմանութիւն պրիվէլեկացն Հայոց րեակեցելոցն ի զանազան պաւոս Մեծին Ռուսաստանու, շնորհեցելոցն աստուածարար խնամովք ի մեծէն ի կաճառս օծելոց՝ յօգոստափառ Կայսերէն և Ինքնակալէն ամենայն ռուսաց. տպագրեցեալ հրամանաւ քաղմարդիւն րարեացաւարտ երախտաւորութեամբ ընկալնողի պարգեացս՝ հոգէնտիր Հայրապետի Տեառն Յովսէփայ Արքայնակատար Կաթողիկոսի Սրբոյ գերագահ Աթոռոյն Էջմիածնայ և Մայրաղոյն Պատրիարկի Ամենայն Հայոց, Յամի Տեառն 1800 հոկտեմբերի 29, ի Մթղարխան»:


Այս գրքուկը «պրիվէլեկաց», այսինքն պարգեագրերի մի ժողովածու է, որտեղ կան նկատերինա Երկրորդի և Պապե Առաջինի

կողմից տրված մի շարք հրովարտական-րի Թարգմանութիւնները՝ Նոր-Նախիջևանի, Գրիգորիոսյոյի, Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի, Գերբենդի, Ղրիմի հայերի վերաբերյալ (1779—1800 թ. թ.), Կան նաև մի քանի պարգեագրեր Արղւթյանի վերաբերյալ, նաև «նշանք ցեղին՝ իշխանացն Երկայնարագուկ Արղւթեանց», որն հաստատել է Պապե Առաջին կայսրը 1800 թվականի մարտի 22-ին, Գրքուկն ունի 14,5×20 սմ. մեծութիւն և բաղկացած է 44 էջից:

Արղւթյանի տպարանը Աստրախանում, ինչպես նրեւում է այստեղ բերված հրատարակութիւնների թվից, այնքան էլ արդյունավետ զործ չի կատարել. պատճառը, Ղուկաս Կաթողիկոսի մահվանից հետո, հանգես եկող հայտնի աթոռակալական կոիվներն էին, որոնք ստիպում էին Հովսեփ արքեպիսկոպոսին զրաղվել ավելի կարեւոր հարցերով, քան տպարանին էր, և որոնք վերջանում են նրանով, որ նա, ռուսաց արքու-



1794 թվականին, Նոր-Նախիջևանում, Հովսեփ արքեպիսկոպոս Արղւթյանի տպարանից լույս տեսած Տյուրիկեցի Պողոս դպիր Թորոսյանի «Տետրակ ճամառօտ քառաբանի» աշխատության տիտղոսաթերթը:



1787 թվականին, Աստրախանում, Հովսեփ արքեպիսկոպոս Արղուսյանի տպարանից լույս տեսած Վարդան Բարձրբերդցու «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» գրքի տիտղոսաբերքը:

Նիքի պաշտպանությամբ, ընտրվում և կաթողիկոս և 1801 թվականին դեպի Էջմիածին ճանապարհվելիս՝ վախճանվում Թիֆլիս քաղաքում:

Սրջանկահիշատակ արքեպիսկոպոսի մահվանից շատ շանցած Աստրախանի տպարանը քայքայվում է...

Ինչպես երևում է Արղուսյան արքեպիսկոպոսի մի նամակի բովանդակությունից, նա ցանկանում էր իր տպարանում տպել հայերեն Աստվածաշունչ շքեղ և պատկերազարդ, որի համար էլ փորագրել էր տվել պղնձի վրա մի քանի հարյուր պատկեր, խոշոր ծախքեր անելով դրա համար, սակայն Հնդկաստանից սպասվող գումարների ստացումը ուշանալով՝ այդ ցանկությունը մնաց անկատար և Հովսեփ արքեպիսկոպոսը կով-

կաս գալով, թե՛ տպարանը փակվեց և թե՛ կորստի մատնվեցին այդ կլիշեները¹:

Տպարանի համար մյուս դժվարությունը ձեռագիր բնագրերի պահպանությունն է եղել: Ահա թե ի՞նչ է գրում նա այդ առիթով իր հնդկահայ բարեկամներից մեկին. «Գրեցի ի բազում ուրեք գտանել վասն մեր զգրչեայ գրեանս նախնեացն մերոց և զպատմութիւնս. ոչ ուստէք գտի զօգնութիւն, բայց ի Ջուղայու, որ վշտակիր եղբայրն իմ ծակոր աստուածաբան վարդապետն և պարոն Կարապետն Գալստեան քանի մի գրեանս առաքեալ էին, զքանի մի ևս ունին ի պատրաստի... սակայն վասն ճանապարհացն փոխման և թռնաւորացն թռնութեան՝ ոչ կարողանան առաքելը²:

Ո՛չ մի դժվարություն և անհաշուղություն էր հուսահատեցնում Հովսեփ արքեպիսկոպոսին: Տեսնելով, որ իր ուղած ձեռագրերը չեն գտնվում, նա հրատարակում էր այս, ինչ որ ունենում էր, միաժամանակ հետեւելով ձեռքից բաց լրոջին՝ նորերը գտնելու առիթով: Մինչև անգամ 1800 թվականին, երբ արդեն ճանապարհվելու էր դեպի Էջմիածին, լսում է, որ Թիֆլիսում գրավ դրված երկու արկղ ձեռագրեր կան, իսկույն նամակ է գրում այնտեղ ապրող իր ծանոթներից մեկին՝ գնելու այդ ձեռագրերը և փնտրելու նորերը հույի և Սալմաստի գավառներում³: Ահա այդպիսի անսպառ եռանդի տէր անձնավորություն էր Արղուսյանը, որ կարողացավ յոթը տարվա ընթացքում տպարանության ասպարեզում արձան քան անել, որքան չէր կարող անել մեկ ուրիշը: Մեծ ազդեցություն էր գործում նրա բացակայությունը տպարանի վրա: Ո՛չ «պերճիմաստ» Թադևոս վարդապետը և ո՛չ էլ աստվածաբանական գիտությամբ «հռչակալ» Կարապետ վարդապետը չէին կարողանում փոխարինել սրբազանին: Բավական վերորպեսգի նա հեռանար Նոր-Նախիջևանից, տպարանի աշխատանքներն իսկույն դանդաղում էին, հենց որ նորից վերադառնում էր՝ աշխատանքները նոր թափով վերսկսվում էին: Մի խոսքով, նա տպարանի ոգին վեր, նրա շարժիչ ուժը: Բայց, իհարկե, չի կարելի ասել, որ նրա ներկայությամբ ամեն ինչ հարթվում էր: Քիչ չէին լինում դեպքեր, երբ տպարանի գործերը շափազանց վատանում էին և պարտաւերերը սպառնում էին գրավել այն:

1. Գյուտ ալլազ քահանա Աղանյան, «Դիվան Հայոց պատմութեան», Թիֆլիս, 1931 թ., Գիրք Բ, էջ 500 (ձեռնոթագրությունը):

2. «Բազմավէպ», Վենետիկ, 1890 թ., էջ 548—549:

3. «Բաղաձայն», Թիֆլիս, 1901 թ., Գիրք Բ, էջ 204, «Писма Иосифа Аргутинского и других»:

Այդպիսի դեպքերում Արդությանը, որևոր-ված իր կատարած գործի վեհ գաղափարով, գինված էր համբերությամբ, դիմա-նում նեղություններին և ուրիշներին էլ հոր-դորում հետևելու իյնն. «նոքա որ ազգա-սէրք են և ազատութիւն ազգին ցանկան», պարտ են և նեղութեանցն համբերելը, — պատճառարանում էր իր վարմունքը Հովսեփ արքեպիսկոպոսը¹։

Ահհրաժեշտ է նշել մի հանգամանք էս, որ Արդությանի համար տպագրութեան ասպար-սիքում թափած քանքերն աննպատակ չէին. նա իր այդ գործունեությունը սերտորեն շաղկապում էր Հայրենիքի ազատագրման համար տարվող գործին՝ որպես այդ գոր-ծին օժանդակող միջոցի և երկրորդ՝ կրթ-ված և դաստիարակված լինելով այնպիսի նշանավոր հոգևորականի մոտ, որպիսին էր Սիմեոն կաթողիկոսը, ինչպես և ժառանգե-լով իր ուսուցչի լավագույն հատկություննե-րը՝ հայրենասիրությունը, եռանդը, հետևե-ղականությունը, ջերմ սերը դեպի աշխա-տանքը, Հովսեփ արքեպիսկոպոսը անուշա-դրութեան շէր մատնում սկսած գործը, այլ, հաղթահարելով դժվարությունները, հասցը-նում էր հաջող վախճանի։

18-րդ դարի վերջին քառորդին, երբ Հով-սեփ արքեպիսկոպոսը, Ռուսաստանում, իր նրատարակություններն էր կատարում, հայ-կական տպագրութեան սկզբնաւորութիւնից անցել էին երկու և կես հարյուրամյակնե-րից ավելի տարիներ։ Այդ ժամանակաշը-ջանում թեև տպագրական տեխնիկան նշա-նակալից չափով առաջադիմել էր և վեճե-տիկում, Կոստանդնուպոլսում, Վիճիում, Նոր-Ջուղայում, Ամասերդում, Մարսելում, Տրիեստում, Նրուսադեմում, Մադրասում և այլ տեղերում բավականին թվով հայերեն գրքեր էին հրատարակվել, բայց և այնպես՝ հայկական տպագրութեան գործը գտնվում էր իր նախկին ծանր պայմանների մեջ, Հա-յաստանից հեռու՝ օտար հորիզոնների տակ դեգերող հայության ձեռքում։ Այլ կերպ չէր

էլ կարող լինել 18-րդ դարի վերջերին հայ ժողովուրդը հեծում էր օտարերկրյա տիրա-պետողների կրակի տակ, Հայրենի երկիրը պատառ-պատառ արված բազմաթիվ մասեր ու մեծ բռնակալների միջև. ներքին երկպա-սակություններին վերջ չկար. ասպատակու-թյունը, զերեվարությունը և կողոպտալը սո-վորական երևույթներ էին, Այսպիսի դրու-թյան մեջ ի՞նչ խոսք կարող էր լինել Հայրե-նիքում կուլտուրական որևէ հաստատության հիմնման մասին, այն էլ այնպիսի հաստա-տություն, որպիսին էր տպագրականը։ Եթե այդպիսի փորձ էլ լինում էր, ապա խափա-նումն անխուսափելի էր²։

Արդութեան արքեպիսկոպոսի համար տպա-դրութեան գործը՝ իր ժողովրդի լուսավորման գործն էր. ահա թե ինչու՝ այնքան մեծ նվիր-վածությամբ ու անհուն սիրով նա իր բազ-մազրադ կյանքը, գիշեր ու ցերեկ, մաշեց-նում էր տպագրական գործում եղող նույն-իսկ ամենափոքր տեխնիկական սխալները վերացնելու համար։ Այդ աշխատանքը Ար-դութեանի ամենասիրելի գործն էր. «Գիտա-ցես, չիք ինչ ի վերայ աշխարհի ախորժ հոգւոյ իմոյ. — գրում էր Արդութեանը իր ժրաջան աշխատակցին՝ Թադեոս վարդապե-տին, — քան զյառաջանալն տպարանիդ ընդ որում անձն իմ եղի...»³։

Ահա այսպիսի՛ն էր Արդութեան արքեպիս-կոպոսի վերաբերմունքը դեպի տպագրական գործը։

2. Հայտնի է, որ Սիմեոն կաթողիկոս Երևանցին էրմիաձնում, 18-րդ դարի 20-ական թվականներին, տպարան էր հիմնել և տպարանից ոչ հեռու, վանքի պարիսպներից դուրս, թղթաշիւթութեան գործարան կառուցել։ Այդ փութուրակն ձեռնարկությունները, որոնք 18-րդ դարի կեսերին միակն 16, եղել ամբողջ Հայաստանում, երկար կյանք չեն ունեցել (տե՛ս Հով-հաննես Եպիսկոպոս Եւսեբիոսյանց, «Ստորագրու-թիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւտացի Արարատայ», Էջմիածին, 1842 թ., հատոր Ա, էջ 59—100)։

3. Հայկական ՍՍԻՔ Պետական մատենադարանի մե-տադիր Ս 2049, թ. 224ա.

¹. «Արարատ», 1898 թ., էջ 366.





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Կիլիկիայի Աթոռի կաթողիկոսական ընտրությամբ մասնակցելու համար, Մայր Աթոռի կողմից որպես հոգևորական պատգամավոր ընտրված է ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, որը Երուսաղեմից կմեկնի Անթիիա:

Մայր Աթոռի կողմից որպես աշխարհական պատգամավոր ընտրված է ժեշմիածին՝ ամսագրի պատասխանատու խմբագիր պրոֆ. դոկտ. Աշոտ Գ. Աբրահամյանը, որը մեկնեց Բեյրութ:

Դեկտեմբերի 5-ին, ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիայի օրվա առթիվ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը: Զարոգեց բարձրապատիվ Տ. Գեորգ Ժայրազույն վարդապետ Վաթյանը:

Դեկտեմբերի 12-ին, Մայր Աթոռի միաբանները և Հոգևոր Ճեմարանի ուսանողները մասնակցեցին ժողովրդական դատավորների և ատենակալների ընտրությանը՝ քվեարկելով համաժողովրդական թեկնածուների օգտին:

Դեկտեմբերի 14-ին, Մայր Տաճարում, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը վարդապետական աստիճան շնորհեց Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Կոմիտաս արեղա Տեր-Ստեփանյանին:

Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ ժամանեց Ռումինահայ թեմի առաջնորդ և Գերագույն Հոգևոր Խորհրդի ընտրյալ անդամ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը՝ մասնակցելու Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին:

Դեկտեմբերի 19-ին, Երևանի Ա. Հովհաննես եկեղեցում, սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը և օծեց երկու յուղաներկ սրբապատկեր:

Դեկտեմբերի 23-ին Մայր Աթոռ այցելեց Կրասնոդարի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների երկսեռ պատվիրակությունը: Ուսանողները ծանոթացան Մայր Տաճարին, թանգարանին և Մայր Աթոռի տեսարժան այլ վայրերին: Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը տվեց լսարարություններ, Պատվիրակության անդամները, իրենց գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնելուց հետո, մեկնեցին Երևան:

Դեկտեմբերի 25-ին Հոգևոր Ճեմարան այցելեց Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը: Սրբազանը ծանոթացավ Ճեմարանի ներքին կյանքին և հետաքրքրվեց ավանդված դասերով:

Սրբազան հյուրը դեկտեմբերի 29-ին դասախոսեց Հոգևոր Ճեմարանի ուսանողներին՝ «Կրոն և գիտություն» թեմայով:

Դեկտեմբերի 27—30-ին Հոգևոր Ճեմարանի ուսանողները լավ արդյունքներով հանձնեցին առաջին քառամսյա զննությունները:

Դեկտեմբերի 30-ի գիշերը, Մայր Աթոռի միաբաններն ու Հոգևոր Ճեմարանի ուսանողները հավաքվեցին կադանդի մտերմիկ սեղանի շուրջը: Երեկոյնի գեղարվեստական բաժինը կատարեցին ուսանողները: Տեսուչն ու դասատուները խոսեցին պատշաճ խրատակաների:





ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳՆՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Նկատի ունենալով, որ 1955 թվականի փետրվարի 25-ին լրանում են Հայկական ՍՍՐ երրորդ գումարման Գերագույն Սովետի, 1955 թվականի մարտի 1-ին՝ տեղական Սովետների լիազորությունները, Հայկական ՍՍՐ Գերագույն Սովետի նախագահության 1954 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեպուբլիկայի Գերագույն Սովետի և աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային Սովետները ընտրությունները նշանակված են 1955 թվականի մարտի 6-ին, կիրակի օրը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳՑՈՒՆՔՆԵՐԸ.— 1954 թվականի դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած Հայկական ՍՍՐ Ժողովրդական դատարանների (ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների) ընտրությունները, Ընտրությունների մասնակցից ընտրողների 99,98 տոկոսը, Ժողովրդական դատավորների թեկնածուների 99,98 տոկոսը ընտրողների 99,71 տոկոսը, իսկ ժողովրդական ատենակալների 99,98 տոկոսը, Առաջադրված բոլոր թեկնածուներն ընտրվեցին ձայների ճշգրտ մեծամասնությամբ, Ընտրված դատավորների և ատենակալների 30,2 տոկոսը կանայք են:

ԿՈՂՈՒՄՐՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԵՏՎԵՐԱԿԱՆ ԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Դեկտեմբերի վերջերին Հայաստան այցելեց Կոլումբիայի խաղաղության կոդմեակիցների պատվիրակությունը, որը ՍՍՐԸ էր ժամանել հաղաթյան պաշտպանության Սովետական կոմիտեի հրավերով: Հյուրերը նրանում միացին մի քանի օր, օրի ընթացքում ծանոթացան քաղաքի արդյունաբերական մի քանի ձեռնարկությունների և կուլտուրա-լուսավորական հաստատությունների աշխատանքներին, ըսեցին հայկական երաժշտության համերգներ, այցելեցին Արզնի բուժարանը, դիտեցին

քաղաքի տեսարժան վայրերը, վերջում պատվիրակությունը հանդիպում ունեցավ Հայկական ՍՍՐ գիտությունների ակադեմիայի և հաղաթյան պաշտպանության Հայկական կոմիտեի նախագահ ակադեմիկոս Վ. Համբարձումյանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՆՐԱՎԱՐՆԱԿԱՆ ԳԵՆԵՐԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԹՈՒՑԱՀԱՆԳՆԵՐԸ.— Դեկտեմբերի 8-ին նրանում, նկարիչների տանը, քաղաքի Հաբատյանի կերպարվեստագետների աշխատությունների 1954 թվականի ցուցահանդեսը, Ցուցադրման 18 ներկայացված մոտ 200 նկարիչների ավելի քան 600 գործերը՝ զգալիորեն ավելի, քան ներկայացված էր այնպիսի տարված ցուցահանդեսին: Մեծ տեղ է հատկացված երիտասարդ կերպարվեստագետների, նրանց թվում նրանի նկարչական-թատերական ինստիտուտի շրջանավարտների գործերին:

Այստեղ ներկայացված են կերպարվեստի ամենատարբեր նմուշներ՝ յուզանկեր, օֆորտներ, գրաֆիկ աշխատություններ, քանդակներ, կիրառական արվեստ՝ օրինակներ, Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն է առաջացրել, 20 օրվա ընթացքում ցուցահանդես է այցելել շուրջ 10, 000 մարդ:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆՈՒՄ.— Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանը Սովետական Միության խոշորագույն գրադարաններից մեկն է: Այժմ այստեղ կա մոտ 2.000.000 գիրք, ինչպես նաև հայկական և ուսական պարբերական հրատարակությունների հարստ ժողովածուներ: Դրադարանում պահվում են հայ, ռուս, արաբաստանյան ինչպես կլասիկ, այնպես էլ ժամանակակից հեղինակների աշխատությունները: Միայն 1954 թվականի ընթացքում գրադարանը ստացել է տարբեր լեզուներով հրատարակված ավելի քան 80.000 օրինակ զանազան դրքեր, այդ թվում 1.100 անուն գիրք հայերեն լեզվով:

Գրադարանից ազատվում են մի քանի հազար մշտական բաժանորդներ:

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՏՐՈՆԻ 25 ՏԱՐԻՆ.— Լրացավ Երեւանի Անաստաս Միկոյանի անվան պատանի հանդիսատեսի թատրոնի 25 տարին։ Իր գոյութիւնը ընթացքում թատրոնը խոշոր դեր է խաղացել մանուկ սերնդի դաստիարակութեան գործում։ Գեղանմանքի 12-ին թատրոնի շէնքում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո։ Լսվեց զինուցում թատրոնի անցած ուղու մասին, որից հետո ողջույնի խոսքերով հանդես եկան Երեւանի թատերական հաստատութիւնները, Հայկական ՍՍՌ Կոլտուրայի մեմբերութեան, դպրոցական կազմակերպութիւնների ներկայացուցիչները, թատրոնի հասցեով ստացված էին ողջույնի խոսքերով հանգրգրի տարբեր ցարդերից։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահութեան հրամանագրով թատրոնի մի խումբ դերասանների ու դերասանուհիների շնորհված են պատվավոր կոչումներ։

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 20 ՏԱՐԻՆ.— Լրացավ Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի 20 տարին։ Իր գոյութեան 20 տարվա ընթացքում ինստիտուտը տվել է 5.131 շրջանավարտներ, որոնց աշխատում են Հայաստանի և մյուս ուսուցչականների հայկական դպրոցներում որպէս դասատուներ։ Այժմ այստեղ սովորում են 1.200 ուսանողներ և ուսանողուհիներ։ Ընթացիկ ուսումնական տարվանից բացված է աղբրեղեմական բաժին, որտեղ ուստում է 70 մարդ։

Ինստիտուտում դասավանդում են 9 պրոֆեսոր, 68 դոցենտ և 51 դասախոս, որոնց մեծ մասը ավարտել են Նալբանդյանի հաստատութիւնը։

Ինստիտուտը խոշոր գիտա-հետազոտական աշխատանք է կատարում մանկավարժութեան և բնագիտական հարցերի մշակման գծով։ Վերջին 5 տարում լույս են ընծայվում 35 գիտական և գիտա-հանրամատչելի աշխատութիւններ։ Ինստիտուտի առաքելական աշխատանքն իրականացնում է 64 հոգի, ներկայումս առաքելականութեամբ սովորում է 41 հոգի։

ԱՐԵՎԻ ԶԵՐՄԱՆԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ.— Հայաստանի դիտա-հետազոտական որոշ հաստատութիւններ զբաղված են արեւի քերթութիւնը ժողովրդա-տնտեսական կարիքների համար ոգտագործելու հարցով։ Արեւային այնպիսի երկիր, ինչպիսին է Հայաստանը, ունի լայն հնարավորութիւններ բնական այդ քերթութիւնը ոգտագործելու զանազան կարիքների համար։

Այս ուղղութիւնը արժում են առաջին քայլերը կազմված է արեւի քերթութիւնը ջուր տաքացնող հարմարանքի տնկային նախալիք, որի համաձայն տեղական գործարանները աշատ կերպով կարող են մեծ քանակութեամբ արտադրել այդպիսի հարմարանքներ։ Առաջին այդպիսի հարմարանքը անցյալ ամառ գրվեց Գիտութիւնների ակադեմիայի Բույսերի գեներատիվայի և անկէրիայի ինստիտուտի փորձակայանում, որը գտնվում է Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղի մոտ։ Այժմ ողջ ամառը և աշուն ամիսներին փորձակայանի աշխատողների կենցաղային կարիքների հա-

մար քերթած ջուրը տաքացվում էր արեւի ճառագայթներով։

Առաջիկա 1935 թվականին արեւի քերթութիւնը ջուր տաքացնող հարմարանքներ են գրվելու Երեւանի մի շարք արդյունաբերական ձեռնարկութիւններին կից գործող թաղնիքներում, Բացի այդ, քաղաքում կառուցվելու են երկու հանրային բաղնիքներ, որոնցում ջուրն ամբողջովին տաքացվելու է արեւի քերթութիւնը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒԺԱՎԱՅՐԵՐԸ ՁՄԱՆԱՆԸ.— Հայաստանի բուժավարների (կուրորտների) մի մասն աշխատում է ամբողջ տարին, ըստ որում նաև ձմեռնեքը։ Այդպիսի բուժավարներից են Գիւլիանը, Արզնին, Ախտայանը, Վերջինս գտնվում է Ալավերդում շրջանում, լեռներով շրջապատված մի գեղատեղի վայրում, թաղված անտառների մէջ։ 1934 թվականի ընթացքում Ախտայանը հանգստացել են մոտ 4.000 աշխատավորներ։ Հանգստացողների համար այստեղ ստեղծված են կուրտուրական, կենցաղային և բուժական բոլոր տեսակի հարմարութիւններ, Զնայած ձմեռնալը, հանգստի տունը լի է հյուրերով, որոնք իրենց զգում են նույնքան լազնիքի վիճակում, ինչպես և ամառն ամիսներին հանգստացողները։

ՀԱՆԳԻՏՈՒՄ ԱՆԿԻՆԻՍԻՆՈՒՄ Վ. ՀԱՄԱՐԱԲՈՒՄԱՆԻ 20Տ.— Երեւանի պետական համալսարանի դասչինում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համարաբոմյանի հանդիպումը համալսարանի դասախոսների և ուսանողների հետ։ Հարգելի ակադեմիկոսը ներկա եղողներին պատմեց վերջինս դեպի Անգիա կատարած իր ուղեգրութեան մասին, որտեղ նա հյուր էր եղել անգլիոցի մի խումբ գիտնականների հրախնդով։

Լոնդոնի համալսարանում Վ. Համարաբոմյանը անգլիոցի լեզվով կարողացել է մի շարք դասախոսութիւններ տրվեցական աստղաբանական գիտութեան նվաճումների մասին, իսկ եղել է Մանչեստրում, Էդինբուրգում և Անգլիայի այլ քաղաքներում, ուր հանդիպումներ է ունեցել անգլիական գիտնականների և ուսանողների հետ։

ԲՈՒՄ-ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՆԱՐԱՆ.— Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի հրատարակութեամբ լույս տեսավ ռուս-հայերեն նոր բառարանի առաջին հատորը։ Շուրջ 100 մամուլ ծավալ ունեցող այս հատորը կազմել են Գիտութիւնների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի աշխատակիցներ Մ. Գեորգյանը, Հ. Համարաբոմյանը, Ե. Տեր-Մինասյանը, Վ. Փոթեյանը, ակադեմիկոս Գ. Ղափանցյանի, Էդ. Աղոյանի և Բ. Մելքոնյանի գլխավոր խմբագրութեամբ, Հատորը լույս է տեսել 20.000 օրինակ տպաքանակով։

Ռուս-հայերեն այս բառարանի հրատարակումը, որին ձեռնամուկ է եղել Ակադեմիայի Լեզվի ինստիտուտը, կուրաուրական նշանակալից իրադարձութիւն է ռուսագիտական կյանքում։ Բառարանը թաղկացած է չինելու 4 հատորից և պարունակելու է ռուս գրական լեզվի մոտ 100.000 բառ իրենց ոճերով, սկզբած Պալեկիի դարաշրջանի միջին մեր օրերը, ներկայումս հրատարակութեան է պատրաստվում բառարանի երկրորդ հատորը։

ԵՐԵՎԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Ընթացիկ 1954 թվականին զգալի աշխատանք կատարվեց Երևանի փողոցների հետագա բարեկարգման ուղղությամբ:

Ավարտվեց Կոմիտասի փողոցի վերաակոսողումը: Այդ փողոցի լայնքը այժմ հավասար է 50 մետրի: Այն հիմնականում ասֆալտացատված է: Փողոցի երկու կողմերում կառուցվում են հասարակական և քանկային շենքեր: Վերականգնվեցին և բարեկարգվեցին Նալբանդյան, Մարգարի, ինչպես նաև գործարանային Թաղամասի մի շարք փողոցներ:

ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԸՆԳՐԱԶԱԿՈՒՄԸ.— Ընթացիկ 1954 թվականին Հայաստանի մի շարք շրջաններում շարունակվում էին նոր շրանցների կառուցման և ընդլայնման աշխատանքները: Ավարտվեց Ստորին-Հրազդանի շրանցի երկրորդ հերթի շինարարությունը: Այդ շրանքը այժմ հասնում է մինչև Հոկտեմբերյանի շրանք և ուսկույմ անընդիմ հողային ընդարձակ տարածություններ:

Չնայած ձմռան ճգնաժամներին, արագ թափով շարունակվում են Արդեն-Շամիրամ, Կոտայքի և Թալինի շրանցների կառուցման աշխատանքները: Ընդարձակվում է ոռոգման ցանցը Վեդու, Արտաշատի և Էջմիածնի շրանքներում: Այդ աշխատանքները հնարավորություն կտան 1955 թվականի գարնանը հիշյալ շրանքներում յուրացնելու հողային նոր տարածություններ:

ՍԵՎԱՆԻ ԼՃԻ ԱՓԵՐԻ ԱՆՏԱՌԱՊԱՆՈՒՄԸ.— Զրադյան զենի վրա շրային էլեկտրակայանների կառուցման հետևանքով Սևանի լճի մակերեսը զգալիորեն կրճատվել է: Ընտաղայում լճի մակերեսն ավելի կկրճատվի, որը կարող է րացապատող անդրադառնալ Սևանի ավազանի կլիմայի վրա: Այդ րանը կանխելու նպատակով, կառավարության որոշմամբ խորոր աշխատանքներ են կատարվում ջրերից ազատվող տարածությունները անտառապատելու համար: Աշխատանքները առաջ տանելու համար Մարտունիում ստեղծված է Հատուկ անտառային տնտեսություն:

Ընթացիկ 1954 թվականին անտառային տնտեսությունը կատարել է ավելի շատ աշխատանք, քան նախատեսված էր: Տնկված է ավելի քան 7.000.000 ծառ: Անցյալ տարիների տնկումների հետ միասին, լճի շուրջը գցված երկտասարդ անտառների տարածությունը հասնում է մի քանի հազար հեկտարի: Ներկայումս անտառային տնտեսությունը պատրաստվում է գարնանային տնկումներին: Ձեռք են

բերված տրակտորներ, ավտոմեքենաներ, հող մշակող գործիքներ: Տնտեսությունն ունի իր սեփական տրեկարանը, որը լրիվ կարող է ապահովել անհրաժեշտ քանակությամբ տեխնիկով:

ԺԱՐՏԱՐԱՊԵՏ Ն. ԲՈՒՆԻԱՔՅԱՆԻ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՎԱՆ.— Հայաստանի ճարտարապետների միությունը դեկտեմբերի 9-ին Երևանում կազմակերպել էր երեկո՝ նվիրված սովետահայ ակադավոր ճարտարապետ Ն. Բունիաթյանի հիշատակին: Ժարտարապետության թեկնածու Կ. Հովհաննիսյանը ներկա եղողներին ծանոթացրեց Ն. Բունիաթյանի կյանքի և գործունեության հետ:

Ն. Գ. Բունիաթյանը 1914 թվականին ավարտել է Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան: Այդ շրջանում նա մասնակցել է Անիի և Գառնիի ամրոցի պեղումներին: Նա հեղինակ է հայկական ճարտարապետության հարցերին նվիրված մի շարք արժեքավոր աշխատությունների, ինչպիսիք են «Գառնիի հիթանոսական տաճարի լափագրությունը», «Անիի պալատական եկեղեցին» և այլն:

1924 թվականին Ն. Բունիաթյանը տեղափոխվում է Երևան և նվիրվում Մովսեսիան Հայաստանի մշտաբազմա Երևանի վերակառուցման մեծ ու պատվավոր գործին: Նրա նախագծերով Երևանում կառուցվել են 70 խոշոր շենքեր, որոնց թվում Երևանի քաղաքի և Սևանի հյուրանոցները:

Ժարտարապետների տանը բացվել է պրոֆեսոր Ն. Բունիաթյանի աշխատանքներին նվիրված ցուցահանդես:

ԱՐԳՈՒՆԱԲԵՐԱՎԱՆ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ.— Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները նախատեսված ժամկետից մի քանի օր շուտ կատարեցին համախառն արտադրանքի թողարկման 1954 թվականի ծրագիրը: Նախորդ 1953 թվականի համեմատությամբ թողարկված է 16 տոկոսով ավելի արտադրանք:

Ընթացիկ տարում հնարարչիկայի ձեռնարկություններում յուրացված է ավելի քան 150 տեսակի արդյունաբերական գտնադան սպարանքների, մթերքների թողարկումը:

ՆՈՐ ԿԻՆՈ-ԹԱՏՐՈՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Երևանում, Ստալինյան պողոտայի վրա, բացվել է նոր կինոթատրոն, որը կոչվում է «Նախիջ»:

Կինո-թատրոնի ղեկավարը հանդիսատեսը 400 ավտոներով, ճաշակով կահավորված սպասարան և այլ հարմարություններ:





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՎԱՋԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՆՃՅԱՆ

(Առաջնորդ Ռուսմանայ քիմի)

ԲՈՒԼՆԱՐԱՀԱՅ ԳԱՆՈՒԹԸ ԱՅՍՈՐ

Քուղար ժողովրդական Հանրապետությունը Բալկանյան ալբերկիրներին մին է, որ 1914-ի սեպտեմբերին, ազատագրված ըլլալով շնորհիվ սովետական պատմական հաղթանակին, տասը տարիներ ի վեր ահա կերտուցանե իր նոր կյանքը՝ ազգային անկախությամբ, շինարարության ու խաղաղության պայմաններու մեջ՝ քուղար աշխատասեր ու հառաջդիմասեր ժողովուրդի բոլոր հայրենասեր ուժերու հռանդուն, ստեղծագործ ու կարգապահ գործակցությամբ։

Նոր Թուղարի մեջ նոր կյանքի կոչված է նաև երկրին հայ ազգաբնակչությունը—շուրջ 21.000 հոգի—որ շնորհիվ 9 սեպտեմբերին վերջ ստեղծված պայմաններուն, կարողացած է կազմակերպել իր հասարակական կյանքը՝ թե՛ կրոնական, թե՛ ուսումնական, թե՛ մշակութային ու հայրենասիրական տեսակետ, ինչ որ մենք մեծ գոհունակությամբ և բուղար ժողովրդական իշխանության հանդեպ խոր նրախաղաղական զգացումներով հաստատեցինք, բուղարահայ թեմը այցելելու առթիվ, տարվույս սեպտեմբեր ամսուն։

Այս պատմական հայ գաղութին կյանքի ներկա պատկերը տալիս առաջ, կարժե ակնարկ մը նետել անոր պատմական անցյալին վրա, որ անգամ մը ևս ցույց կուտա մեր ժողովուրդի փոթորկահույզ հակառակորդ անցնող դարերու ընթացքին։ Թեև ցարդ ամբողջական և գիտական ուսումնասիրություն մը չէ հրատարակված ի մասին բուղարահայության պատմության, սակայն մենք կարողացանք որոշ ստույգ տեղեկություններ ստանալ պլովդիվաթնակ հայ մտավորականե մը՝ պարոն Ներսես Գասպարյանե, որ ամբիջ քան քսան տարիներ ի վեր անխռնջ պրպտումներ կկատարե այդ արդությամբ, օգտվելով հայ, բուղար և օտար, նոր ու հնագույն հեղինակներու գործերէն։ Փափագելի է, որ պարոն Գասպարյան իր սկսած աշխատանքը իր լրումին հասցնե և ըստ կարելույն, ամբողջական ուսումնասիրության մը ձևին տակ, հրատարակե իր հավաքած նյութերը, որով թանկագին ժառանգություն մը մատուցած պիտի ըլլա հայ գաղութներու պատմագիտության կարևոր գործին։

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Առաջին հայերը, որ ոտք դրած են Ռրակիա, և հետևաբար այժմյան Թուղարի հարավային կողմերը, հղած են զինվորական գունդեր, որոնք 5-րդ դարուն, Վարդանանց հերոսամարտին հետո, 460-ական թվականներուն, հեռացած են իրենց հայրենիքէն՝ խուլյս տալու համար պարսկական հալածանքներէն։

Երկրորդ հոսանքը եկած է հայրդ դարուն Հուստինիանոս (527—565) և Մորիկ (582—602) կայսրերու օրով, օրոնք հայ գաղթականություն բերած ու բնակեցուցած են բյուզանդական կայսրության հյուսիսային սահմաններուն մոտ, հիկու նպատակով՝ ռախ որպեսզի ցրվեն ու տկարացնեն հայոց հավաքական ուժը Արևմտյան Հայաստանի

մեջ, որ այդ ժամանակաշրջանին բյուզանդական տիրապետության ներքե ինկած էր, և երկրորդ՝ որպեսզի ապահովեն իրենց կայսրության Թրակիո շրջանի հյուսիսային սահմանները բարձրորոտ ցեղերու արշավանքներու դեմ, 601-ին, նույն Մորիկի հրամանով, 30.000 հայ զինվորներն կազմված լանակ մը Հայաստանն թրակիա կրերվի՝ զինվորական պաշտպանողական գաղութներ հաստատելու նպատակով Դանուբի հարավային կողմերը:

Հայկական տարիչ գաղթներ ղեպի Թրակիա և Մակեդոնիա, զլխավոր կեդրոն ըլլալով Ֆիլիպի քաղաքը (այժմու Պլովդիվ) կհիշատակվին 8-րդ դարուն Կոնստանտին Ե. Կոպրոնիմոսի օրով 760-ին, և նոյն Դ.ի օրով 778-ին, ինչպես և Նիկեիոյ Ա.ի (802—811) և Հովհաննէս Զմյկիկի (969—976) իշխանությանց ժամանակ:

Հայ գաղթականության կարևոր հոսանք մը ղեպի լուսաւորաց երկիր կուղւղվի 9-րդ դարուն, Բորիս իշխանի քրիստոնեությունը լոնդունելու շրջանին (864 թվականին): Հայաստանէն փախչող հայ պալիկայաններն են անոնք, որ ապաստան կգտնեն նոր կազմակերպվող բուլղար պետության սահմաններին ներս, և այնտեղ կհաստատեն իրենց բնակությունը:

Ժամանակակից օտար պատմիչներ ու ճամբորդներ բազմաթիւ վկայություններ կրերեն ի մասին հայոց ներկայությունը Բուլղարիո մեջ, վերև հիշված ժամանակաշրջաններուն: Կհիշվին նաև հայ եկեղեցիներ ու վանքեր, հայ քահանաներ, վարդապետներ ու եպիսկոպոսներ, ինչ որ ցույց կուտա, թե հայերը այդ հնազույն ժամանակները ունեցած են կրոնական-ազգային կազմակերպված կյանք, իրր կեդրոն ունենալով Ֆիլիպին: Շուրջ 1000 թվականին, այս հինավուրց քաղաքին որպես կուսակալ կհիշատակվի հայազգի պատրիկ Թեոդորոֆոնը, որուն ազդեցությունը կտարածվեր նաև Ադրիանուպոլսո վրա: Իսկ իր օգնականը նույնպես հայազգի՝ Հովհաննէս Պրոքսիմոս, հայերեն ավետարան մը գրել կուտա 1007-ին, որ այժմ կգտնվի Վենետիկ, Միխիթարյան հայրերու ձեռագրատան մեջ: Նույն դարուն պետք է հիշել Վրաստանէն եկած Գրիգոր Բակուրյան անվամբ հռոմագական հայազգի իշխանավորը և իր եղբայրը Արթաս, որոնցման առաջինը վանք մը կառուցած է 1084 թվականին Ֆիլիպի մոտ (30 կիլոմետր հեռավորության վրա), այժմու համբավավոր Պաշկովոյի Պոկոտոտիցա վանքը:

Հայ գաղթականության նոր հոսանք մը կսկսի 14—15-րդ դարերուն՝ Ղրիմէն և հյուսիս-գանուրյան երկիրներէն, ուր հոծ թիվով հարություն մը ապաստան գտեր էր Բագրատունյաց հարստության քայքայումէն վերջ, որ պատմության մեջ ծանոթ է Անիի գաղթականություն անունով: Առավելապես վաճառականներ են անոնք, որ իրենց առևտուրի իրր կեդրոն կընտրեն Վառնան և Ռուսչուկը: Անիի այս գաղթականությունը հետզհետե իր առևտուրի ցանցը տարածելով Ղրիմէն ղեպի Բուլոնիա, ղեպի Մուդավիա, Տրանսիլվանիա և ապա ղեպի դանուբյան և հարավ-գանուրյան երկիրները, պատմական մեծ դեր մը ունեցավ հիշյալ լուրջ երկիրներու տնտեսական կյանքի դարգացման ու ծավալման մեջ, այսպիսով մեծապես սատարելով այդ երկիրներու կազմակերպման ու հզորացման: Հայտնի է, օրինակ, թե 13-րդ դարուն կազմված Մուդավիան փոքրիկ իշխանապետությունը հաջորդ երկու դարերուն հետզհետե զորացավ ու իր քաղաքական գերիշխանությունը տարածեց ղեպի հարավ մինչև Դանուբի բերանները և ղեպի արևելք՝ հայ վաճառականներու առևտուրի ճանապարհներու գծով:

15—19-րդ դարերու ընթացքին, Բալկանյան դրեթն ամբողջ թերակղզին օսմանյան տիրապետության տակ մնալով, Արևմտյան Հայաստանն և Կոստանդնուպոլսին հայ առևտրականների ու արհեստավորներ եկած ու բնակություն հաստատած են Բուլղարիո գանական քաղաքներուն մեջ, իրր նույն կայսրության քաղաքացիներ:

Շուրհիվ սուսական րանակներու 1877-ի հաղթանակին, Բուլղարիո անկախության հռչակումէն հետո, Թուրքիո 1896-ի կոտորածներն փախչող քաղմահազար հայեր եկած ու ապահով ապաստան գտած են Բուլղարիա և Ռումանիա: Այս նոր գաղթականությունը եկած է թարմացնելու հին բուլղարահայ գաղութը, որ դարերու ընթացքին ցրված և ձուլված էր բնիկ տարրին հետ:

Վերջապես, առաջին համաշխարհային պատերազմէն հետո, թրքահայ մեծ գաղթականությունը Բուլղարիա մուտք գործելով, նոր կյանքի կոչեց երկրին հայ ազգաբնակչությունը: Հետևյալ քանի մը վիճակագրական թիվերը հստակ կերպով ցույց կուտան հայերու վերահիշյալ գաղթները ի Բուլղարիա. 1892-ին կատարված պետական վիճակագրությունը Բուլղարիո մեջ կնշե 6.643 հոգի, 1900-ին՝ 13.809 հոգի, 1926-ին՝ 27.322 հոգի, իսկ այժմ՝ շուրջ 21.000 հոգի, 1946-ին Բուլղարիային Սովետական Հայաստան ներգաղթած ըլլալով 6.000 հոգի:

ՔՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Բուլղարիոյ այժմեան հայութիւնը կապրի հետեւյալ 14 քաղաքներուն մեջ. Պլովդիվ (Ֆիլիպս)՝ 6.500 հոգի, Սոֆիա՝ 4.500 հոգի, Ստալին քաղաք (Վառնա)՝ 3.800 հոգի, Ռուսե (Ռուսչուկ)՝ 1.700 հոգի, Բուրկազ՝ 1.300 հոգի, Խասկովո՝ 900 հոգի, Կոլարովգրադ (Շումեն)՝ 750 հոգի, Սլիվեն՝ 530 հոգի, Թաքար-Բազարբը՝ 450 հոգի, Տոլպուխին (Տոպրիչ)՝ 320 հոգի, Սիլիստրեն՝ 260 հոգի, Ստարա Ջագորա՝ 250 հոգի, Ալտոս՝ 105 հոգի, Գամպոլ՝ 38 հոգի, և մեկ-երկու հարյուր հաւեր ևս՝ ցրված քանի մը ալլ փոքր քաղաքներու մեջ:

Վերոհիշյալ բոլոր քաղաքները ունին հայկական քարաշէն եկեղեցիներ և եկեղեցական կազմակերպւած կյանք, որոնց գլուխը կգտնվին հոգևոր հովիւները և համատայալ ժողովուրդի կողմէն ընտրված եկեղեցական վարչութիւնները:

Արձանագրենք ալլ եկեղեցիները իրենց հովիւներով:

1. Պլովդիվ՝ Ս. Գեորգ եկեղեցին, վերանորոգված 1828-ին. հոգևոր հովիւ՝ Ս. Գեորգ քահանա Սարյան:

2. Սոֆիա՝ Ս. Աստվածածին եկեղեցին, նոր կառուցված 1934-ին ազգային շէնքին մեջ (հին եկեղեցին փլցած ըլլալով). հոգեւոր հովիւ՝ Ս. Վահան քահանա Փափազյան:

3. Ստալին՝ Ս. Սարգիս եկեղեցին, կառուցված 17-րդ դարուն և վերանորոգված 1844-ին. հոգևոր հովիւ՝ Ս. Տրդատ քահանա Տոլպարճյան:

4. Ռուսե՝ Ս. Աստվածածին եկեղեցին,

կառուցված 17-րդ դարուն, վերանորոգված 1805 թվականին. հոգևոր հովիւ՝ Ս. Ներսես քահանա Մելքոնյան:

5. Բուրկազ՝ Ս. Խալ եկեղեցին, վերանորոգված 1858-ին. հոգևոր հովիւ՝ Ս. Աթանաս քահանա Խաչատուրյան:

6. Խասկովո՝ Ս. Ստեփանոս եկեղեցին, կառուցված 1924-ին. հոգևոր հովիւ՝ Ս. Նահապետ քահանա Գարայան:

7. Կոլարովգրադ՝ Ս. Աստվածածին եկեղեցին, վերանորոգված 1834-ին. հոգևոր հովիւ՝ Ս. Գարեգին քահանա Տյուրկերյան:

8. Սլիվեն՝ Ս. Ստեփանոս եկեղեցին, կառուցված 1830-ին. հոգևոր հովիւ՝ Ս. Կարապետ քահանա Մերոնյան:

9. Թաքար-Բազարբը՝ Ս. Ստեփանոս եկեղեցին, վերանորոգված 1820-ին. հոգևոր հովիւ՝ Ս. Զաքարիա քահանա Շիրինյան:

10. Տոլպուխին՝ Ս. Հովհաննես Ավետարանիլ եկեղեցին, կառուցված 1830-ին. հոգևոր հովիւ՝ Ս. Հմայակ քահանա Զարդարյան:

11. Սիլիստրեն՝ Ս. Աստվածածին եկեղեցին, հիմնված 17-րդ դարուն, վերաշինված 19-րդ դարուն. հոգևոր հովիւ՝ Ս. Միքայել քահանա Պեդրիճյան:

12. Ստարա Ջագորա՝ Ս. Խալ եկեղեցին, կառուցված 1923-ին. քահանա մը կհովիւն այցելարար:

13. Ալտոս՝ Ս. Աստվածածին եկեղեցին, կառուցված 1933-ին. քահանա մը կհովիւն այցելարար:

14. Գամպոլ՝ Ս. Աստվածածին մատուռ-եկեղեցին, կառուցված 1924-ին. քահանա մը կայցելի երբեմն:

ԹԵՄԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մինչև Համաշխարհային առաջին պատերազմ թուղարահայ թեմը ունեցած չէ թեմական կազմակերպութիւն և ոչ ալ հոգևոր առաջնորդ: Պարբերաբար այցելած են Բուլղարիո հայ եկեղեցիները եպիսկոպոս կամ վարդապետ հայրեր Կոստանդնուպոլսո Պատրիարքարանի կողմէն: Երբեմն, այցելող հոգեւորականները փորձած են եկեղեցիները կազմակերպել ու առաջնորդական աթոռ հաստատել, ինչպես օրինակ 1902-ին Ս. Վահան ծալրադուլն վարդապետ Հակոբյան, սակայն չեն հաջողած: Բուլղարահայոց մեր ժամանակներու առաջին առաջնորդը եղած է Ս. Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյան 1924-ին, որուն հաջորդած է Ս. Նրվանդ արքեպիսկոպոս Փերտահճյան: Իսկ 1936-են մինչև 1950 աշնան, Ս. Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանն է պաշտօնավարած իբրեւ թեմի առաջնորդ, որ չորս տարի առաջ

հրաժարելով իր թեմէն մեկնած է Թյուրքիա: 1950-ին, թեմական խորհուրդը իբր առաջնորդական տեղապահ ժամանակավոր կերպով նշանակած է Ս. Աթանաս քահանա Ալվազյան, որ իր հառաջացած տարիքին հետեանքով վախճանած է 1952-ին: Վերջին չորս տարիներու ընթացքին թեմին բոլոր գործերը ղեկավարած է թեմական խորհուրդը առանց հոգևոր առաջնորդի: 1949-ին Բուլղարիո մեջ առաջին անգամ ըլլալով, Հայաստանայց Եկեղեցիվ թեմական կազմակերպութիւնը ունեցած է իր կանոնադրութիւնը, վստիքացված բուլղարական պետական իշխանութիւն կողմէ՝ խղճի ազատութիւն և կրօնական դավանութիւննց անկաշկանդ կազմակերպման Դիմիտրովյան սահմանադրութիւն սկզբունքներու հիման վրա: Այդ նոր կանոնադրութիւն տրամադրութիւններու համաձայն, 1949-ին ընտրված է

թեմական խորհուրդ Սոֆիայի մեջ, իսկ 1954-ի օգոստոս 29—30-ին տեղի ունեցավ բուլղարահայ թեմի պատգամավորական ժողովը Սոֆիայի մեջ, որում ներկա եղանք իսկ ներկայացուցիչ Մայր Աթոռու:

Բուլղարահայ թեմը, թեև չորս տարիներ շարունակ հոգևոր առաջնորդ չէ ունեցած, սակայն շնորհիվ բուլղար ժողովրդական իշխանության ստեղծած օրինական և գործնական բարենպաստ պայմաններում, շնորհիվ թեմական խորհուրդի և եկեղեցական վարչությունների և քահանայից դասուն անձնվեր գործունեության, երկրին հայ եկեղեցիները շեն ու պայծառ կացություն մեջ կգտնվին թե՛ հոգևոր, թե՛ վարչական և թե՛ նյութական տեսակետներով: Թեմական պատգամավորական ժողովը, որում աշխատանքներում ներկա եղանք, կպատկերացնեն հարազատ պատկերը այն շեն ու պայծառ եկեղեցական կյանքին և այն ազատության ու բարենպաստ պայմաններում, որ ստեղծած են երկրին օրենքները կրոնքի և եկեղեցական կաղմակերպությանը նկատմամբ: Ահա թե ինչու, ի նշան սիրո ու երախտագիտության՝ հանդես բարխանամ պետական իշխանության և հանդես բուլղար ժողովուրդի մեծ զավակ և առաջնորդ Գեորգի Դիմիտրովի, որ հիմնադիրն է դեմոկրատական նոր Բուլղարիո, թեմական պատգամավորական ժողովը իր ամբողջ կազմով, 32 հոգևորական և աշխարհական պատգամավորներ, թեմական խորհուրդը և Սոֆիայի եկեղեցական վարչության անդամները, եկեղեցվո պաշտոնյաները և ուրիշ ազգայիններ հանդիսավոր մեծ թափով մը կազմած մեր գլխավոր մեծ ժողկենպսակ մը զետեղեցինք հանգուցյալի դամբարանի առաջ, 30 օգոստոսին:

Մեկ ամիս Բուլղարիա մնալով և այցելելով յոթ հայաշատ համայնքներ, հաստատեցինք, թե այս հյուրընկալ երկրին մեջ կենդանի է Հայ եկեղեցին և թե անոր շուրջ համախմբված է մեր ամբողջ ժողովուրդը անխտիր՝ ուղիղ ու վառ հավատքով ոգեշնչված: Հաջորդաբար այցելեցինք Սոֆիայի, Պլովդիվի, Բուրկազի, Սլիվենի, Ստալինի, Կուլարովգրադի և Ռուսեի հայոց եկեղեցական համայնքները, ամեն տեղ սուրբ պատարագ մատուցանելով և քարոզելով հավատացյալ

ժողովուրդին, որ թե՛ երկկույան ժամերգության և թե՛ մանավանդ սուրբ պատարագի արարողություններում, հոծ թիվով ներկա կըլլար հոգևոր մխիթարություն ստանալու աստվածահաճո եռանդն ուղղված: Եկեղեցիներու սրահները անբավարար գալով, Պլովդիվի, Ստալինի և Բուրկազի մեջ հարկ էր եղած եկեղեցվու բակին մեջ քարձրախոսներ զետեղել, որպեսզի դուրսը մնացած մեծ թիվով ժողովուրդը կարենա հեռելի սրբազան արարողություններում:

Սուրբ պատարագի ընթացքին մեր քարույր դիմավոր նյութը եղավ խոսիլ երջանկահիշատակ մեր Վեհափառ Հայրապետի՝ Տ. Տ. Գեորգ Զ. հանգուցյալ Կաթողիկոսի եկեղեցանվեր և հայրենանվեր գործի մասին, նկատարելով մեծագործ մեր Հովվապետի թաղման մեծաշուք պարողությունը, որ ամենախոր տպավորությունը թողուց ժողովուրդին վրա: Սեպտեմբերի 12-ին, Ս. Նաչի վերացման տոնին, Բուրկազ գտնվելով, սուրբ պատարագեն վերջ նախադահցի մասադօրհնության արարողության, ինձ համար մխիթարական եղավ հաստատել, թե Բուլղարիո գրեթե քոլոր եկեղեցիները կպահեն մատաղօրհնության հայկական հիմն ավանդությունը:

Եկեղեցական վարչությանը կողքին արժանի են գնահատանքով հիշվելու հոգևոր հովիվները, սարկավաղներն ու դպիրները, որոնք ընդհանուր առմամբ լավ պատրաստված, եռանդուն ու անձնվեր սպասավորներ են Ս. Սեդանին և հավատացյալ ժողովուրդին: Մասնավոր գնահատանքի արժանի են դպրաց դասերը և երգեցիկ խումբերը: Մեր վրա բացառիկ տպավորություն թողուցին Պլովդիվի, Սոֆիայի, Կուլարովգրադի, Ստալինի և Ռուսեի երգեցիկ խումբերը և, առհասարակ, սրբազան արարողություններու ընթացքին հոգեշունչ երգերն ու ընթերցումները, որոնք կատարվեցան հարազատ հայկական ոճով ու ընտիր ճաշակով: Այս տեսակետեն արժանի է նշվելու Պլովդիվի հմուտ դպրապետ և խմբավար Սարգիս Պալթայանը, որում ավելի քան քառասուն հոգիներն կազմված եկեղեցական երգչախումբը հավասար հաջողությամբ երգեց թե՛ եկեղեցական, թե՛ Կոմիտասի պատարագները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅԹԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգտվելով Բուլղարիա մեր այս առաջին ճանապարհորդությունն, այցելեցինք Բուլղար Թրթուրքս քույր եկեղեցվո քարձրաստիճան ներկայացուցիչներ և շարք մը պատմական վանքեր ու եկեղեցիներ, միշտ և ամեն տեղ գտնելով ամենաքեզմ եղբայրական ընդունե-

լությունը: Այսպես՝ 1 սեպտեմբերին այցելեցինք Սոֆիայի Վելեքսանդր Նևսկիո հոյակապ Մայր Տաճարը, 4 սեպտեմբերին՝ Պլովդիվի մոտ գտնվող Պաշկովոյի հուլիսավոր Պոկոտոտիցա վանքը և հաջորդ օրը Նույն քաղաքի Կոնստանտին և Հելենա հիմնավորց

եկեղեցին, ինչպես նաև քաղաքի Մայր Եկեղեցին, 8 սենյտեմբերին՝ Սոֆիային 120 կիլոմետր հեռու գտնվող Ս. Հովհաննես Ռիլացիի հիշատակին նվիրված բուլղարական մեծագույն վանքը, Սոֆիայի ռումանական եկեղեցին, Սլիվենի Մայր Եկեղեցին, Ստալին քաղաքի մեծակառույց Մայր Տաճարը և այլ սրբավայրերու Այցելեցինք նաև Սոֆիայի հրեից տաճարը, ինչպես նաև պատմական մզկիթները Պլովդիվի (Ուլու շամի) և Կոլարովգրադի (Տումբուլ շամի)։

Բացառիկ երջանկություն մը եղավ մեզ համար ծանոթանալ Բուլղար Նկեղեցվո նորընտիր Հովվապետ Նորին Սրբություն Տ. Տ. Կիրիլ Սրբազան Պատրիարքի հետ, որ աչնովաշուք և հեղինակավոր հոգևորական մըն է և միաժամանակ գիտնական մը պատմություն գծով։ Ծանոթացա նաև Ս. Սինոդի ընդհանուր քարտուղար Տ. Իոնա սրբազան եպիսկոպոսին, Սլիվենի միտրոպոլիտ Տ. Նիկողիմոս սրբազան արքեպիսկոպոսին, Ստալինի միտրոպոլիտ Տ. Իոսիֆ սրբազան արքեպիսկոպոսին, ինչպես և հրեից և մահմեդականաց կրոնապետներուն հետ։

Իբրև ներկայացուցիչ Ս. Էլմիաժնի Գե-

րագույն Հոգևոր Խորհուրդի, պատշաճ հարգանքով ու մեծարանքով ընդունվեցանք պետական իշխանությանց կողմեն, Մեր ունեկրնդրությունը բուլղար դավանությանց նախարար Միխայիլ Քյուլյուկովի մոտ շատ չեք մթնոլորտի մը մեջ տեղի ունեցավ և մենք այդ առթիվ անգամ մը ևս տեսանք Բուլղար ժողովրդական Հանրապետության ուշադիր և բարյացակամ վերաբերումը հանդեպ մեր Նկեղեցիին ու մեր ժողովուրդին։ Հարգելի պարոն նախարարը իր խոսքը վերջացուց փափագ հայտնելով, որ մոտ ապագային մեջ, բուլղարահայ թեմը իր արժանավոր առաջնորդը ունենա, խնդրելով միաժամանակ, որ Բուլղարիո կառավարության և իր ամենահարգելի զգացումներուն թարգմանը հանդիսանանք Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհուրդի մոտ։ Մեր այցելությունը պուլպուկալիով բուլղար ժողովուրդի ազատագրման տասնամյակի հանդիսությանց, սենյտեմբեր 9-ին պաշտոնապես հրավիրվեցանք հանդիսատես ըլլալու գինվորական տողանցքին և երեկոյան՝ նախարարաց խորհուրդի պալատին մեջ տեղի ունեցող մեծ ընդունելության։

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Շահեկան կհամարենք ակնարկ մը նետել նաև բուլղարահայ վարժարաններու կացություն վրա, որ նույնքան մխիթարական պատկեր մը կներկայացնեն, ինչքան եկեղեցիներու։

Վիճակը Բուլղարիո հայոց վարժարաններու թիվն է տասնևմեկ, մոտ հազար յոթ հարյուր երկսեռ աշակերտներով, հետևյալ կերպով բաշխված հայաշատ քաղաքներու վրա.

1. Պլովդիվ՝ յոթնամյա երկսեռ նախակրթարան և մանկապարտեզ՝	587	աշակերտ.	
2. Սոֆիա՝ » » » » » »	310	»	
3. Ստալին՝ » » » » » »	320	»	
4. Ռուսե՝ քառամյա » » » » » »	70	»	
5. Բուրլազ՝ յոթնամյա » » » » » »	126	»	
6. Խասկովո՝ քառամյա » » » » » »	60	»	
7. Կոլարովգրադ՝ » » » » » »	38	»	
8. Սլիվեն՝ » » » » » »	և մանկապարտեզ՝	50	»
9. Թաթար-Բազարջըզ՝ » » » » » »	20	»	
10. Տոլպուխին՝ » » » » » »	17	»	
11. Ստարա Զագորա՝ » » » » » »	14	»	

Հայոց բոլոր վարժարաններու նյութական ամբողջ մատակարարությունը ստանձնած է բուլղար պետությունը։ Ինչպես Ռումին Ժողովրդական Հանրապետության, Շուվայես և Բուլղար Ժողովրդական Հանրապետության մեջ, մեր ազգային վարժարանները՝ դասավանդությունը հայերենով պետական դրպոցներ են։

Հայերեն լեզուն կավանդվի բոլոր դասարաններում մեջ, շաբաթական 8 պահ Ա—Գ դասարանները, շաբաթական 6 պահ Դ—Ե

դասարանները և շաբաթական 5 պահ Զ—Ի դասարանները։ Վերի դասարաններում մեջ կավանդվի նաև հայոց պատմություն և Սովետական Հայաստանի աշխարհագրություն։ Հայերեն լեզվի բոլոր դասագրքերը կստացվին կանոնավորապես Սովետական Հայաստանեն։

Թեև այժմ հայոց լեզվի ուսուցիչները թիվով և որակով բավարար են, սակայն տեղաժամ լլլալով անոնցմե շատերուն հառաջացած տարիքը, գալիք տարեշրջաններում սուր

կարիքը պիտի զգացվի որակյալ թարմ ուժերով՝ ձեռնհաս կերպով ավանդելու համար մեր մայրենի լեզուն։

Որպեսզի բուլղարահայ վարժարաններու ներքին վարչական ու մանկավարժական կյանքին մեջ նույնանման դրույթուն մը տիրե, վերջին տասը տարիներու ընթացքին տեղի ունեցած են հրեք ուսուցչական համալուծարներ, որոնք իրենց բարերար ազ-

դեցություններ թողած են հայ վարժարաններու կյանքին վրա։

Հայ դպրոցներու շրջանավարտները, առանց որեւէ դժվարության հանդիպելու, իրենց ուսումը կշարունակեն բուլղարական պետական երկրորդական (միջնակարգ) և բարձրագույն ուսումնական հաստատությանց մեջ։ Այժմ Սոֆիայի, Պլովդիվի և Ստալինի համալսարաններուն մեջ կուսանին 250 հայ ուսանողներ և ուսանողուհիներ։

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Բուլղարահայոց նոր կյանքի պատկերը լրիվ կերպով տալու համար կարելի չէ կանգ լառնել «Երեան» միութիւնի գործունեության վրա, որ հիմնված ըլլալով 9 սեպտեմբեր 1944-ին անմիջապէս հետո, դարձած է հայ ազգարնակչության մշակութային-հայրենասիրական հեղինակավոր ու սիրված կազմակերպությունը, որ իր մեջ կամփոփե հայ գաղութի բոլոր անդամները և իր գործոն կյանքին շուրջ կհամախմբե բոլոր կենդանի ուժերն ու իրական արժեքները։

«Երեան» միութիւնն վերին մարմինը Սոֆիայի կեդրոնական կոմիտեն է, որ կղեկավարե երկրին տասնեւորս հայաշատ քաղաքներու մասնաճյուղերու կազմակերպությունները։ Մասնաճյուղերը ունին վարչական մարմիններ, օժտված, ուր որ անհրաժեշտ է, օժանդակ ենթամարմիններով, ինչպիսին են՝ գրասիրաց բաժնի, երիտասարդաց բաժնի, կանանց բաժնի մարմինները կամ հանձնախումբերը։ Բոլոր մասնաճյուղերը կազմակերպած են երգչախումբեր, պարախումբեր, թատերական բաժիններ, ումանք նաև նվագախումբեր, որոնք փայլուն գործունեություն մը ունին ո՛չ միայն հայ գաղութին ծոցին մեջ, այլ նաև կմասնակցին բուլղարական երաժշտական կյանքին, հանդիսավոր առիթներով, մեծ հաջողություններ արձանագրելով, և պաշտոնական մարմիններու ու հրատարակություններու կողմն մեծապէս գնահատվելով։ Երգչախումբերը կազմված են 60—120 երգիչներէ, Պլովդիվի մասնաճյուղը ունի նաև օպերայի 65 հոգինոց անձնակազմով բաժին մը, որ վերջերս շատ հաջող կերպով բեմադրած է «Անուշ» օպերան։ «Երեան» մասնաճյուղերը, բոլորն անխտիր, ունին իրենց սեփական ակումբները և դահլիճները, գրադարաններն ու բացօդայ հավաքատեղիները, ընդհանրապէս ազգային սեփականություն եղող շէնքերու մեջ։

Միութիւնն պաշտոնական օրգանն է «Երեան» շաբաթաթերթը, որ լույս կտեսնե մայրաքաղաքին մեջ 1.600 օրինակ տպաքանակով։ Կարդացված ու գնահատված թերթ մըն է։

Բուլղարահայ գաղութը ունի նաև ազգային ծերանոց մը Ռուսեի մեջ, «Անաստաս Միկոյան»ի անվան, որուն նյութական մատակարարությունը ստանձնած է բուլղար պետական իշխանությունը։

Նոր Բուլղարիան այցելող մը չի կրնար չտեսնել ու լղնահատել այն գործոն դերը, որ եռանդով ու շինարար ոգիով ստանձնած են մեր ժողովուրդի զավակները՝ իրենց Բուլղար Հայրենիքի նոր երջանիկ կյանքին կառուցման ի խնդիր, աշխատանքի ու նվիրումի այս ազնիվ ճամբուն վրա արձանագրելով այնպիսի փայլուն արդյունքներ ու նվաճումներ, որոնցմով հայ ժողովուրդը կրնա իրավամբ հպարտ ըլլալ։ Հիրավի բազմաթիվ հայեր արժանացած են սաշխատանքի հիրտանքի, աստախանութականքի, ծնորարարքի և «վաստակավոր» արտավարքի տիտղոսներուն՝ կյանքի բոլոր ասպարեղներուն մեջ։

Բուլղարահայ ժողովուրդը իր հարազատ քաղաքացիի պարտքը փատարելով Բուլղարիայի ու բարեկամ Հայրենիքին հանդեպ, չի մոռնար միաժամանակ իր հայրենաբաղձ հայացքը ուղղել դեպի իր վերածնած Մայր Հայրենիքը, դեպի իր պաշտելի Սովետական Հայաստանը, որուն կյանքն ու կյանք կառնե ան, որուն վերելքով կհպարտանա ու կենըրնչվի, որուն ոսկի ապագայի հեռանկարով կողեւորվի ու կհրճվի, և կերաղե իր հոգիի բոլոր ուժերով՝ յուսավետ օր մը ողջունել այդ ոսկի ապագան Մայր Հայրենիքի նվիրական հոգին վրա։

Սուրբ է այդ իրազը, և մենք կխոնարհինք սուր առաջ...

12 հոկտեմբեր 1954,

Բուրբուր

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ԱՇՈՏ ՊԱՏՄԱԳՐԹԱՆԻ ԶԳԱՅԱՑՈՒՆՑ ՄԵԿ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՄՐԻՔԻ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԵՋ

Արեւելագետներու միջազգային ընկերու-
թյան 23-րդ համաժողովը այս տարի տեղի
ունեցավ Քեմբրիջի մեջ, օդատուտ ամսույի
վերջին շաբաթը:

Այդ համաժողովը կը տնօրէնուի երեք տարին
անգամ մը (վերջինը, ինչպէս կ'հիշվի,
1951-ին տեղի ունեցավ Սաւաթթու):

Հստակ ըլլալով, որ հայտնի երաժշտագետ
պարոն Աշոտ Պատմագրայն, որ անգամ է
այդ ընկերութեան, հրապարակած էր պաշտպա-
նելու այն թեզը, որուն համաձայն ժողովրդ-
դական, արվեստի տարրերը առաջին անգամ
ու թե Գերմանիո մեջ գործածված են եկեղե-
ցական երգերու համար 16-րդ դարուն. այլ
Հայաստանի մեջ և ան ալ Գերմանիային
չորս դար առաջ, կ'փութամ իր մոտ՝ տեսակ-
ցութեան մը ունենալու համար իրեն հետ,
ապահով ըլլալով, որ տաղանդավոր երաժշ-
տագետին շահեկան հայտարարութիւնները
հետաքրքրութեամբ պիտի կարդացվին մեր
ընթերցողներուն կողմէ:

Միշտ սիրալիք ու պատրաստակամ՝ մեր
արվեստագետ քարեկամը սիրով պատաս-
խանեց մեր հարցումներուն, որոնք կամփո-
փեմ ստորեւ.

— Դուք ընտրեցիք ձեր նյութը, թե իրենց
առաջարկեցին:

— Ես առաջարկած վի ներկու նյութ.
ա) Պարսկական երաժշտութեան ազդեցու-
թիւնը արեւմտեան երաժշտութեան վրա և
բ) ժողովրդական տարրերու գործածութեա-
նը հայ եկեղեցական երաժշտութեան մեջ
12-րդ դարուն: Ուրախ եղա, որ Երկրորդ
նյութս ընտրեցին:

— Ո՞ր երկրներն են եկած էին պատգամա-
վորները և քանի՞ հոգի էին. դուքս են ալ
ունկեղիւններ կային:

— Հնդհանուր պատգամավորներու թիւը
մոտ 1.050 կ'հաշվեն, ամենքն ալ տախարհի
բոլոր ծայրերն անվանի արեւելագետներ,
ճարտէն մինչև Ամերիկա: Անոնցմէ ուսանք
եկած էին իրենց պետական համալսարան-
ներուն կողմէ, իսկ ուսանք ալ՝ իրենց սնն-
նական միջոցներով: Թրքական պատվիրա-
կութիւնը կը ազգական տասը հոգի, սով-
տականը ամենէն քաղմամարդն էր՝ 21 հո-
գի: Կային Հայաստանէն և Պարսկաստանէն
ալ պատգամավորներ:

— Կհաճի՞ք քանի մը քաջատրութիւններ
տալ ձեր թեզին համար գործածված փաստա-
րուն մասին:

— Եւրոսեւ Շնորհալիին մասին իր ժամա-

նակակից պատմիչները լայն տեղեկութիւն-
ներ կ'ուտան մեզի: Ասկե զատ, անոր ձգած
դրական ու երաժշտական ժառանգութեան
վերլուծումը քավական կօզնե մեզի ապահո-
վաքար հայտարարելու, որ ան առաջինը ե-
ղած է, որ ժողովրդական եղանակներու և
քառամթերքի գործածութիւնը մտցուցած է
եկեղեցիէն ներս: Այս վերլուծման համա-
ձայն անոր երգերուն մեջ կնկատենք.

ա) Տաղաշարիւթյան նոր կերպեր, որ ա-
ռաջին անգամ գործածուած է և սակայն անոնք
գոյութիւն անեկին ժողովրդական և գուսա-
նական երգերու մեջ:

բ) Կշռույթի նոր ձևեր:

գ) Ձայնաշարերու նոր տեսակներ, զորս
առաջին անգամ ան գործածած է իր երգե-
րուն համար:

դ) Արտահայտութեան պարզութիւն, որ
հասուկ է իր երգերուն:

— Գիտնականներու այս համաժողովին
մեջ կային արդէն մարդիկ, որ տեղեկու-
թիւն ունենային Հայ եկեղեցիի պատմու-
թեան և առավելապէս անոր արվեստի պատ-
մութեան մասին: Խոսեցա՞ք արդէն այդ
մասին ալ:

— Օտար արվեստագետները գիտեն ընդ-
հանրապէս մեր պատմութիւնը, ինչպէս նաեւ
մեր եկեղեցական պատմութիւնը: Ինչ որ,
սակայն, իրենց համար նորութիւն մըն էր՝
12-րդ դարուն մեր եկեղեցիին մեջ տեղի ու-
նեցած այս կարևոր անկլունադարձն է, որ
համաշխարհային առումով նշանակալից է:
Եվրոպական երաժշտութեան մեջ այս շար-
ժումը առաջին անգամ տեղի ունեցած է
16-րդ դարուն Գերմանիո մեջ, ուր Հայերի
Իդահակ Լուսովիկ ՁենՖ և ուրիշներ եկեղե-
ցական երաժշտութիւնը կաթոլիկ եկեղեցիի
կաշկանդումներէն ազատելու համար, գի-
մեցին ժողովրդական երգի օգնութեան, քա-
նալով արեւմտեան երաժշտութեան համար
նոր դարաշրջան մը:

— Օրինակներ ալ տվի՞ք:

— Անշուշտ: Նախ՝ բազմաթիւ երգերու
նոտաներն քարտեաներ պատրաստուած էի
մեկ կողմէ Շնորհալիի մեզի հասած եղա-
նակներուն, մյուս կողմէ ժողովրդական հա-
մանման երգերուն, որով օտարներուն համար
շատ հետաքննարկելի տեսանկիւ կը լայն եր-
կու խումբերուն ձայնաշարական, կշռութեա-
լի, տաղաշարիական նմանութիւնը, յրսե-
լու համար նուշութիւնը: Ապա, երգով ալ
ափելի ցայտուն կերպով ցույց տրվեցավ այդ
պարագան:

— Ձեր այս դասախոսությունը անպայման խոր տպավորություն թողուցած ըլլալու է: Գտնվեցա՞ն համաժողովի անդամներ, որ արտահայտվին:

— Այո, գերման ծանոթ պատմագետ Կասդել այն կարծիքը հայտնեց, թե արևմտյան մտածումի համար անըմբռնելի է, թե այս կշռույթով և այս ոճով կրոնական երգ գոյություն կրնա ունեցած ըլլալ Արևելյան Եկեղեցիին մեջ, ան ալ՝ 12-րդ դարուն:

Արտահայտվեցա՞վ նաև Հայաստանի Պատմագիտական համալսարանի վարիչ պրոֆ. Սուրեն Երեմյան, շեշտելով այն պարագան, թե իմ ուսումնասիրական մեթոդս բոլորովին նույնն է, ինչ որ Հայաստանի գիտնականներունը, այսինքն մեր մշակույթի պատմությունը քննել նոր լույսի տակ, արժեքավոր ժողովրդական ստեղծագործությունը իր բոլոր կողմերով: Ուրիշ շատեր մանրամասնություններ ուղեցին մեր ժողովրդական ու եկեղեցական երգերու, ինչպես նաև Շնորհալիի ապրած շրջանի Հայ Եկեղեցիի ունեցած վարչական և ծխական վիճակի մասին:

— Խոսեցա՞ք Ոսկեգարու մասին ալ:

— Այն շափով, որչափով որ կապ ունենի մեջ նյութին:

Շեշտեցի այն պարագան, թե Շնորհալիի բրած բարենորոգումները իրենց խորքին մեջ միևնույն մտահոգությունները ունենին, ինչ որ ունենին Ոսկեգարու գրական ու ազգային շարժումները, այսինքն Հայ Եկեղեցիի միջոցով ազգայնացնել հայ մշակույթը և անոր տալ ազգային դիմագիծ: Նորահաստատ Հայ Եկեղեցին, ամբողջ դար մը, չունենի իր ազգային արարողությունը կամ ծեսը:

Պարսկական տիրապետության տակ գտնվող մասին մեջ անոնք կկատարվեին ասորերեն, իսկ բյուզանդական մասին մեջ՝ հունարեն: Այս անրնական երևույթը ժամանակի հայ առաջավոր և ղեկավար դասերու մեծագույն մտահոգությունը եղած է երկու տարրեր պատճառներով, նախ՝ որ օտար լեզուներով եղած արարողությունները անհասկանալի էին ժողովուրդին, որուն հետևանքով այս վերջինը չէր կապվեր նոր կրոնքին, և երկրորդ՝ օտար ազդեցությունները կշարունակեին տիրական ըլլալ հայ միտքին վրա:

Ուրիշ խոսքով՝ խնդիրը կենդանար կրկնակ երեսներով՝ կրոնական և քաղաքական: Եվ այդ է պատճառը, որ ժամանակի Հայ Եկեղեցիի դուխը՝ Սահակ Պարթև և պետության ներկայացուցիչ՝ Վռամյապուհ թագավոր միասնաբար և միևնույն նախաձեռնողությամբ կձեռնարկեն Եկեղեցիի պայծառացման գործին, ստեղծելով հայ գիրերը, թարգմանելով Աստվածաշունչը և հայերենի փոխելով եկեղեցական երգերն ու աղոթքները: Այդ միևնույն մտահոգությունները ունենին նաև 12-րդ դարու մեր ղեկավարները, Թարգմանիչները Հունաստան և Հայաստան բերած էին հունական արվեստին շունչը, իսկ Եղեմիային ալ՝ ասորական, իսկ երկրին մեջ ալ կտիրեր պարսկական ազդեցությունը:

Այս օտար ազդեցությունները, միացած երրալականին, որուն ենթարկված էր Հայ Եկեղեցիին սկզբնական շրջանի երաժշտությունը, ինչպես բոլոր նախնական եկեղեցիները, Հայ Եկեղեցիին տված էին բոլորովին անհարազատ երաժշտություն մը, որ մերթ հունական էր, մերթ ասորական կամ պարսկական, բայց երբեք՝ հայկական:

Սակայն Եկեղեցիին դուրս կար ժողովրդական երգը, որ ժողովուրդը իր ճաշակով կստեղծեր ու կերգեր և որ զուտ հայկական էր իր ուրիշով, ձայնաշարերով, որ ազգային էր: Ահա այդ տարրերն էին, որ Շնորհալին օգտագործեց իր նոր երգերուն մեջ, անոնց տալով բոլորովին նոր ոճ և ճաշակ, և որ պիտի նպաստեր Հայ Եկեղեցիին ազգայնացման գործին:

— Ձե՞ք խորհիր ձեր այս խիստ հետաքրքրական դասախոսությունը գրքույկի մը մեջ ամփոփել:

— Ուրիշներ ալ այդ խորհուրդը տվին ինձի: Պիտի ջանամ քիչ մըն ալ ընդարձակելով տպագրության հանձնել, եթե պայմանները նպաստեն:

Իմ մասին, ես ալ առավելապես օգտված, հրաժեշտ կառնեմ երաժշտագետ բարեկամես և շնորհակալ կըլլամ իրեն՝ իր թանկագին ժամերեն հատ մը խլած ըլլալու համար:

Դոկտ. Լ. ՀԱՄԱՐԱՋՈՒՄՅԱՆ

(Կոստանդնուպոլիս, «ԺԱՄԱՆԱԿ» օրաթերթ, 22 սեպտեմբերի 1954 թ.)

ԱՐԳԵՆՏԻՆԱՆՍԻ ՆԱՄԱԿԱՆԻ

ՐՈՒԽԵՆՈՍ-ԱՅՐԵՍ.— Նախկին տարիների նման այս հոկտեմբերի 10-ին էլ Բուենոս-Այրեսում, ռազմական կեղծության սրահում պանծացվեց Հայ մշակույթի տոնը, որին նախաձեռնել էր Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Երիտասարդաց կազմակերպությունը և հովանավորում էր Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Սիոն եպիսկոպոս Մանուկյանը։ Մեր ժողովրդի դարավոր լուսափայլ մշակույթը գնահատող և հարգող հայրենասեր հոծ բազմությունը լցվել էր սրահը, Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգեբարձության կենտրոնական վարչության ժրաշնչ քարտուղար պարոն Լևոն Տեր Ավետիսյանը կարողաց բացման խոսքը՝ կարճ ու կուտ և վարեց հայտադիրը, Գեղարկեստական բաժնին հայրենաշունչ գեղեցիկ երգերով մասնակցում են Վոլոդյա Երզնախումբն ու Վերտիքս վարդանանքը։ Հայրենական լավորակ արտասանություններով ծափերի են արժանանում օրիորդ Անահիտ Օլմեսեկյանը և պարոն Գ. Նահապետյանը։ Անեման Սիլվիա Շիրակյանը պանծացնում է սովետահայ բանաստեղծների հայ մշակույթին և լեզվին ձոնված ընտանի ստեղծագործությունները։ Օրիորդ Սուզան Հյուսիսանոսյանը՝ ամսունքի արվեստագետ, սպանական մեկնությամբ ապրեցնում է հոգեշնորհ Հ. վարդապետ Մուշյանի ռեպրիզի։ Օրիորդ Ալիս Միսիթարյանը դրավոր խնամված մի ճառով նոր սերնդի հարգանքն է բերում հայ մշակույթին։ Նոր դպրապետ պարոն Վահան Գալֆայանը մի խորհմաստ բանախոսությամբ տվեց հայ գրերի գլուխ պատմությունը և խոսելով ազգապահպանման մասին՝ շինիլ թելադրություններ արեց ծնողաց և երիտասարդներին, որպեսզի ուշադիր լինեն և սիրեն հայ մշակույթն ու ծաղկուն Հայրենիքը։

Պարոն Գալֆայանի մասին նախկին մի թղթակցությամբ համեստ մի ծանոթություն տվել եմ, նրա այս առաջին հրապարակային բանախոսությունը, այն էլ հայ մշակույթի նման կարևոր նյութի շուրջը, ունենդի հասարակության վրա ձգել է լավ տպավորություն։ Գիտակից ժողովուրդը սիրում և քաջալերում է այն տաղանդավորներին և գնահատում այն պաշտոնյաներին, որոնց սրտում հայրենասիրական ջերմ զգացումների հուրն է վառվում։ Ամենից վերջ բանախոսեց գերաշնորհ Սիոն եպիսկոպոս Մանուկյանը, որն իրեն հատուկ պերճախոսությամբ պանծացրեց հայ մշակույթն ու Սուրբ Թարգմանչաց հիշատակը։

ՀԱՅԱՍՏԱՆԱՅԱՑՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԻԿՆԵՆՑ ՀԱՆԴԵՍԸ.— Հայաստանյայց Առաքելական եկեղեցասեր տիկնանց միությունը կատարեց մի գեղեցիկ հանդես հոկտեմբեր 23-ի շաբաթ դիշեր, Հանդեսը բաղկանում էր երկու մասից — ներկայացում և ընտանեկան պար։ Թատերական բաժնում պարոն Հ. Կոշկարյանի ղեկավարությամբ բեմադրվեց մի ողբերգություն՝ «Մարի Մատլեն», երեք արարնոց, հեղինակություն Ժ. Արիստակյանի։ Սիրող դերակատարները ճիգ չէին խնայել նպաստելու համար բեմադրության հաջողության, եվ պիտի ասել, թե նրանք հաջող էին, ժողովուրդը գոհ մնաց։ Արժե հիշել նրանց անունները և շնորհավորել իրենց ծառայության համար։ Մարթայի դերում՝ տիկին Ժանետ Կոշկարյան, Ալեք՝ պարոն Պոլո Բանդեյ (հույն և մաքուր հայախոս), Վերթին՝ օրիորդ Ա. Թորոսյան, Մարի Մատլեն՝ տիկին Լուսին Ապուհայան (խաղի հերոսուհին), Վելլի Ստաուն՝ պարոն Հ. Գունտաքճյան, Սամվել՝ պարոն Կոշկարյան, Պատրիկ՝ վարդգես Արքունի, Հուշարար՝ տիկին Մանուշակ Սիմոնյան և բեմավար՝ տիկին Անթառամ Ահարոնյան։

Ընտանեկան պարն սկսելի առաջ սրբազան հայրը գնահատեց եկեղեցասեր տիկնանց միությունն ու անդամուհիներին, որոնք նոր ուժեր լինելով կարող են օգտակար լինել հայկական ձեռնարկներին իրենց գնահատելի մասնակցություններով։ Մայրաքաղաքիս երկու նշանավոր օրկեստրների նվագաժողովմամբ ընտանեկան պարը տևեց կես դիշերն անց։ Բուֆետին սպասարկում էին Տիկնանց միության անդամուհիները։ Հանդեսը արդյունավոր էր նաև նյութական հասույթովն ի նպաստ եկեղեցիին։

ՄԱՍԻՍԻԱ ԱՄՍԱԳՐԻ ՀԱՆԴԵՍԸ.— Ավելի ճիշտ կլինի ասել՝ օրիորդ Մերի Ծորճարյանի նվագահանդեսը ի նպաստ ռեպարտմանկական ամսաթերթին։ Մասիսյանը մի քանի տարի է հրատարակվում Հայաստանյայց եկեղեցվո կենտրոնական վարչության հովանավորությամբ՝ հայ մանուկների ու պատանիների համար։ Այն օրից, որ կենտրոնական վարչությունը մի խնջից կարգադրությամբ խմբագրությունը հանձնել է հոգեշնորհ Հարություն վարդապետ Մուշյանին, ամսաթերթը դարձել է սիրուն, գեղեցիկ և իմաստալից հրատարակություն։ Նա շատ է սիրվել նոր սերնդի կողմից։ Բազմացել են ընթերցողները և աճել է աշխատակիցների թիվը հատկապես դպրոցական աշակերտների շարքերում, որոնց լավ հայե-

րեն շարադրությունները լույս են տեսնում ամսագրում: Օրիորդ Մերի Ճորճալյանը Արգենտինահայ նոր սերնդից ընտիր և փայլուն ապագայով մի փիանիստ է: Նրա անցյալ տարվա կոնցերտը հմայել էր ժողովրդին: Հոկտեմբերի 30-ի նվագահանդեսը ավելի խորացրեց մեր հավատը, թե դաշնակարուհի Ճորճալյանը սկսել է հաղթական քայլով բարձրանալ նվագի նրբին արվեստի աստիճաններից դեպի վեր, դեպի կատարելություն տանող հանգրվան: Երիտասարդ փիանիստի մոտ ընդգծելի առաքինությունն այն է, որ նա սիրում է հայ երգը, նվագն ու մշակույթը և անշահախնդրաբար ու նվիրվածորեն ծառայում է նրանց:

Հանդեսն սկսում է հայտարարված ժամին: Հայկական նվագը սիրող ընտրանի բազմությունը լռիկ-մնջիկ հետևում է ածուներին և հիանում է ճկուն մատների հպումներից հոսող եղանակների վրա՝ Բարիտուդարյանի ղեկավարքը, Սպենդիարյանի «Հիշագիծն», «Ղայթարման», Խաչատրյանի «Գայանե» բալետից «Օրորքը», «Երիտասարդների պարը», «Էնգելիկան», «Ապարտակը» և այլն:

Սքանչելի ռացման խոսքում խմբագրության անունից պարոն Ն. Մսրյանը գրավոր ճառով «Մասիս» լրտ տարվա պատմականն է անում՝ հրավիրելով հասարակությանը օժանդակել նրա անխափան հրատարակմանը, զնահատում է հայր Հ. վարդապետ Մուշլյանի խմբագրական կարողությունն և հատուկ հոգածությունը դեպի նոր սերունդը:

Օրիորդ Ա. Մխիթարյանը նույնպիսի զգացումներ է հայտնում սպաներեն լեզվով Պարոն Մ. Ֆ. Տել Գարրիլ, օրիորդ Մ. Ճորճալյանի նվագի պրոֆեսորը դասախոսում է «Հայ երգը» նյութին շուրջ: Հարգելի պրոֆեսորը մեծապես գնահատելով հայ երաժշտությունը, հուշակավոր երգահանների շարքում հիշատակում և խոնարհվում է Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների առաջ, որոնք հայտարարում է, թե հայկական են և միշտ զգայնորեն անմահ:

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԿՐՈՆԻՑ ՏՆՕՐԵՆԸ Ս. ԼՈՒՍԱՎՈՐԻՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ. — Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կրոնական վարչության հրավերով, հոկտեմբերի 31-ի կիրակի առավոտյան Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցին այցելեց Արգենտինայի կառավարության

կրոնական գործերի ընդհանուր տնօրեն դոկտ. Լեոնարդո է. Բենիտես դե Ալմադան, որի ներկայությամբ կատարվեց հատուկ սուրբ պատարագ «Կոմիտաս» երգչախմբի մասնակցությամբ: Սիոն եպիսկոպոս Մանուկյանը խոսեցավ մի կուտ քարոզ, հայ ժողովրդի երախտիքն հայտնեց Արգենտինայի հոգատար կառավարության, օրհնեց Վսեմաշուք Նախագահ Խ. Տ. Փերոնին, պետական պաշտոններին ու ժողովրդին: Հավատ պատարագի հարգելի հյուրը՝ սրբազան Հոր, հայր Հարությունյանի, ատենապետ պարոն Ա. Պերկամալիի, զանազան պարոն Գ. Սարաֆյանի և այլ վարչականների ընկերակցությամբ անցավ առաջնորդարան, ուր տեղի ունեցավ սիրալիր խոսակցություն:

ՀԱՅՐԵՆԻՎԻ ՏՈՆԸ. — Հայ ժողովրդի ազատագրության տարեդարձի փառահեղ տոնը կատարելու համար նախապատրաստական աշխատանքի սկսել են հայրենասեր երիտասարդական կազմակերպությունները: Մեր տղաքն ասում են՝ այս տարի պիտի գերազանցի նախկինները: Նրանք ասում են և կանեն լավագույնը, որովհետև վստահ դիտեն, թե ժողովուրդն ամեն նոյեմբերի 29-ին բուռն խանդավառություն է զգում դեպի առաջադեմ և լուսավայթառ Մայր Հայրենիք՝ Սովետական Հասարակություն:

ԵՐԳՉՈՒՂԻ ԶԱՐՈՒՂԻ ԴՈՒՈՒՄԱՆՅԱՆ. — Համաձայն Արգենտինա-ՍՍՍՐ ինտերտոտի հավաստիացումներին, այս ամսին Բուենոս Այրես ժամանելու է Սովետահայ անվանի երգչուհի Զարուհի Դուրյանյանը: Մեր հայրենասեր զաղութը ողևորությամբ է իմացել այս ուրախառիթ լուրը և ծրագրում է արժանավայել ընդունելություն անել նրան:

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԻՆ ՄԵՋ. — Սիոն եպիսկոպոս Մանուկյանի այս դիրքը լույս է ընծայել Հայաստանյայց Եկեղեցվո Երիտասարդական կազմակերպությունը, Պատկերազարդ, մաքուր թուղթ և գեղեցիկ տպագրություն: «Հայրենի երկրին մեջ» գրքում իր խանդավառ տպավորությունը կհայտնե հարգելի և սիրված առաջնորդը, որը ուղևորություն կատարեց վերջերս ի Մայր Հայաստան և Սուրբ Էջմիածին:

ՔՂՊԱԿԻՑ

(Նյու-Յորք, «ԲԱՐՔԵՐ» Երկօրյա թերթ, 20 նոյեմբերի 1954 թ., № 56)



Ց Ա Ն Կ

«ԷԶՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1954 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

I. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ Կոնգրակը՝ 1954 թվականի սեպտեմբերի 28-ին, Վաշազա Ս. Խաչի տոնին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծահարգանքներով և պատերազմով մատից, IV՝ 4:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ Կոնգրակը՝ տիար Երվանդ Հյուսիսյանին Ս. Լուսավորչի առաջին կարգի աշխատանքային շխառն շնորհելու մատից, VII՝ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ճեղքող Մայր Հայրենիքի և Սփյուռքի բնակիչ՝ Արարիկյան Մեհակի օրհնությամբ մատից, IV՝ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորական ճեղքողը ամենապատիվ կրկնապատիվ միտադարձությամբ՝ աստվածաբանության դոկտորի աստիճան ստացալու առիթով Ս. Երանյանին մատից, IV՝ 18:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորականը՝ 1954 թվականի սեպտեմբերի 28-ին, Վաշազա Ս. Խաչի տոնին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծահարգանքներով և պատերազմով մատից, IV՝ 8:

Ամենայն Ս. Մենդյան տանիքի առթիվ Ամենայն Հայոց Արքայեպիսկոպոս Նորին Ս. Օհանյան Ս. Ս. Գեորգ Զ. ի անունով բնակիչից ստացված շնորհավորական ճեղքողներն ու գրությունները, I՝ 4:

Ամենայն Ս. Մենդյան տանիքի առթիվ Ամենայն Հայոց Արքայեպիսկոպոս Նորին Ս. Օհանյան Ս. Ս. Գեորգ Զ. ի անունով բնակիչից ստացված շնորհավորական ճեղքողներն ու գրությունները, IV՝ 10:

բյուր Ս. Ս. Գեորգ Զ. ի անունով բնակիչից ստացված շնորհավորական ճեղքողներն ու գրությունները, I՝ 8:

Ամենայն Ս. Մենդյան տանիքի առթիվ Ամենայն Հայոց Արքայեպիսկոպոս Նորին Ս. Օհանյան Ս. Ս. Գեորգ Զ. ի շնորհավորական ճեղքողները բնակիչից ստացված շնորհավորական ճեղքողներն ու գրությունները, I՝ 3:

Հայաստանում սովորող և աշխատող կարգի ճեղքողներն ու գրությունները, I՝ 34-րդ տարեգրքի առթիվ Գեորգյան Հոգևոր Խորհրդի շնորհավորական ճեղքողները՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեպուբլիկայի Գեորգյան Սովետի Նախագահության և Նախագահ Ե. Առաքելյանին, Հայկական Սովետական Ռեպուբլիկայի Միջխորհրդային Սովետի Նախագահ Ա. Պապիկյանին, XI՝ 3:

Քրիստոսի հաղթանակ Ս. Հարություն տանիքի առթիվ Ամենայն Հայոց Արքայեպիսկոպոս Նորին Ս. Օհանյան Ս. Ս. Գեորգ Զ. ի անունով բնակիչից ստացված շնորհավորական ճեղքողներն ու գրությունները, IV՝ 10:

Քրիստոսի հաղթանակ Ս. Հարություն տանիքի առթիվ Ամենայն Հայոց Արքայեպիսկոպոս Նորին Ս. Օհանյան Ս. Ս. Գեորգ Զ. ի անունով բնակիչից ստացված շնորհավորական ճեղքողներն ու գրությունները, IV՝ 18:

II. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՐՈՒՄՆ ԳԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕՍՈՒԹՅՈՒՆ Ս. Ս. ԳԵՈՐԳ Զ. ԵՐԶԱՆԿԱԶԻՇԱՆԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԵՑՈՒԹՅԱՄՔ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

ԱՐԱՊԱՆԱՅՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՍ՝ Հրաժեշտի խոսք Վեհապետ Հայրապետին, VI՝ 43:

ԱՌԵՑՈՒՆԱՅՆ ՓԱՅԼԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ՝ Վերջին հաճողությամբ, V՝ 41:

ԱՋԱՊԱՆԱՅՆ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳՈՍ՝ Հայ եկեղեցական տուրք, VI՝ 41:

ԲՈՐՈՑԱՆԱՅՆ Ֆ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ. ի մահվան առթիվ, VII—VIII՝ 31:

ԳԱՆՔԱՆԱՅՆ ՄԱՐԿԱՎԱԳՈՍ՝ Հայ ժողովուրդի մեծ կոթող, VI՝ 47:

ԴԻՄԻՏՐԻ ԵՎԻՍԿԱՎԱԳՈՍ՝ Վրաց Ռադափառ եկեղեցու վշտակցություն, VI՝ 45:

ԿՈՍՏԱՆԱՅՆ ՎԱՀԱՆ ԱՐԿԱՎԱԳՈՍ՝ Հայ եկեղեցու և հայ հայտաբան ժողովուրդի մեծ կոթող, VI՝ 39:

ՄԱՆՈՒԿԱՆԱՅՆ ՍԻՆԱ ԵՎԻՍԿԱՎԱԳՈՍ՝ Ոչ և է Հայոց մեծագույն Հայրապետ, VI՝ 48:

ՄԱՐԿԱՎԱԳՈՍ ԲՈՒՐՆԱՅՆ ՍԱՐԿԱՎԱԳ՝ Մայր Աթոռ Վրացի մեծ է, V՝ 38:

ՍԱՐԿԱՎԱԳՆ Հ՝ Վերջին հաճողի մի քանի խոսք հանգույցայ Հայրապետին, VII—VIII՝ 33:

ՊԱՆԱՅՆ ՎԱՀԱՆ ԵՎԻՍԿԱՎԱԳՈՍ՝ Հայ եկեղեցական ժողովուրդի կոթող, VI՝ 43:

ՊԵՏՐՈՍ ԱՐԿԱՎԱԳՈՍ՝ Ռադ Ռադափառ եկեղեցու վշտակցություն, VI՝ 44:

ՏԵՐ-ՀՈՎԱՀԱՆԱՅՆ ՍԱՐԿԱՎԱԳՈՍ՝ Հաճողի տանիքի Հովվապետին, VI՝ 42:

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԱՅՆ ՄԱՐԿԱՎԱԳՈՍ՝ Ազգային սգում հեծ Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետի աղաքականության կոթող, V՝ 38:

ՓՈՒՆԱՅՆ ԳԵՐՆԱԿ ԵՎԻՍԿԱՎԱԳՈՍ՝ Հովիտեպետական հանգիստ Վեհապետ Հայրապետին, VI՝ 51:

Ամենայն Հայոց հաղթանակի Հայրապետ Նորին Ս. Օհանյան Ս. Ս. Գեորգ Զ. Հայրապետի զոհեպետական մահվան առթիվ Գեորգյան Հոգևոր Խորհրդի անունով ստացված ցավակցական ճեղքողներն ու գրությունները, V՝ 16, VI՝ 7:

Ամենայն Հայոց հաղթանակի Հայրապետ Նորին Ս. Օհանյան Ս. Ս. Գեորգ Զ. Հայրապետի հիվանդության առթիվ Գեորգյան Հոգևոր Խորհրդի անունով ստացված ցավակցական ճեղքողներն ու գրությունները, V՝ 7:

Ամենայն Հայոց երջանկանքիշատակ Կաթողիկոս Նորին Ս. Ոծուրյուն Յ. Տ. Գեորգ Ա. ի ճշգրտակալութւոյն յայնչեմ թաղումը, VI' 25:

Արձանագրութիւն Գեորգույն Հոգեւոր Խորհրդի և Եպիսկոպոսական համառոտ ժողովի, VI' 52:

Գեորգույն Հոգեւոր Խորհրդի կողմէ Մայր Հայրենիքի և Սփյուռքի հաճատեցյալ հայ ժողովուրդին, VI' 56:

Գեորգույն Հոգեւոր Խորհրդի շրջաբերական հեռագիրը՝ Ամենայն Հայոց Մայրաքաղաքին Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Ոծուրյուն Յ. Տ. Գեորգ Ա. ի հիվանդութեան մասին, V' 8:

Եղեակագրութիւն Ամենայն Հայոց Մայրաքաղաքին Պատրիարք և Կաթողիկոս Յ. Տ. Գեորգ Ա. ի հիվանդութեան և մահվան մասին, V' 11:

Հաղորդագրութիւն Ամենայն Հայոց Մայրաքաղաքին Պատրիարք և Կաթողիկոս Յ. Տ. Գեորգ Ա. ի առողջութեան վիճակի մասին, V' 4:

Հայ հաճատեցյալ ժողովուրդը ոգրում է հրահանգներ Գեորգ Ա. Կաթողիկոսի մահը, VII—VIII' 51:

Հանգիստ Ամենայն Հայոց Մայրաքաղաքին Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Ոծուրյուն Յ. Տ. Գեորգ Ա. ի, V' 8:

III. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ամանորի և Ս. Մենայն քաղաքացիութենէն, I' 12:

Ամենայն Հայոց իմաստուն Հայրապետը, VI' 3:

Գեորգույն Յ. Մամբրե արքեպիսկոպոս Գափայանի քանոնադրութեան հրահանգով, XI' 8:

Գեորգույն Յ. Տիրան արքեպիսկոպոս Ներսիսեանի հայտարարութեան մասին, III' 8:

Համագրութիւն մեծ սուգը, VII—VIII' 3:

Հայաստանայոց Առաքելական եկեղեցու և հայրենի պետութեան փոխհարաբերութիւնները, III' 5:

Ձեռագրութիւն շնորհարարութիւն Մայր Աթոռում, IX' 3:

Մեր քաղաքացիական վարդապետները, X' 3:

Միջառնակ Լաւրաճկյան, XII' 3:

Սրբալոյս մեծնի օրհնութիւնը Ս. Էջմիածնում, IV' 19:

Վարդապետը խորհուրդը, II' 3:

Փառապանք տառեգութեան, XI' 4:

IV. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԲՂԹԱԿԻՑ. Գրական-գեղարվեստական հանդես Ս. Էջմիածնում՝ ճշգրտութեամբ Սրբոց Վարդանանց տնային հիշատակներ, II' 15:

ՃԻՄԱՐԱՆԱՍԵՐ. Սրբոց Թաղապետաց տներ Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանում, X' 46:

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ. Հայ եկեղեցիներ և Ամենայն Հայոց Հայրապետութիւնը Սովետական երկրի մէջ, I' 15: Սուրբ Էջմիածնի միաբանութեամբ

բայնը ունեւորացի չորս հրաշապետ և զարգացած հոգեւորականներով, IX' 12:

ՓՈՂԱՏՏԱՆ ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Անտոնաշի ճիշտակներ, I' 24:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ (Սրբոց Մայր Աթոռից), I' 44, II' 13, III' 27, IV' 25, V' 44, VI' 58, VII—VIII' 35, X' 44, XI' 56, XII' 46:

V. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԿՐՈՆԱՆԱՆ ՎԱՀԱՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ. Պարագ (Խոստով 1954 թվականի անդամներ 12-ին Մայր Ցանաւում, չորս արքեպիսկոպոս Կանոնադրութեան կապակցութեամբ), IX' 10:

ՎԱԹՏԱՆ ԳԵՐՈՒՄ Մ. ՎՐԴ. Հաղորդում խորհուրդը, IV' 28:

ՏԵՐ-ՇՈՎԱՆԵՆԻՍԱՆ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Ազաշխատութիւն, III' 15:

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ. Տեսակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական տեղապետ ան-

ճաղապետի Յ. Կաթողիկոսական Ազապետութեան հետ, VII—VIII' 26:

ՓՈՂԱՏՏԱՆ ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Մարդաբանական և Սուրբ Մենայն, II' 11: Մայր Աթոռ և տեղապետութեամբ Գեորգույն (խմբագրական «ՀԱՍԿ»-ի), II' 6:

Ամենայն Հայոց Հայրապետը (խմբագրական «ՀԱՍԿ»-ի), IX' 6:

Առաքելութեան մը քաղաքները (խմբագրական «ՀԱՍԿ»-ի), III' 11:

VI. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԱՆԱՄԱՆ Ա. Գ. (ՊՐՈՑ. ԳՐԿ.) Վարդան Կաթողիկոս չափաւոր տաճար, IX' 27, X' 29:

ՅԵՐԿԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ Երանապետութեան տարիք, I' 32:

ԱՆԱՐԱՆԱՆ Հ. (ՊՐՈՑ.) Մեծագոյն Մաշտոց, XI' 22, XII' 27:

ԳԵՐՈՒՄԱՆ ՊԱՐՏԻՎ ԱՐՁԱՆ. Հովանի արքեպիսկոպոս Արդարութեան և հայ տաղաւորութեան գործը Ռուսաստանում 18-րդ դարում, IX' 45, XI' 45, XII' 39:

ԵՂԱՐԱՆԱՐԱՆ Հ. Հաղորդում վաճիւր և հրա վիճակի տեսնագրութիւններ, IX' 32, X' 38, XI' 31:

ԵՐԵՐԱՆ Ա. Երաժշտական Գրիգոր քանոն Գրգիկ, IX' 42: Երաժշտական Սովետական վարդապետ, XI' 43: 184 տարեկան պատմական մի կարեւոր հրապարակ, IV' 37:

ԵՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ— Լուսնի տեսնելի շարժումը, XII' 35:— Վերադարձ շրջան, I' 27:
ՍԱՐԳՍԵԱՆ Գ.— Մաղաքավանք, II' 22, III' 14, IV' 30, V' 46:

VII. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԹԱՆԱՍՏԱՆ ՂԵՎՈՆԴ ԱՎԱԳ ԶԱՀԱՆԱ— Իմ հանգիստը Միֆայիկ նախաճաշի հետ Երևանում, XII' 18:
ԱՐԱՄԵԱՆ Հ— Վեճափառ, VII—VIII' 27:
ԳԱԼԱՄԳԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ— Էջմի Վեճափառ Հայրապետի անցյալից, III' 28:
ԳՈՂԱՆՃՑԱՆ Ե— Եղիշի արհայիսկոպոս Դուրյան, XI' 37:
ՀԱՀԱՆ—ՍԻՄՈՆ— Կոմիտաս վաղապետ, X' 25:
ՍԱՐԳՍԵԱՆ Մ. Գ.— Միֆայիկ նախաճաշի, XII' 6:

VIII. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԱՄԵԱՆ Հ— Հայահեղափոխության անկողնակալներ, III' 33:
ՀՈՂԱՆՃՑԱՆ Գ.— Ժողովրդի ընտանյալները, III' 32:— Հեղկաստանի կուլտուրայի և արվեստի զարթոնքի պատվիրակությունը Երևանում, X' 48:
ԱՐՃԵՐԱՎՈՐ ՆԵԿԱՆԵՐԻ ՆՎԻՐԱՄՈՒՄԵՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ Հայաստանի Պատկերասրահներ, V' 53:
ԱՐՃԵՐԱՎՈՐ ՆՎԵՐ Հայկական ՍՍԴ Գիտությունների ակադեմիայի Պատկերասրահներ, IX' 56:
ԱՐՃԵՐԱՎՈՐ ՆՎԵՐ Հայաստան ժամանակի պատկերասրահները վերադարձում, VI' 52:
Հայ Եկեղեցու արտասահմանյան զարթոնքները Սովետական Հայաստանում, VII—VIII' 22:
Միֆայիկ նախաճաշի ձեռնարկը 125-ամյա հոբելյանը, XII' 20:
ՀԱՄԱՐՈՒՄ ԼՈՒՐԵՐ ՈՐՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ, I' 48, II' 51, III' 45, IV' 41, V' 57, VII—VIII' 45, IX' 57, X' 53, XI' 52, XII' 47:

IX. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՃՆՐԻՃՑԱՆ ԳՆԵԼ Ռ. ՎՐԻ— Երկիրն Կաթողիկոսության պատվիրակության ուղևորությունը զեպի Հայաստան՝ Երևանում, S. S. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Հայրապետի օժանդակ և քաղման մասնակցելու, IX' 19, XI' 13:
ՊԱՆՃՑԱՆ ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՓՈՍ— Բուլղարական պաշտոնը պաշտոն, XII' 50:
ՍԻՄՈՆԵԱՆ ՍԻՄՈՆ— Ձեկույց Երանաշուն S. Գառնիկ Հայրապետի ձեռնգրությունում մասնակցելու, I' 51:
ՓՈԼԱՍՏԱՆ ԳԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՓՈՍ— Ուղևորություն Ս. Էջմիածին, III' 48, IV' 45:
ԱՄԵՐԻԿԱՆԱՅ Կաթողիկոսական միությունը 17-րդ համաշխարհային, XI' 80:
ԱՐՃԵՐԱՎՈՐ ՆՎԵՐ Հայկական, XII' 58:
Բարձրագույն քանի վաղապետ ընտրությունը, IV' 57:
Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնակցելու ֆառաստանը Երևանում, V' 57:
Գեորգյան Հոգևոր Խորհուրդի խիղճը հանդարտ է, բեկ վիճար անդամակցելու, IX' 82:

ՍԵՄԵՆՈՎ Լ. (ՊՐՈՖ.)— Լուսնի տեսնելի շարժումը, XII' 35:— Վերադարձ շրջան, I' 27:
ՑԵՐ—ՍՑԵՓԱՆԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ— Շրջադարձային Հայոց ձորում, II' 35, III' 28:

Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետ S. S. Գեորգ Զ. Երևանյան Վեճափառ Կաթողիկոսի համառոտ կենսագրությունը, V' 12:
Երևանյան Վեճափառ S. S. Գեորգ Զ. Կաթողիկոսի կենսագրությունը, VII—VIII' 7, X' 8:
Հոգեշունքի եղիշի արհայիսկոպոս, IX' 17:
Հոգեշունքի Հայրիկ արհայիսկոպոս, IX' 18:
Հոգեշունքի Պարզի արհայիսկոպոս, IX' 15:
Հոգեշունքի Վառան արհայիսկոպոս, IX' 10:

ՄԱՐԻՆ ԼԵՆԱ— Տպագրություններ Սովետական Հայաստանի մասին, II' 47:
ՌՈՄԵՆ ՔԱՐՅԱՆ— Իմ համապարհաշխարհային զեպի Սովետական Միություն և իմ տպագրությունները Սովետական Հայաստանի մասին, II' 45:
ՇՊԵՐԱՆԻՍ Ժամանակի պատկերասրահները Հայաստանում, II' 44:
Լիբանանյան մտավորական Սիմոն Սիմոնյանի ելույթը, VII—VIII' 41:
Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան բեմի ստեղծողական տեղապահ Մամբրե արհայիսկոպոս Գալֆայանի ելույթը, VII—VIII' 38:
Ռուսական բեմի խոսքերի անդամ զեպի. Գեորգ Բարձրագույնի ելույթը, VII—VIII' 43:
Ռուսական բեմի արհայիսկոպոս Վազգենի ելույթը, VII—VIII' 39:
Յուրաքանչյուր զեպի Լեոն Մեդալի ելույթը, VII—VIII' 40:

Գեորգյան Մամբրե արհայիսկոպոս Գալֆայան Մարտիրոս մեջ, X' 59:
Գոկտ. Գր. Ուսման ժամանակի զեպի Ռուսական ժողովրդական Խնայությունիկայի Արհայիսկոպոսի թղթական լուսնային մասնակցելու մեջ, IV' 55:
Երևանյան համաշխարհային, V' 81:
Երևանյան Սոցիալական Պատկերասրահի զգալի մեջ հայտնությունը Ֆեդերիկ արհայիսկոպոսի միջազգային համաժողովին մեջ, XII' 56:
Երևանյան Սոցիալական Պատկերասրահի մեջ, II' 58:
Երևանյան համաշխարհային խորհուրդի ձեռնարկում և Սովետական մարզիկներին, III' 58:
Խորհրդային Սոցիալական Պատկերասրահի մեջ, II' 57:
Խորհրդային Սովետական մարզիկներ Գեորգ Զ. Հայրապետի մասնակցելու կարգի համաժողովում, I' 54:
Հոգեշունքի Երևանյան Վեճափառ Գեորգ Զ. Հայրապետի ֆառաստանի արհայիսկոպոս, X' 59:

Հոգեհանգիստ և հիշատակի հրեկո Ամենայն Հայոց
Հայրապետին վախճանման առթիվ, X' 58:

Հոգեհաշ Ղևոնդ Դուրյոն սրբազանի սպանության
20-րդ տարեկիցին առթիվ, IV' 58:

Մայր Հայրենիքն շահեկան վկայություններ կուտա
հոգեշնորհ Հայկազուն վարդապետ Արամեայան,
XI' 58:

Ցապենացի նկարչուհիի մը տպավորությունները Հա-
յաստանի մասին, III' 58:

Պատարագ և Բարոգ, IX' 62:

Հակարդայի ու Սուրարայի հայերը, II' 58:

Ռումեանայ քեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոսի
ելույթները Առֆիայի մեջ, X' 58:

Սիոն Եպիսկոպոս Մեծուկյանի վերադարձը էջմիածնեն,
IX' 61:

Սովետական հեղշունի Զառուի Դուրխանյան կենսայի
Փառիզի իր ունեցելիները, II' 57:

Տաբե'բ գիտ..., IX' 58:

Տեսակցություն մը Դամասկոսի Կարողիկոսական փո-
խանորդ Շավարշ վարդապետի հետ, II' 54:

Փարիզի հայ ուսանողական տունը, IV' 58:

Յրաճանաչ հրիտաօտաշներ Հայաստան կայացնեն,
XI' 58:

X. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու
համար՝ Միջազգային Ստալինյոն մեջանակներին
կոմիտեում, I' 22:

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի
դիվիզիոնի առաջին զենքի մասին, IV' 28:

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի դի-
մումը Եվրոպայի ժողովուրդներին, IV' 28:

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի դիմումը
աշխարհի ժողովուրդներին, XI' 9:

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեփայի
ընտանները, XI' 10:

Կոմիտեիկ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի
Բյուրոյի նիստի մասին, IV' 28:

XI. ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆՈՒՄ

ԱՅՆԹԱՐՑԱՆ ՓԱՅՂԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ.— Եղիշի Վա-
ղանց պատմությունը՝ գաղափարական և գե-
ղարվեստական արժանիքները, II' 18:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՋԱԳԱՆ.— Մեր վաճենքը, I' 48:
— Վաղվա ռըր, III' 31:

XII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՏԱՑԻԱՆՆԵՐ

Ա. Հ.— «Ավետարանի պատգամներ», Սիոն Եպիսկո-
պոս, X' 61:— Եղիշի Գառնեց, «Ընտիր երկեր»,
XI' 61:

ԱՅՆԹԱՐՑԱՆ ՓԱՅՂԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ.— «Մայր ցուցակ
հեռագրաց Սրբոց Հակոբյանց», Երկրորդ հատոր,
III' 61:

Բ.— Համառոտ ամփոփում պրոֆ. Ա. Գ. Արամեայ-
անի «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-

րուսական հարաբերությունների պատմությունից»
խորագրով ուսումնասիրության, VII—VIII' 61:

ԲԱՆԱՍԵՐ.— Հայ քառերական ժողովուրդի պատմու-
թյունից, I' 58:

ՄԱՐՑԻՐՈՍՅԱՆ ՌՈՒԹԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ.— Վաճեն-Վաճե-
յան, «Հաղալիզներու ճաշությունը», II' 58:

ՑԱՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԱՐՑԻՐՈՍ.— «Պատմություն Ան-
րեպի հայոց», IV' 58:

XIII. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Աղավնի Մեռողայան, VII—VIII' 58:

Հանգիստ արժանապատիվ Տ. Գեորգ Բանանա Մե-
լ

հանգի, III' 60:

Վաճաճ Թոշիկյան, VII—VIII' 58: